1086

791

25409



W 1086

X 8847
274

№ 1 ԳԵՂԱՐՒԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 1

ԿՆՈՒՏ ՀԱՄՍՈՒՆ

ՎԻԿՏՈՐԻԱ

ՄԻ ՍԻՐՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

2-կոչ 9 4677

Ազգային Գրադարան 1874 Ա.Ի.Ա.Ի.Ա.Ի.

ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Իւրաքանչիւր թարգմանութիւն, իսկապէս, բնագրի դեղեցկութեան որոշ մասը կորցնում է։ Սակաւ են այնպիսի թարգմանութիւնները, որոնք բնագրի բոլոր գրական արժանիքները պահում են։ Իսկ երբ թարգմանութիւնը կատարւում է մի ուրիշ թարգմանութիւնից, այն ժամանակ երկը աւելի մեծ չափով է արժանիքներ կորցնում։ Այս տեսակէտն ունենալով հանդերձ, ես սրանից երեք տարի առաջ լսելով ընկերոջս՝ Ա. Վ-ի խորհուրդը ռուսերէնից թարգմանեցի մեր երկուսիս էլ սիրած Կնուտ Համսունի դեղեցիկ «Վիկտորիան» որի բնագիրը ինչպէս ամենքին յայտնի է, նորվեգերէն է։ Ես ձեռնարկեցի այս թարգմանութիւնը հաւատալով՝ որ մենք հազիւ թէ նորվեգերէն իմացող թարգմանիչ ունենանք։ Թարգմանել եմ Մարիա Կռվալենսկիայի թարգմանութիւնից և յետոյ համեմատել իմ ես. Սիգալի թարգմանութեան հետ և մի քանի տեղ փոփոխել եմ համաձայն վերջինիս, որ աւելի յաջող թարգմանութիւն է։

Ս. Թ.

1912 թ. 3-ին փետրուարի,
Թիֆլիս.



ՎԻԿՏՈՐԻԱ

I

Քրաղացպանի որդին դնում էր և մտածում։ Նա միշտ զանազան մաքերով լի, արևից ու քամուց այրուած, տասնչորս ամեայ մի առողջ պատանի էր։

Երբ նա մեծանայ, կը զբաղուի լուցկի պատրաստելով։ Այդ բաւական հետաքրքիր ու վտանգաւոր կը լինի։ Նրա մատները ծծումբոտ կը լինին, և ոչոք չի համարձակուի նրան բռնել։ Ընկերները, նրա անախորժ արհեստի պատճառով, ղէպի նա մեծ յարգանք կզգան։

Անտառում նա թռչուններին էր դիտում։ Նա նրանց իր հինգ մատի պէս էր ճանաչում։ Գիտէր, թէ որտեղ են ապաստանած նրանց բները, հսկանում էր նրանց սուլոցները և պատասխանում էր նրանց զանազան ձայներով։

Նա յաճախ իր հօր չրաղացում մոմրից գընդակները էր շինում և զրանցով թռչուններին կը-րակրում։

Կածանի երկու կողմերով ընկած ծառերն ևս նրա լաւ ընկերներն էին։ Գարնանը նա այդ ծառերից խեժ էր հաւաքում, իսկ ձմեռը նրանց համար մի կատարեալ հայր էր։ Նա նրանց մաքրում էր ձիւնից, բարձրացնում էր ձեան ծանրութիւնից կոտրած ճիւղերը։

Նա սիրում էր նաև վաղուց գործածութիւնից ընկած գրանիտի քարահանքը։ Այնտեղ ոչ մի քար անծանօթ չէր նրան։ Նա քարերի վրայ տառեր ու նշաններ էր գծագրում, բարձրացնում էր քարերը և դասաւորում էր այնպէս, ինչպէս հօտն իր հովի շուրջն է հաւաքւում։ Հին քարահանքում երբեմն զարմանալի դէպքեր էին պատահում։

Նա թողեց ճանապարհը և իջաւ դէպի լիճը։ Անիւը պտտւում էր։ Նրան շրջապատեց չափազանց ծանր աղմուկը։ Նա վարժւել էր այդ տեղերում թափառել և ինքն իրան բարձր ձայնով խօսել։ Կարծես, փրփուրի իւրաքանչիւր կաթիլը իր պատիկ կեանքի մասին էր պատմում։ Ջուրը, որ ցած էր վիժում, ամբարտակի դռնների մօտ կազմում էր մի փայլուն ծածկոց, որ, կարծես, դիտմամբ չորացնելու համար էր փռւած։ Ջրվէժից ցած, լճի մէջ ձկներն էին ապրում։ Նա յաճախ էր կարթը ձեռքին կանգնում այդտեղ։

Երբ նա մեծանայ, ջրսուզ կը դառնայ։ Անպատճառ։ Նա այդ մասին ինչպէ՞ս էր երազում։ Այն ժամանակ նա շոգենաւի մայթից ծովը կը նայուի, կը տեսնի օտար երկիրներ ու պետութիւններ, ուր ճօճում են հրաշալի մեծ-մեծ առ-

տառներ։ Մարջանէ ամրոցը դանւում է հէնց ծովի յատակում, իսկ ամրոցի լուսամուտից արքայադուստրն էր նայում և հրապուրանքով նրան է կանչում. «Ներս եկ»։ Յանկարծ նա յետևից լսում է իր անունը։ Հայրը կանգնած կանչում է նրան. «Եօհան, ամրոցից քո յետևից մարդ են ուղարկել։ Դու պիտի պատանի տէրերին նաւակով կղզին տանես»։ Նա գնաց շտապով։ Մի նոր, մեծ արև ժպտաց Ջրաղացպանի որդուն։

Կալւածատիրոջ ագարակը ընկած էր կանաչի մէջ, որպէս մի փոքրիկ ամրոց, կամ հեքիաթական դղեակ՝ միայնութեան մէջ։ Տունը շինւած էր փայտից, սպիտակ ներկած։ Նրա կտուրն ու պատերը զարդարւած էին բազմաթիւ կիսաշրջանաձև պատուհաններով։ Իսկ երբ ագարակում հիւրեր էին լինում, կլոր աշտարակի վրայ դրօշակ էր ծածանում։ Ագարակի յետևի մասում, մի կողմը ծովածոցն էր ընկած, միւս կողմը՝ մի մեծ անտառ։ Հեռւում երևում էին գիւղացիների մի քանի մանրիկ խրճիթներ։ Եօհանը նաւահանգիստ եկաւ։ Երիտասարդները արդէն մակոյկի վրայ էին։ Եօհանը առաջ էլ ճանաչում էր նրանց։ Սրանք ամրոցատիրոջ զաւակներն էին և քաղաքից եկած նրանց ընկերները։ Բոլորն էլ բարձրակրունկ կօշիկներ էին հագել, որպէսզի, կղզուն մօտենալիս, ջրի միջով քայլէին։ Վիկտորիան մանրիկ հողաթափեր էր հագել։ Նա տասը տարեկան

էր, այնպէս որ, երբ կղզուն մօտենային, նրան ջրից՝ ձեռքերի վրայ բարձրացրած պիտի անցկացնէին։

«Կարող եմ քեզ անցկացնել»,—հարցրեց Եօհանը։

«Ես էլ կարող եմ»,—մէջ մտաւ Օտտօն, մի քաղաքացի, դրօշմի հաստակին հասած պատանի, որը և բարձրացրեց աղջկան իր ձեռքերի վրայ։ Եօհանը կանգնած նայում էր, թէ ինչպէս նրան հեռու ափը հասցրին, և լսեց Վիկտորիայի նրան յայտնած շնորհակալութիւնը։

Այն ժամանակ Օտտօն յետ դարձաւ և ասաց.

«Դէ, այժմ դու նաւակը պաշտպանիր, ինչպէ՞ս է անունդ»։

«Եօհան», պատասխանեց Վիկտորիան։ «Այո, նա նաւակը կը պահպանի»։

Նա մնաց մենակ։ Մի իւանները, զամբիւղները ձեռքերին, գնացին կղզին՝ Թռչունների ձուերը որոնելու։

Եօհանը կանգնած էր տեղում՝ մտքերի մէջ ընկղմած։ Նա էլ կը կամենար նրանց հետ գնալ, իսկ նաւակը կարելի է ուղղակի ափը հանել։

Ջափաղանց ծանր է։ Այնքան էլ ծանր չէ։ Նա բռունցքով նաւակին խփեց և նրան դէպի ափը մղեց։ Նա լսում էր հեռացողների կատակներն ու ծիծաղը։

Լաւ։ գնաք բարև առ այժմ։ Սակայն նրանք կարող էին նրան իրենց հետ վերցնել։ Նա կարող էր նրանց ցոյց տալ Թռչունների բները։ Նա գիտէ,

որտեղ են գտնւում այդ բները։ Նա նրանց կը տանէը լճակների հրաշալի ճեղքերը, ուր ապրում են կատուցները խոզամազով պատած, գիշատիչ Թռչուններ։ Նոյնիսկ նա մի անգամ կղզուն սպիտակ կզաքիս է տեսել։

Նա նաւակը շուռ տուեց և սկսեց դէպի ափը թիավարել։ Նա արդէն բաւական տարածութիւն էր անցել, երբ յանկարծ մի ձայն լսեց։

«Յետ դարձիր։ Դու վախեցնում ես Թռչուններին»։

«Ես կամենում էի ձեզ ցոյց տալ այն տեղը, ուր կզաքիս տեսայ»... ասաց նա հարցական եղանակով։ Նա մի քիչ սպասեց։

«Ապա մենք կարող էինք օձի բունը այրել։ Ես մօտս լուցկի ունեմ»։ Նա ոչ մի պատասխան չ'ստացաւ։ Այն ժամանակ նա նաւակը նորից յետ դարձրեց, դարձաւ նախկին տեղն ու նաւակը ափը դուրս քաշեց։

Երբ նա մեծանայ, սուլթանից մի կղզի կը գնի և ոչոքի չի թոյլ տալ կղզուն մօտենալ։ Թնդանօթներով զինուած շոգենաւը կը պաշտպանի նրա ափերը։ Յանկարծ կը գան վայրի սարուկներն ու կը յայտնեն.

«Ձերդ մեծութիւն, մի ինչ որ նաւակ է բարձրացել խութի վրայ, և նրա մէջ նստած երիտասարդ ճանապարհորդները խեղդւում են»։

«Թող ոչնչանան», պատասխանում է նա։

«Ձերդ մեծութիւն, նրանք օգնութիւն են հայցում։ Մենք դեռ կարող ենք նրանց փրկել։

Ներանց մէջ կայ և մի աղջիկ, սպիտակ հագնւած»։

«Աղատէլ նրանց»,—հրամայում է որոտապին ձայնով։ Եւ նա երկար տարինների յետոյ նորից տեսնում է ամրոցատիրոջ զաւակներին։ Վիկտորիան ծունկ է չոքում նրա առաջ և շնորհակալութիւն յայտնում իր փրկութեան համար։

«Ի՜նչ կայ շնորհակալութեան, ես միայն իմ պարտքը կատարեցի»—պատասխանում է նա։ «Աղա՛տ էք, գնացէք իմ երկրով, ուր որ կամենաք»։

Եւ նա հրամայում է ամրոցի դռները բանալ բոլորի առաջ և իր հիւրերին հիւրասիրում է ոսկեայ անօթներով։ Երեք հարիւր սև. տարուկներ ամբողջ գիշերը նրանց համար երգում էին ու պարում։ Երբ նրանք պատրաստւում էին վերադառնալ, Վիկտորիան չէր կամենում նրանց հետ գնալ։ Նա ծնկաչոք նրա առաջ է ընկնում ու հեկեկում, որովհետև սիրում է նրան։

«Թոյլ տուէք ինձ՝ ինալ այստեղ։ Դուրս մի՛ անէք ինձ, ձերդ մեծութիւն։ Ինձ ձեր տարկուհիներից մէկը դարձրէք...»

Սատիկ յուզմունքից նա սկսեց շփել իր ճակատը։ Նա դէպի կղզու խորքն է գնում յուզւած։ Այո՛, նա կ՛ազատէ ամրոցի երեխաներին։ Ո՞վ է իմանում, գուցէ նրանք հէնց այժմ կղզու վրայ մոլորւել են։ Գուցէ հէնց Վիկտորիան է արգելւել երկու ժայռի արանքին և չի կարողանում դուրս գալ։ Բաւական է, որ նա ձեռքը մեկնի, կ՛ազատէ նրան։

Երեխաները տարակուսանքով նայեցին, երբ սա մօտեցաւ նրանց։

Նա նաւակը բախտի յուսով է թողել։

«Դու պատասխանատու կը լինես իմ առաջ նաւակի համար», —ասաց Օտտօն։

«Ես ձեզ ցոյց կը տայի, թէ որտեղ է բուսնում վայրի մորին»,—ասաց Եօհանը հարցական եղանակով։

Լուսթիւն։

«Իսկապէս, որտե՞ղ է բուսնում»,—հարցրեց Վիկտորիան՝ խղելով լուսթիւնը։

«Մենք այժմ չենք կարող մորի որոնելով զբաղւել»,—շտապով մէջ ընկաւ քաղաքացի հիւրը։

«Ես գիտեմ նոյնպէս, թէ որտեղ կարելի է խեցիներ գտնել»,—ասաց Եօհանը։

Դարձեալ լուսթիւն։

«Իսկ նրանց մէջ մարգարիտ կա՞յ»,—հարցրեց Օտտօն։

«Ա՜խ, եթէ իսկապէս մարգարիտ լինէր»,—հառաչեց Վիկտորիան։

Եօհանը չը գիտէր այդ։ Նա գիտէր միայն, որ խեցիներն ընկած են ծովում, սպիտակ աւազի վրայ։ Եթէ նաւակով լողային հեռու, ծովի խորքերը, մարգարիտ գտնելու համար կարելի էր ջրի մէջ խորասուզւել։ Բայց այդ առաջարկութիւնը չընդունեցին, այլ միայն նրա վրայ ծիծաղեցին։

«Դու չափազանց սխալւում ես, որ կարծում ես, թէ ես ջրասոյզ եմ»,—այսպանեց նրան Օտտօն։

Եօհանի շնչառութիւնը ծանրանում էր։ Նա

ասաց. «Եթէ կամենում էք, ես կը բարձրանամ ծառի վրայ և մի մեծ քար կը նետեմ ծովը»։

«Ինչո՞ւ համար»

«Հէնց այնպէս։ Ոչնչի համար։ Դուք կը նայէիք»։

Սակայն այս առաջարկութիւնն էլ չ'ընդունեցաւ։ Եօհանը լռեց վրդովուած։ Նա դնաց կղզու միւս կողմը, միւսներից հեռու, թռչունի ձու որոնելու։ Երբ նրանք բոլորը նորից նաւակի մօտ հաւաքուեցին, Եօհանն աւելի շատ ձու էր հաւաքել, քան ինացած բոլորը։ Նա զգուշութեամբ տանում էր ձուերը գլխարկով։

«Ի՞նչպէս է պատահել, որ դու բոլորիցս շատ ես գտել»,—հարցրեց քաղաքացի երիտասարդը։

«Որովհետև ես գիտեմ, թէ որտեղ են գըտնւում ձուերը»,—պատասխանեց Եօհանը երջանկացած։

«Ես իմ ձուերը քոնի հետ կը խառնեմ, Վիկտորիա»։

«Կամ»,—ճչաց Օտտօն,—«ինչո՞ւ համար»։

Բոլորը նրան նայեցին։ Օտտօն ցոյց աւեց գլխարկը՝ ասելով.

«Ո՞վ կ'երաշխաւորէ ինձ, որ այդ մաքուր է»։

Եօհանը ոչինչ չ'ասաց։ Նրա ուրախ, երջանիկ տրամադրութիւնը վարկենաթէս ոչնչացաւ, և նա յետ գնաց դէպի կղզին՝ տանելով և իր ձուերը։

«Ի՞նչ պատահեց նրան։ Ո՞ւր է գնում նա»,—բացականչեց Օտտօն անհամբեր։

«Եօհան, ո՞ւր ես գնում»,—ճչաց Վիկտորիան և վազեց նրա յետևից։

Նա կանգնեց և հանդարտ պատասխանեց։

«Ես ձուերը նորից բների մէջ կը դնեմ»։

Ներանք կանգնած՝ լուռ իրար երեսի էին նայում։

«Իսկ ճաշից յետոյ ես կը գնամ քարահանքը»,—աւելացրեց Եօհանը։ Վիկտորիան ոչինչ չը պատասխանեց։

«Ես կարող էի քեզ քարանձաւը ցոյց տալ»։

«Այո, սակայն ես սաստիկ վախենում եմ։ Դու ասում էիր, որ այնտեղ շատ մութն է»։

Ընդհատած իր մեծ վշտին, Եօհանը ժպտաց ու արիաբար ասաց.

«Այո, բայց չէ որ ես քեզ հետ եմ»։

Նա միշտ խաղում էր հին քարահանքում։ Անցնորդները լսում էին, ինչպէս էր նա այնտեղ խաղում ու խօսում կատարեալ միայնութեան մէջ։ Երբեմն նա քահանայ էր դառնում և պատարագ մատուցանում։ Այդ տեղը վաղուց էր աչքի թող արած։ Քարերը մամուռով էին ծածկուել։ Մարդկային հետքեր չէին երևում։ Բայց չըրաղացպանի որդին քարահանքի խորքում թագնւած քարայրը մաքրել էր, կահաւորել, արևատօրէն գեղեցիկ զարդարել և ապրում էր այնտեղ, որպէս ծովային ամենայանդուգն, ամբողջ աշխարհում յայտնի աւազակախմբի պետ։ Նա զանգահարում է արծա-

թէ փոքրիկ զանգակը։ Վազում է մի փոքրիկ մարդուկ, մի թզուկ՝ գլխարկի վրայ ադամանդներ շարած։ Աւազակապետի ծառան է։ Թզուկը խոնարհւում է նրա առաջ մինչև գետին։

«Երբ արքայադուստր Վիկտորիան գայ, շնորհ բերէք նրան այստեղ առաջնորդել»,—հրամայում է եօհանը՝ բարձր ձայնով։

Թզուկը նորից խոնարհւում է մինչև գետին և անհետանում։ Եօհանը վայելուչ ձևով ձգւում է բազմոցի վրայ և խորասուզւում երազական մաքերի մէջ։ Նա նրան կը տանի բազմոցի մօտ, կառաջարկի այնտեղ նստել, նրան թանկագին ուտելիքներ կը տայ ոսկէ և արծաթէ ամաններով։ Պլպլան կերոնը կը լուսաւորէ քարանձաւը, որի ամենահեռաւոր ծայրին, ոսկեկար վարագոյների յետևում անկողին կը լինի պատրաստած։ Տասներկու ասպետներ նրան ի պահպանութիւն կը կանգնեն։

Եօհանը վեր է կենում, դուրս վազում քարանձաւից ու ականջ է դնում։ Կածանի վրայ տերևներն ու չոր ճիւղերն են խշխշում։

«Այդ դո՞ւ ես, Վիկտորիա»,—ճչում է նա։

«Այո՛»,—լսւում է հեռուից։

Նա գնում է նրան դիմաւորելու։

«Որքան սոսկալի է։ Վախենում եմ աւելի առաջ գնալ»,—ասում է Վիկտորիան։

Եօհանը շարժում է ուսերն ու պատասխանում։

«Ես հէնց նոր դուրս եկայ այնտեղից։ Ես այնտեղից եմ գալիս»։

Նրանք մտնում են քարանձաւը։ Նա առաջարկում է նրան նստել քարի վրայ և ասում է.

«Այս քարի վրայ էր նստած Հսկան»։

«Ախ մի՛ ասի, մի՛ պատմիր ինձ այդ։ Միթէ դու չե՞ս վախենում»։

«Ոչ»։

«Բայց դու ասում էիր, որ նա միայն մի աչք ունի, իսկ այդպիսի ոգինները միշտ չար են»։

Եօհանը մտածեց։

«Ո՛չ, նա երկու աչք ունէր, բայց մէկը կուրացրեց։ Այդ ինքն ասաց»։

«Ուրիշ ի՞նչ ասաց նա։ Ո՛չ, ո՛չ, մի՛ պատմիր»։

«Նա հարցրեց, թէ չե՞մ կամենայ արդիօք նրան ծառայել»։

«Եւ դու, իհարկէ, չը համաձայնեցիր։ Աստւած պատէ»։

«Ես չը հրաժարուեցի»։

«Դու ցնորուե՞լ ես։ Միթէ ցանկանում ես, որ քեզ լեռներում փակե՞ն»։

«Ա՛խ չեմ իմանում։ Երկրի վրայ էլ չարիքներ շատ կան»։

Լռութիւն։

«Այն օրւանից, որ այդ քաղաքացի երեխաները յայտնուեցան, դու մի միայն նրանց հետ ես խաղում»։

Նորից լռութիւն։

Եօհանը շարունակում է.

«Բայց ես նրանցից աւելի ուժեղ եմ։ Ես աւելի լաւ կարող եմ բարձրացնել քեզ, հանել նաւակից ու տանել, քան նրանցից մէկն ու մէկը։ Հաւատացնում եմ, որ կարող եմ քեզ մի ամբողջ ժամ պահել ձեռքերիս վրայ։ Նայիր»։

Նա նրան ձեռքերի վրայ բարձրացրեց։ Վիկտորիան ձեռքերով նրա վզովը փաթաթեց։

«Այո։ Բայց այժմ ինձ բաց թող, դրանից աւելի չես կարող պահել ինձ»։

Նա ցած թողից նրան գետնի վրայ։ Վիկտորիան ասաց.

«Օտտօն էլ է շատ ուժեղ Նա նոյնիսկ մեծերի հետ է կռւում»։

«Մեծերի՞ հետ»,—հարցնում է Եօհանը կասկածով։

«Այո, այո։ Քաղաքում»։

Լռութիւն։ Եօհանը մտածում է։

«Լաւ... է՛, լաւ լինի, ինչ որ լինելու է։ Այլևս հարկ չըկայ այդ մասին խօսելու։ Ես գիտեմ, ինչ կ՛անեմ»։

«Ի՞նչ ես կամենում անել»։

«Ես ծառայութեան կը մտնեմ Հսկայի մօտ»։

«Լսիր, դու ցնորւա՞ծ ես»,—ճչում է Վիկտորիան։

«Է՛, միևնոյն է։ Ես նոյնիսկ ուրախ եմ։ Ես այդ անպատճա՞ռ կ՛անեմ»։

Վիկտորիան մտածում է, թէ չի՞ կարող մի կերպ խնդրագրի՞ն ներան։

«Գուցէ նա այսուհետև այլևս չի գայ»։

2509
4667
Հաճախ

«Կը գայ»,—պատասխանեց Եօհանը։

«Այո՞ղ»,—սաստիկ ցնցւեց աղջիկը։

«Այո»։

Վիկտորիան դիմում է դէպի դուռը։

«Աւելի լաւ է այստեղից գնանք»։

«Ո՞ւր էք շտապում»,—ասում է իր հերթին Եօհանը՝ գունատւած։

«Նա գիշերւանից շուտ չի գայ։ Կէսգիշերին մայն»։

Վիկտորիան հանգստանում է և կամենում է նորից նստել իր տեղը։ Բայց նորից քարանձաւում մնալը Եօհանին իրեն սկսեց վատնգաւոր թւալ, և նա ասաց.

«Եթէ ցանկանում ես, բարձրանանք վերև։ Ես այնտեղ քեզ մի քար ցոյց կը տամ, որի վրայ քո անունն է քանդակւած։

Նրանք դուրս են գալիս քարանձաւից և քարը գտնում։ Վիկտորիան ուրախանում է և դրանով հպարտանում։ Եօհանը այնքան է յուզւած, որ պատրաստւում է արտասուել։

Նա ասում է.

«Երբ այստեղ չեմ լինի, դու այդ քարին կը նայես և կը յիշես ինձ երեմն։ Ինձ յիշիր երբեմն ընկեր։

«Իհարկէ,—պատասխանում է Վիկտորիան։ Բայց չէ՞ որ դու շուտ կը վերադառնա՞ս»։

«Աստւած գիտէ։ Չէ, ես, իհարկէ, չեմ վերադառնայ»։

Նրանք տուն դարձան։ Եօհանը, քիչ էր ճնում, որ լայ։

«Դէ, ճնաս բարև»,—ասում է Վիկտորիան։

«Ո՛չ, ախչ։ Սպասի՛ր։ Ես կարող եմ դեռ մի քիչ էլ ուղեկցել քեզ»։

...Ինչպէս կարող էր նա այդպէս անգութ լինել... Նրա համար միևնոյն էր—նրանից մի րոպէ առաջ, կամ յետոյ բաժանուել։ Այդ շատ դառը թւաց Եօհանին... Նրա վիրաւորուած հոգում եռաց դառնութիւնը։ Նա յանկարծակի կանգ առաւ և ասաց վրդովուած. «Լսի՛ր, Վիկտորի՛ա, ես ուզում եմ քեզ մի բան ասել. իմացիր, որ ոչոք այնպէս լաւ չի վերաբերուում քեզ, ինչպէս ես։ Ահա թէ ինչ էի ուզում ասել քեզ»։

«Այո՛, բայց Օտտօն էլ ինձ հետ շատ լաւ է վարուում»,—աւելացրեց Վիկտորիան։

Նրանք մի քանի քայլ լուռ առաջ են գնում։

«Ես ինձ Հսկայի մօտ շատ հրաշալի կը զգամ։ Մի անհանգստանա՛յ։ Դու դեռ չը գիտես, թէ ես ինչ պարգև կատանամ»։

«Ո՛չ։ Սակայն ի՞նչ կ'ստանա՞ս։

«Կէս թագաւորութիւն։ Բայց այդ դեռ բոլորը չէ»։

«Իսկապէ՞ս»։

«Բացի այդ, ինձ իբրև նւէր տալու է և արքայադուստրը»։

Վիկտորիան կանգ առաւ։

«Այդ ճի՞շտ չէ, չէ՞»։

«Ո՛չ, ճիշտ է։ Ինքը Հսկան խոստացաւ»։

Լռութիւն։ Վիկտորիան, հեռուն նայելով, շշնջում էր ինքն իրան։

«Ինչպիսի՞ կերպարանք կ'ունենայ այդ արքայադուստրը»։

«Ա՜խ, Աստուած իմ, նա երկրի երեսի բոլոր մարդկանցից գեղեցիկ է։ Չէ որ այդ մենք բոլորս գիտենք»։

Վիկտորիան վշտացաւ։

«Դու էլ ցանկանում ես տանձել այդ արքայադուստրը»,—հարցնում է նա։

«Այո՛, ես շատ ուրախ կը լինեմ»։ Սակայն նկատելով, որ Վիկտորիան իսկապէս շատ է վշտացած, աւելացնում է. «Բայց, կարող է պատահել, որ ես երբեւիցէ մի կերպ նորից գամ։ Դուրս կը գամ, երկրի վրայ մի զբօսանք կ'անեմ»։

«Բայց նրան հետդ չը վերցնես»,—խնդրեց Վիկտորիան։ «Ի՞նչսւ պիտի նրան էլ բերես»։

«Ես մենակ էլ կարող եմ գալ»։

«Դու խոստանո՞ւմ ես ինձ այդ»։

«Լա՛ւ, խոստանում եմ։ Բայց վերջ ի վերջոյ քեզ համար այդ միևնոյն չէ՞։ Ձեմ կարծում, որ այդ քեզ համար որոշ չափով կարևոր է»։

«Այդպէս մի ասի, լսո՞ւմ ես։ Ես հաւատացած եմ, որ նա ինձ չափ սաստիկ չի կարող քեզ սիրել»։

Երջանկութեան մի ամբողջ ալիք բռնեց Եւրիտասարդի սիրտը։ Երբ նա այդ քնքոյշ խօսքերը լսեց, ուրախութիւնից ու ամօթից պատրաստ էր գետին գլորուել։ Չը համարձակուելով նրա երե-

սին նայել, նա դէպի մի կողմը թեքւեց։ Գետնից մի ճիւղ վերցրեց, տերևահան արեց և սկսեց նրանով իր ձեռքին խփել։ Սաստիկ յուզմունքից սկսեց սուլել։

«Այժմ ես պիտի գնամ տուն»,—ասում է նա։

«Գնա՛ բարև», պատասխանում է Վիկտորիան և ձեռքը նրան մեկնում։

II

Ջրաղացպանի որդին գնաց։ Երկար տարիներ նա չը վերադարձաւ։ Դպրոց էր գնում և շատ էր պարապում։ Նա մեծացաւ, մի բարձրահասակ և ուժեղ տղամարդ դարձաւ։ Վերին շըրթունքը ազամազով ծածկւեց։ Քաղաքը հեռու էր, տուն գնալն ու դառնալը թանկ։ Մնայող ջրաղացպանը երկար տարիներ որդուն չէր թոյլ տալիս քաղաքից հեռանալ։ Եօհանը այդ ամբողջ ժամանակը սովորում էր։

Ի վերջոյ նա հասուն մարդ դարձաւ։ Նա տասնութ-քսան տարեկան էր։ Գարնան մի օր էր։ Կէսօրին նա իջաւ շոգենաւի տախտակամածից։ Ամրոցի կտրանը ծածանում էր դրօշակը՝ ի պատիւ ամրոցատիրոջ որդու, որ նոյնպէս նոր էր վերադառնում, տօների պատճառով և հէնց նոյն շոգենաւով, որով Եօհանը տեղ հասաւ։ Ամրոցատիրոջ որդուն նաւահանգստում սպասում էր յատուկ կառք։ Եօհանը ողջունեց ամրոցատիրոջը, նրա կնոջը և Վիկտորիային։ Սա չը պատասխանեց նրա բարևին։ Եօհանը նորից հանեց գլխարկը և լսեց, որ Վիկտորիան հարցնում է եղբօրը.

«Լսի՛ր, Դիտլէֆ, այդ ո՞վ է մեզ բարևում»։ Եղբայրը պատասխանեց.

«Այդ Եօհանն է, Ջրաղացպանի որդին, Եօհան Մեօլլերը»։

Վիկտորիան նրան նայեց, բայց նա քաշւեց երրորդ անգամ բարևել։ Կառքն անցաւ։

Եօհանը գնաց տուն։

Աստուած իմ, որքան պստիկ ու ծիծաղելի թւաց իր սենեակը։ Նա չը կարողացաւ դէնից ներս մտնել առանց կռանալու։ Ծնողները զիմաւորեցին նրան և շնորհաւորեցին նրա գալուստը՝ նրա կենացը խմելով։

Նրանք սաստիկ յուզւած էին, որքան սրտաշարժ էին, որքան սիրալիր... Նրա սպիտակահեր ծնողները... Նրանք ձեռքերին դէպի նա էին մեկնում և ուրախանում նրա տուն գալու առթիւ։ Նրան բախտաւորութիւն էին բաժանում։ Հէնց նոյն երեկոյ նա ման եկաւ. բոլոր հարազատ տեղերը։ Նա գնաց Ջրաղացը, հին քարահանքը, տեսաւ այն տեղը, ուր ձուկն էր որսում։ Թախծով լսեց ծանօթ սուլոցները թռչունների, որոնք առաջւայ պէս իրենց բները ծառերի վրայ էին հիւսել։

Անտառում նա գտաւ նախկին մեծ մրջնանոցը։ Մրջիւնները թողել հեռացել էին։

Բլրակը մեռած դրութիւն էր ստացել։ Նա մի քիչ գետինը փորեց։ Նրա մէջ էլ կեանք չը կար։

Թափառեց ամրոցատիրոջ անտառում և նկատեց, որ շատ ծառեր են կտրված։

«Ճանապհում ես հին տեղերը», կատակով հարցրեց հայրը։ «Ճանապհեցիր քո հին կեռնեխներին»։

«Ո՛չ, շատ մեծ փոփոխություն եմ գտնում։ Անտառ կտրված է»։

«Անտառը ամրոցին է պատկանում»,—ասաց հայրը։ Մենք ուրիշի ծառերը հաշվելու կարիք չ'ունենք»։ Ամեն ոք կարող է փողի կարիք ունենալ, իսկ ամրոցատիրոջը շատ փող էր հարկավոր»։

Օրերը գալիս էին, անցնում, լողում, քնքոյշ, քաղցր, լի հիասքանչ ժամերով, մենակ սենեակում, մանկական կեանքի սիրուն յիշատակներով... Մի ինչ որ բան նրան նորից դէպի երկիր ու երկինք, դէպի օդն ու լեռներն էր կանչում։

Եօհանը դէպի ամրոց էր գնում։ Կրեսը առաւօտեան խայթել էր նրան։ Նրա վերին շրթունքն ուռել էր։ Եթէ ճանապարհին մարդու պատահի, կը բարևի և իսկոյն կը հեռանայ։ Սակայն ոչոքի չը հանդիպեց։ Ամրոցի այգում նա մի տիկին տեսաւ։ Երբ մօտեցաւ, բարևեց ու անցաւ։ Ամրոցի տիրուհին էր։

Երբ անցնում էր ամրոցի մօտից, զգաց, որ սիրտը առաջւան պէս ուժգին բաբախում է։ Դէպի մեծ տունը և դէպի նրա բազմաթիւ պատու-

հանները, ունեցած յարգանքը, ամրոցատիրոջ պարթև ու խիստ արտաքինի վերաբերմամբ ունեցած երկիւղը նրա մէջ միս ու արիւն էին դարձել։

Նա դէպի նաւահանգիստ ուղեւորուեց։ Ճանապարհին, անսպասելի կերպով նրան հանդիպեցան Վիկտորիան ու Դիտլեֆը։ Եօհանին այդ դուր չ'եկաւ։ Գուցէ նրանք կարծեն, որ ինքը նրանց յետևից է գնում... բացի այդ, նրա շրթունքն ուռած էր։ Նա դանդաղեցրեց իր քայլերը, չը գիտէր, առաջ գնայ, թէ չէ։ Բայց և այնպէս գնաց։ Դեռ բաւական հեռու էր, որ նրանց բարևեց։ Իսկ երբ անցնում էր նրանց մօտով, ամբողջ ժամանակ գլխարկը բռնած էր ձեռքին։ Նրանք երկուսն էլ լուռ պատասխանեցին նրա բարևին և շարունակեցին հանդարտ առաջ գնալ։ Վիկտորիան ուղղակի նրա երեսին նայեց և քիչ չ'ամաչեց։ Եօհանը դիմեց դէպի ծովափը։ Նա իրան անհանգիստ էր զգում, նրա քայլերը ջղային էին դառնում։ Աստուած, իմ ուրքան մեծացել է Վիկտորիան։ Ըստ ամենայնի հասունացել է և աւելի գեղեցիկ է, քան առաջ։ Նրա իրար խառնուած յօնքերը, կարծես, թաւշեայ բարակ նեռներ լինեն։ Աչքերն աւելի թխացել էին և մուգ-կապոյտ դարձել։ Տուն դառնալիս նա անցաւ անտառի միջի, ամրոցի շուրջը ձգուած, կածանով։ Այլևս ոչոք չի ասիլ, որ նա ամրոցատիրոջ զաւակների յետևից է գնում։ Նա բլուրը բարձրացաւ, մի քար գտաւ և նստեց վրան։ Թռչուննները երգում էին։ Այդ եր-

գերի մէջ նա վայրի, կրքոտ հնչիւններ էր լսում։ Նրանք որոնում էին, գտնում իրար և թռչում ճիւղերը կոսւցներին։ Բարձրանում էր երկրի, կանաչող բողբոջների և փթթող ծառերի բուրմունքը։

Սակայն Եօհանն այս անգամ էլ Վիկտորիային հանդիպեց։ Սա գալիս էր կածանի միւս կողմից։ Եօհանը մի անզօր զայրոյթ զգաց։ Նա կը կամենար այդուց հեռու, հեռու լինել։ Այս անգամ նա անպատճառ կը կարծի, որ իր յետևից է գնում։ Նորից բարևել նրան։ Աւելի լաւ չէ՞ հակառակ կողմը նայել, մանաւանդ որ շրթունքն ուռած է...

Բայց երբ Վիկտորիան մօտեցաւ, Եօհանը գլխարկը վերցրեց և բարևեց։ Վիկտորիան ժպտաց և նրան գլխով արեց։

«Բարի երեկոյ։ Ողջունում եմ ձեր գալուստը»,—ասաց Վիկտորիան։

Կարծես, Վիկտորիայի շրթունքները քիչ դողում էին։ Սակայն նա շտապով իրան զսպեց։ Եօհանն ասաց։

«Զարմանալի է, ես ամենևին չէի կարծում, որ դու այստեղ ես»։

«Այո, իհարկէ, դուք չը գիտէիք։ Ես յանկարծ այստեղ գալու ցանկութիւն ունեցայ»։

Ա՜խ, իսկ Եօհանը նրան դու ասաց...

«Երկար պիտի մնաք այստեղ»,—հարցրեց Վիկտորիան։

«Մինչև արձակուրդի վերջը»։

Նա դժւարութեամբ էր կարողանում օրիորդին պատասխանել։

Մի վայրկեան թւաց, որ Վիկտորիան իրանից անսահման հեռացաւ։ Ինչո՞ւ է ապա նա խօսում նրա հետ։

«Դիտէիք լինձ պատմել է ձեր մասին։ Նա ասում էր, որ դուք շատ ընդունակ էք, լաւ էք քննութիւն տալիս և նոյնիսկ ոտանաւորներ էք գրում։ Ճշմարիտ է՞»։

Նա կարճ էր պատասխանում և նրա երեսին չէր նայում։

«Այո, իհարկէ, ինչպէս և բոլորը»։

Հաւանօրէն, Վիկտորիան այժմ կը գնայ, որովհետև այլ ևս չի խօսում։

«Գիտէք, լինձ այսօր կրեատը խայթեց, այդ պատճառով էլ ես այսպիսի տեսք ունեմ»,—նա ցոյց տւեց իր շրթունքը։

«Երկար ժամանակ է, որ այստեղ չէք եղած, կրեատներն էլ այլևս ձեզ չեն ճանաչում»։

Վիկտորիայի համար, իհարկէ, միևնոյն է. նրան ինչ, որ կրեատը այլանդակել է իրեն։ Է՜, ինչ արած։ Վիկտորիան կանգնած էր նրա առաջ և ուսի վրայ պատում էր իր կարմիր, ոսկեգոյն կոթով հովանոցը։ Նրան ինչ։ Սակայն, չէ որ, նա առաջ շատ անգամ է այդ հալարտ ֆրեկվէնին իր ձեռքերի վրայ մանածել։

«Ես էլ կրեատներին չեմ ճանաչում»,—պատասխանեց Եօհանը։ «Առաջ նրանք իմ ընկերներն էին»։

Սակայն օրիորդը նրա գաղտնի միտքը չը հասկացաւ և չը պատասխանեց։ Եօհանը շարունակեց։

«Ես այժմ այստեղ ոչինչ չեմ ճանաչում։ Նոյնիսկ անտառն է կտրուած»։ Վիկտորիայի դէմքը քիչ փոխուեց։

«Ուստի դուք, հաւանօրէն, այստեղ ոտանաւոր գրելու հնարաւորութիւն չէք ունենայ։

«Ի՞նչ կը լինի, որ դուք մի ոտանաւոր ձօնէք ինձ։ Ա՜խ, սակայն այս ի՞նչ եմ ասում։ Հէնց միայն սրանից կարող էք իմանալ, թէ ես այդ գործից որքան քիչ բան եմ հասկանում։

Եօհանը զայրացած գետնին էր նայում, իսկ օրիորդը բաւականութեամբ ծիծաղում էր նրա վրայ։ Նա ասում էր իր նախօրօք մտածած խօսքերը և դիտում, թէ ինչ տպաւորութիւն էին անում Եօհանի վրայ։

Սխալւում էք։ Նա իր բոլոր ժամանակը ամենևին էլ ոտանաւոր գրելով չի անցրել։ Նա երկար ժամանակ սովորել է, աւելից շատ է սովորել...

«Այո՛, այո՛։ Մենք, հաւանօրէն, նորից կը հանդիպենք։ Ա՛ռ այժմ ձեռք բարև»։

Նա գլխարկը հանեց և գնաց՝ առանց մի խօսք ասելու։ Եթէ օրիորդն իմանար, որ ոչ թէ մի ուրիշին, այլ մի միայն իրեն են նախատած նրա բոլոր ոտանաւորները, բոլորը, նոյնիսկ այն ոտանաւորները, որոնք գիշերւան, յաւերժահարսին են նախատած։ Նա այդ երբեք էլ չի իմանայ։

Կիւրակի օրը Դիոլեֆն եկաւ և խնդրեց, որ նա իրենց կղզին առաջնորդի։ «Ես նորից մակոյկավար պիտի լինեմ»,—մտածում էր նա։ Բայց և այնպէս գնաց։ Նաւահանգստում վխտում էր տօնական ամբոխը։ Ամեն ինչ կենդանացած էր։ Արեգակը երկնքից թափում էր իր այրող ճառագայթները։

Յանկարծ ծովից, կղզու մի ւս կողմից, հեռւում հնչեց սուլիչի ձայնը։ Պօստառար շոգենաւը ծովից դէպի ծոցը թեքւեց, մօտեցաւ նաւահանգստին։ Տախտակամածի վրայ հնչում էր նւագածուածքը։ Եօհանը նաւակն արձակեց և թիակները ձեռքին առաւ։ Նրանք ընկան մի տեսակ տօնական տրամադրութեան մէջ։ Պայծառ օրը, երաժշտութեան հնչիւնները նրա աչքերի առաջ ծաղիկներից ու ոսկեայ հասկերից մի հրաշալի ծածկոց էին հիւսում։ Ինչո՞ւ Դիոլեֆը չի գալիս։ Նա այնպէս է կանգնել ափին և ամբոխին ու շոգենաւին նայում, որ, կարծես, էլ առաջ չի գնալու։ Եօհանը մտածեց. «Այստեղ թիակների մօտ երկա՞ր եմ նստելու։ Ափ դուրս գամ»։ Նա թողեց նաւակը։ Նա յանկարծ տեսաւ, որ մի սպիտակ բան փայլեց ջրի վրայ և ջրի ճողփիւն լսեց։ Շոգենաւից մի յուսահատ, բազմաձայն ճիչ լսեց, և հազարաւոր աչքեր ու ձեռքեր թեքւեցին դէպի այն կողմը, ուր սպիտակ առարկան անհետացաւ։ Նաւագածուածքը խլոյն դադարեց։ Եօհանը մի ակընթարթում դժբախտութեան վայրն հասաւ։ Առանց նախօրօք քննելու, մտածելու, նա բնազդաբար

առաջ էր շարժւում։ Նա նոյնիսկ չը լսեց շոգենաւից հնչող մօր ձայնը. «աղջիկս, աղջիկս»։ Նա ոչոքի չը տեսաւ։ Առանց պատրաստւելու, շտապով նա ջուրը նետւեց ու սուզւեց։ Անցաւ մի ակնթարթ։ Նա չէր երևում։ Մի րոպէ։ Նկատւում էր, որ ծովը սաստիկ եռում է այն տեղում, ուր նա ընկել էր։ Պարզ էր, որ նա ոլոռնում էր։ Շոգենաւի վրայից ցաւակցութեան աղաղակներ էին լսւում։ Վերջապէս նա երևաց, սակայն դըժբախտութեան տեղից մի քանի սաժին հեռու։ Ձայն էին տալիս նրան խելագարի պէս, ցոյց էին տալիս. «Ո՛չ, այնտեղ էր, այնտեղ»։

Նա նորից սուզւեց։

Նորից մի տանջող րոպէ։ Կանայք շարունակում էին ճչալ, տղամարդիկ իրանց ձեռքերն էին շփում։ Մի մարդ ևս ջուրը նետւեց։ Նաւապետն էր։ Նա բաճկոնակն ու կօշիկները դուրս ձգեց։ Նա ուշադրութեամբ դիտեց աղջկայ ընկած տեղը։ Բոլորն էլ յոյսները նրա վրայ էին դրել։ Ջրի մակերևոյթի վրայ յանկարծ նորից երևաց Եօհանի գլուխը, բայց այս անգամ առաջւայ տեղից մի քանի սաժին աւելի հեռու։ Գլխարկը ընկել էր, և բաց գլուխն արևի տակ փայլում էր որպէս ծովացուլի գլուխ։ Կարծես, նա մի բանի հետ կռւում էր։ Նրա շարժումները ճնշւած էին, մի ձեռն էլ ազատ չէր։ Մի վայրկեան յետոյ նա ատամներով մի ինչ որ հանդոյցի պէս բան բռնեց։ Ցամաքի ու շոգենաւի վրայ հնչեցին զարմանքի ճիչեր։ Նոյնիսկ նաւապետը ջրի տակին լսեց այդ ձայները, գլուխը դուրս հանեց և շուրջը նայեց։

Վերջապէս Եօհանը հասաւ նաւակին, որ մի կողմ էր տարել, աղջկան նրա մէջ դրեց, յետոյ ինքը բարձրացաւ։ Այս բոլորը րոպէապէս կատարւեց։ Նայողները տեսնում էին. նա կացաւ, իսպառ պատռեց աղջկայ մէջքի վրայի շորերը և յետոյ սկսեց դէպի շոգենաւը թիավարել։

Երբ ջրահեղձին տախտակամածի վրայ բարձրացրին, ազատարարին ողջունեցին հիացմունքի խլացնող ձայներով։

«Ինչո՞ւ դուք անկման տեղից այնքան հեռու սկսեցիք որոնել,» հարցրին նրան։

Նա պատասխանեց. «Ցատակը ծանօթ է ինձ։ Բացի այդ այնտեղ հոսանք կայ։ Ես այդ գիտէի»։

Մի պարոն, ամբոխը ճեղքելով, հասաւ տախտակամածի ծայրին։ Նա դողդողալով ժպտում էր, դիակի պէս գունատ էր։ Նրա արտահայտութենից արցունքի կաթիլներ էին քարշ ընկած։

«Մի րոպէ տախտակամածի վրայ բարձրացէք», կանչեց նա դէպի ցած։ «Ես կամենում եմ շնորհակալութիւն յայտնել ձեզ։ Մենք ձեզ շատ բան ենք պարտական։ Մի րոպէ միայն»։ Եւ յետ դարձաւ գունատ, լալկան դէմքով ու ծիծաղելով։

Սանդուղքը ցած թողեցին։ Եօհանը շոգենաւ բարձրացաւ։ Նա այնտեղ երկար չը մնաց, իր հասցէն տւեց միայն և իր անունն ասաց։ Մի կին գրկեց նրան, թէև նա սաստիկ թրջւած էր։ Գունատ և սրտաշարժւած պարոնը նրա բուռը խցկեց իր ժամացոյցը։ Եօհանը նաւասենեակ

բարձրացաւ։ Այնտեղ երկու մարդ աշխատում էին՝ խեղդւածին ուշքի բերել։ Նրանք ասացին.

«Նա ուշքի է գալիս, զարկերակն սկսեց զորանալ։ Եօհանը նայեց նրան։ Սա կարճ ու պատառոտուն հագուստով մի աղջիկ էր։ Մէկը Եօհանի գլխին մի գլխարկ դրեց։ Նա գնաց։

Եօհանը չէր յիշում, ինչպէս ափին մօտեցաւ ու նաւակը կապեց։ Նա մի անգամ էլ լսեց, թէ ինչպէս «կեցցէ» գոչեցին, ապա յաղթական եղանակով թնդաց երաժշտութիւնը, և շոգենաւը հեռացաւ։ Նրան ոտից գլուխ պատել էր երջանկութեան ալիքը՝ քաղցր սառնութեամբ։ Նրա շրթունքները շարժւեցին, բայց նա չը կարողացաւ մի խօսք անգամ արտասանել։

«Նշանակում է այսօր գրօսանքը չ'աջողւեց», դժկամակութեամբ ասաց Դիտլեֆը։ Այն ժամանակ մօտեցաւ Վիկտորիան և շտապով ասաց.

«Դու ցնորւել ես։ Նա պիտի տուն գնայ և. շորերը փոխի»։ Եօհանը ոտքով շտապեց դէպի տուն։ Նրա ականջներում դեռ թնդում էին երաժշտութիւնը, լսւում էին «կեցցէ»-ների ձայները։ Սաստիկ յուզմունքը շարունակում էր նրան հեռու տանել։ Նա անցաւ իրանց տան մօտով. ներս չը մտաւ։ Նա անտառի միջով քարահանքը գնաց։

Այնտեղ նա իր համար արևով պայծառ լուսաւորւած մի փոքրիկ տեղ գտաւ և նստեց։ Նրա հագուստից գոլորշի էր բարձրանում։ Նա չէր կարողանում տեղումը նստել։ Նա մի անմիտ և երջանիկ անհանգստութիւն էր զգում։ Նա սկսեց

ճեմել։ Ո՛րքան բախտաւոր էր։ Նա ծունկ չոքեց և այդ օրւայ համար գոհացաւ Աստծուն արցունքներն աչքերին։ Վիկտորիան կանգնած էր այնտեղ, լսում էր «կեցցէ»-ների աղաղակները։ «Պիտի տուն գնալ և շոր շորեր հագնել», ասաց նա, Վիկտորիան։

Նա նստեց և հիացմունքով ծիծաղեց, երկար ծիծաղեց։ Ուրեմն Վիկտորիան տեսաւ նրա արած գործը։ Նա հետևում էր նրան հպարտութեամբ, երբ նա առաջներով ջրահեղձին բռնած՝ լողում էր ծովում։

Վիկտորիա, Վիկտորիա։

Եթէ Վիկտորիան իմանայ, որ նա ամբողջապէս նրան է պատկանում, նրա կեանքի իւրաքանչիւր րոպէն էլ նրան է պատկանում, կը ցանկար նրա ծառան լինել, ստրուկը. իր բազուկներով Վիկտորիայի համար ճանապարհ կը մաքրէր։ Պատրաստ է համբուրել նրա փոքրիկ կօշիկները, լծւել նրա կառքին։ Նա ցուրտ օրերին նրա վառարանը կը վառի, ոսկէ փայտեր կ'այրի, ոսկեզօծ փայտեր՝ Վիկտորիայի համար։ Նա շուրջը նայեց։

Ոչոք չը լսեց նրան։ Նա մնն մնակ էր, ինքն իր հետ։ Եօհանը դեռ ձեռքին բռնած ունէր թանկագին ժամացոյցը, որ բանում էր, չկչկկում։ «Գոհ եմ, գոհ, այս զարմանալի օրւայ համար»։ Նա հարթեց քարերի վրայ մամուռն ու տերևները։ Վիկտորիան նրան չը ժպտաց։ Սակայն նա այդպիսի սովորութիւն չ'ունի։ Նա

նաւահանգստում կանգնած էր։ Նրա այտերը թեթեւ կարմրել էին։ Դուրէ նա կը համաձայնէր այս ժամացոյցը վերցնել, եթէ առաջարկէր։ Արձակը դէպի արեւմուտքն էր թեքւել։ Եղանակը ցրտում էր։ Նա զգաց, որ ամբողջովին թաց է։ Նա վեր ցատկեց ինչպէս մի թեթեւ փետուր ու առաջ գնաց։

Ամբողջում հիւրերը կային։ Նրանք քաղաքից էին եկել։ Լսւում էր նրանց աղմուկն ու ուրախութիւնը։ Մի ամբողջ շաբաթ, գիշեր ու ցերեկ կլոր աշտարակի վրայ ծածանւում էր դրօշակը։ Առաջ դաշտից կրելու ժամանակ էր։ Բայց հիւրերը զարթնում էին, բոլոր ձիերը վերցրել էին։ Առաջ չէին կրում։ Երկար տարածութեամբ ընկած խամհողերը առանց հնձելու էին մնացել, բոլոր բանւորներին կառապան ու թիավար էին դարձրել։ Ցորենը մնացել էր առանց հնձելու և փչանում էր։ Երաժշտութիւնը շարունակում էր հնչել դեղին դահլիճում։

Ծերունի Ջրաղացպանը այդ օրերը աշխատանքը դադարեցրեց ու Ջրաղացը փակեց։ Դառն փորձը վարժեցրել էր նրան։ Այդպիսի բան շատ անգամ էր պատահել։ Քաղաքացի հիւրերը խըմբով նրա մօտ էին գալիս, իսկ նրանց զարթնութիւնից շատ էին տուժում իր հատիկներով լի տոպրակները։ Տաք ու պայծառ գիշերը նրանց դէպի զանազան զարճութիւններն էր գրաւում։ Մի անգամ հարուստ կամերգերը, երիտասարդ

ժամանակ, մի ամբողջ մըշնանոց բերից և մըրջիւններին արձակեց Ջրաղացում։ Ճշմարիտ է, կամերգերը այժմ ծերացել է, բայց նրա որդի Օտտօն հիւր էր ամբողջում և զարճանում էր զանազան հնարքներով։ Շատ բան էին պատմում նրա մասին։

Անտառում ձայներ ու ձիու ոտի դոփիւններ լսեցին։ Երիտասարդները կատաղած վազում էին ձիերով։ Նրանք մարակով ծեծում էին Ջրաղացի դուռը և ուզում էին ձիով ներս մտնել։ «Բարև ձեզ, բարև ձեզ», ճչում էին նրաք։ «Մենք ուզում ենք ձեզ բարևել»։

Ջրաղացպանը հանդարտ ժպտում էր։ Նրանք իջան ձիերից, ձիերը կապեցին ու Ջրաղացի առիւն արձակեցին։

„Ձագարը գատարկ է», գոռաց Ջրաղացպանը։ «Դուք Ջրաղացը կը փչացնէք»։

Բայց ոչոք չը լսեց, որովհետև խլացուցիչ աղմուկ էր։

«Եօհան, նրանք Ջրաղացը փչացնում են», գոռաց Ջրաղացպանը, որքան թոքերում ոյժ կար և ցոյց տւեց երիտասարդներին։ Եօհանը հանդարտ մօտեցաւ նրանց։ Նա սաստիկ գունատ էր, նրա քներակները ուռել էին։ Նա ճանաչեց կամերգերի որդուն, Օտտօին, որ կապետական համազգեստ էր հագած։ Բացի նրանից երկու ուրիշ երիտասարդներ ևս կային։ Նրանցից մէկը ժպտում էր, գլուխ էր տալի և աշխատում էր մեղմել կատակի անյարմարութիւնը։ Եօհանը ա-

ռանց մի խօսք ասելու, նոյնիսկ առանց գլուխը շարժելու դէպի Օտտօն էր գնում։ Այդ րոպէին անտառից երկու ձիաւոր դուրս եկան։ Մէկը Վիկտորիան էր, որ հագել էր ամազոնկայի կանաչադոյն հագուստ և նստած էր մի սպիտակ ձիու վրայ։ Վիկտորիան նայում էր կատարւածին, առանց ձիուց իջնելու, և, կարծես, պատճառն էր հարցնում։ Եօհանը ճանապարհը փոխեց, ամբարտակի վրայ բարձրացաւ, փականները բացեց և ջրաղացի ջուրը կտրեց։ Աղմուկը քիչ-քիչ հանգստացաւ։ Անիւը կանգնեց։ Օտտօն գոռաց.

«Ձէ, թող անիւը պտտւի։ Ինչո՞ւ կանգնեցրիր։ Ինձ ասում եմ, ես ցանկանում եմ, որ անիւը պտտւի»։

«Անիւը դո՛ւ էիր պրծակել», հարցրեց Վիկտորիան։

«Այո՛», պատասխանեց նա ծլծաղելով։ «Ինչո՞ւ չի գործում»։

«Որովհետև ձագարում ցորեն չը կայ», հանգիստ կերպով ու նրան նայելով՝ պատասխանեց Եօհանը։

«Հասկանում ե՞ք, ձագարը դադարկ է»։

«Հատիկներ չը կան նրա մէջ, հասկանո՞ւմ եա», ասաց Վիկտորիան իր հերթին,

«Ես այդ ինչպէ՞ս կարող եմ իմանալ», ծիծաղեց Օտտօն։

«Ինչո՞ւ է դադարկ, միթէ՞ հատիկներ չը կան»։

«Ձիդ նստիր», խորհուրդ տւեց նրան ընկերներից մէկը, որը կամենում էր այս անախորժ

միջադէպին վերջ տալ։ Նրանք նստեցին ձիերը։ Մէկը գնալուց առաջ ներողութիւն խնդրեց։ Վիկտորիան ամենից յետ մնաց։ Նա մի քանի քայլ հեռացաւ, ապա նորից դարձաւ։

«Բարի եղէք, այս ամբողջ անցածի համար ներումն խնդրէք ձեր հօրից», ասաց նա։

«Լաւ կը լինի, որ կազիտն ինքը խնդրի», պատասխանեց Եօհանը։

«Իհարկէ, անկասկած։ Բայց... նա իր տարօրինակութիւններն ունի... Որքան ժամանակ է, որ ձեզ չեմ տեսել, Եօհան»։

Եօհանը նրան նայեց և իր լսածին չէր հաւատում։ Ճի՞շտ լսեց։ Սխալւած չէ։ Միթէ նա մոռացե՞լ է անցեալ կիւրակին։ Նրա մեծ օրը։ Նա պատասխանեց։

«Ես կիւրակի օրը ձեզ տեսայ նաւահանգստում»։

«Իհարկէ»։ ասաց Վիկտորիան։ «Ի՜նչ լաւ էր, որ ձեզ յաջողւեց նաւապետին օգնել, երբ նա որոնում էր։ Դուք ևս գտաք աղջկանը»։ Եօհանը վիրաւորւեց և նրան կարճ պատասխանեց։

«Այո՛, մենք գտանք նրան»։

«Գուցէ ղէպքն ուրիշ տեսակ է եղել», շարունակեց Վիկտորիան, իբրև թէ նրա միտքը նորից ընկաւ։ «Գամ գուցէ մենակ դուք պատահեցիք... Սակայն այդ միևնոյն է։ Այո՛։ Ուրեմն յոյս ունենամ, որ դուք ձեր հօրը կը հաղորդէք... Մնաք բարեւ»։

Ժպտալով գլխով արեց, սանձը քաշեց ու

սլացաւ հեռու։ Եօհանը վշտացած ու անհանգիստ դնաց անտառը։ Անտառում նա տեսաւ Վիկտորիային, որ մենակ էր։ Ցենուած ծառի բնին՝ հեկեկում էր նա։ Գուցէ ձիուց է ընկել, ջարդուել։ Եօհանը ուղղակի մօտեցաւ նրան ու հարցրեց. «Ի՞նչ է պատահել ձեզ»։ Վիկտորիան մի քայլ մօտեցաւ նրան, ձեռքերը դէպի նա մեկնեց և իր փայլուն դէմքով նրան էր նայում. ապա նա կանգ առաւ։ Նրա ձեռքերը թուլացան, կախ ընկան։ Նա ասաց։

«Ո՛չ, ինձ առանձին ոչինչ չի պատահել։ Ես ձիուց իջայ, նրան ազատ թողեցի։ Եօհան, դուք այդպէս չը պիտի նայէք ինձ։ Երբ կանգնած-էիք ամբարտակի վրայ, ինձ էիք նայում։ Ի՞նչ էք կամենում»։ Եօհանը շշնջում էր. «Ի՞նչ եմ կամենում. չեմ հասկանում»։

«Ձեր ձեռքը որքան լայն է», ասաց Վիկտորիան և յանկարծ իր ձեռքը նրա ափի մէջ դրեց։ «Դուք շատ էք այրւել, ձիթապտղի գոյն էք ստացել»։

Եօհանը շարժւեց, ուզեց նրա ձեռքը բռնել։ Այն ժամանակ նա իր հագուստի փեշերն հաւաքեց ու ասաց. «Ո՛չ, ինձ ոչինչ չի պատահել։ Ես ցանկացայ ոտքով տուն գնալ։ Մնաք բարև»։

III

Եօհանը նորից քաղաք դնաց։ Անցան օրեր ու տարիները—աշխատանքով ու երազանքով, ըզ-

բաղմունքով ու պօէզիայով լի երկար ժամանակ։ Նրա դործերը լաւ էին գնում։ Նրան յաջողւեց մի ոտանաւոր գրել «Պարսից Թագուհի դարձած հրեայ աղջիկ Եսթերի» մասին։ Այս աշխատութիւնը տպւեց, և նա հռնարար ստացաւ։ Մեծ դրւածքը նրա անունը յայտնի դարձրեց։ Այդ «Սիրոյ լաբիրինթոսն» էր, որ գրւած էր Վենդեր կուսակրօնի անունից։

Այո՛... ինչ է սէրը։ Բուրաւէտ վարդերի մէջ ճախրող մի զեփիւռ։ Ո՛չ, այդ մի գեղին, մոլար, շողուն կայծ է արեան մէջ... Սէրը, այդ մի դըժոխային, կրքոտ երաժշտութիւն է, որ նոյնիսկ ծերուկների սրտերին տիպում է պարել։ Նա նման է անթառամ մարգարիտակային, որ, գիշերը հասնելուն պէս, լայն բաց է անում իր թերթիկները, և քնքոյշ անհոգին, որ թեթև զեփիւռից անգամ փակւում է և փոքրիկ հպումից մեռնում։

Այդպէս է սէրը։

Նա կարող է մարդուն սպանել ու բարձրացընել և նորից նրա վրայ անարդանքի դրօշմը դնել։ Նա մշտական չէ։ Այսօր ինձ է սիրում, վաղը՝ քեզ, հետևեալ գիշերը՝ մի ուրիշին։ Սակայն նա նոյնպիսի ամուր է, որքան անսասան ժայռը։ Նա մինչև մահ այրւում է անշէջ բոցով, որովհետև յաւերժական է։

Ուրեմն ինչ է սէրը։

Ո՜հ սէրը—նա ամառւայ գիշեր է աստեղապարդ երկնքով, անուշաբոյր երկրով։

Բայց ինչու է երիտասարդը գաղանի ձա-

նապարհների վրա, և ինչքա՜ն է տանջում իր սենեակում մենակ ծերունին։ Ա՜խ, սերը մարդու սիրտը մի պարտեզ է դարձնում, ուր խորհրդաւոր ու յանդուգն բոյսեր են աճում։ Միթէ սէրը չի գրաւում կուսակրօնին՝ ուրիշի այգին մտնել և գիշերները պատուհանից քնածներին նայել։ Միթէ նա չէ միանձնուհուն անմտութեամբ հարուածում և արքայադստերց մտածողութիւնը մթնացնում։

Սէրը մինչև գետին է կռացնում իշխողի գլուխը այնպէս, որ նրա մազերը սրբում են փողոցի փոշին, և նա ինքն իրան անամօթ բառեր է կրկնում, և ծիծաղում է, և լեզուն դուրս հանում։

Այդպէս է սէրը։

Ո՛չ ոչ, նա բոլորովին այլ բան է։ Աշխարհում նրա հետ ոչինչ չի համեմատւիլ։

Երբ գարնան գիշերը պատեց երկիրը, և նա յայտնուեց, երիտասարդը երկու աչեր տեսաւ։ Նա թաւկացաւ ու նրանց մէջ նայեց։ Նա շրթունքները համբուրեց, և նրա հոգում երկու ճառագայթներ հանդիպեցան. արեգակն ու աստղերը լուսաւորեցին դէմ առ դէմ։ Երիտասարդը նրա գիրկն ընկաւ, և ամբողջ աշխարհքը չքացաւ նրա համար։ Սէրը—Աստծու առաջին խօսքն է, Նրա առաջին միտքը։ Երբ Նա ասաց. «Թող լոյս լինի,»—ծնուեց սէրը։ Ի՛նչ որ Նա ստեղծեց, գեղեցիկ էր, ուստի ոչինչ չը վերաստեղծեց։ Եւ սէրը դարձաւ աշխարհի նախապատճառն ու թագուհին։

Սակայն նրա բոլոր ուղիները փուած են ծաղիկներով ու ցօղուած արիւնով, ծաղիկներով ու արիւնով։

Սեպտեմբերի մի օր էր։

Այն հեռաւոր փողոցը նրա մշտական զբօսավայրն էր։ Նա շրջում էր այնտեղ, ինչպէս իր սենեակում, որովհետև երբէք ոչոքի չէր հանդիպում։ Փողոցի երկու կողմերում ընկած էին ոսկեգոյն ու ծիրանեգոյն ծառերով զարդարւած այգինները։

Ի՜նչպէս յայտնուեցաւ Վիկտորիան քաղաքի այդ մասում։ Ո՞ւր է գնում այդ ճանապարհով։ Նա չէր սխալւում։ Այդ Վիկտորիան էր։ Գուցէ հէնց Վիկտորիան էր, որ մօտիկ անցաւ, երբ նա երեք օր առաջ պատուհանից դուրս նայեց։

Նրա սիրտն սկսեց սաստիկ բաբախել։ Նա գիտէր, որ Վիկտորիան քաղաքուհի էր։ Այդ մասին նա լսել էր։ Սակայն նա ջրաղացպանի որդու համար օտար շրջաններում էր լինում։ Նա այլևս Դիգլեֆի հետ յարաբերութիւն չունէր։ Եօհանն իրան զսպեց և գնաց դէպի նա։ Միթէ նա չը ճանաչեց։ Օրիորդը գնում էր լուրջ ու մտածկոտ տեսքով, հպարտ գլուխը վայելուչ վզի վրայ բռնած։

Նա բարևեց։

«Բարև ձեզ», պատասխանեց օրիորդը շատ կամաց ու շարունակեց գնալ՝ ըստ երևոյթին, առանց կանգնելու դիտաւորութեան։

Նա ևս լուռ անցաւ։ Նրա ոտները դողդողում էին։ Փողոցի մայթից նա յետ դարձաւ և շարունակեց իր սովորական զբօսանքը։ «Ես միշտ պիտի ցած նայեմ, առանց աչքերս վեր բարձրացընելու», մտածում էր նա։

Դեռ մի քանի քայլ չարած՝ նա գլուխը բարձրացրեց։ Օրիորդը մի պատուհանի առաջ կանգնեց։ Անցնո՛ր արդեօք, թէ թեքւի միւս փողոցը։ Ինչո՞ւ նա այնտեղ կանգնեց։ Այդ մի մանրավաճառի փոքրիկ խանութի պատուհան էր, ուր ի ցոյց էին դրած սապոնի խաչաձև դարսած կտորներ, միւս կողմը՝ ձաւարով լի մի բաժակ և մի քանի հին դրօշմանիշեր։

Գուցէ հարկաւոր է մի քանի քայլ ևս գնալ, ապա յետ դառնալ։ Բայց յանկարծ օրիորդը նրան նայեց և վայրկենապէս դէպի նա եկաւ։ Նա արագ էր քայլում, կարծես, հաւաքել էր իր ամբողջ ոյժերը, և երբ նա խօսեց, դժւարութեամբ էր շնչում։ Նա ղողձալաբար ժպտում էր. «Բարև ձեզ, բարև ձեզ, ինչ լաւ է, որ պատահեցայ»։

Աստուած իմ, Եօհանի սիրտը ինչպէ՛ս էր բաբախում. չէր բաբախում, այլ ցնցւում էր։ Նա կամեցաւ մի բան ասել, բայց չը յաջողուեց, միայն շրթունքները շարժւեցին։ Նրա շորերից, դեղին զգեստներից բուրմունք էր բուրում։ Այդ րոպէին Եօհանը նրա դէմքը չէր տեսնում, բայց ճանաչեց նրա վայելչակազմ ուսերը, նոյնպէս նրա նեղլիկ ձեռքը, որով հովանոցն էր բռնել։ Այդ նրա ա՛յ ձեռքն էր։ Մատին մատանի կար։ Եօհանը առաջին րոպէին այդ բանի վրայ ուշադրութիւն չը դարձրեց ու չը վշտացաւ։ Սակայն նրա ձեռքը զարմանալի գեղեցիկ էր։

Ահա մի ամբողջ շաբաթ է, քաղաքումն եմ և դեռ ոչ մի անգամ ձեզ չեմ տեսել։ Սակայն չէ, մի անգամ փողոցում տեսայ ձեզ, մէկն ասաց, որ այդ դուք էք։ Դուք նշանաւոր մարդ էք դարձել։

Եօհանը շշնջում էր։

«Ես գիտէի, որ դուք քաղաքումն էք։ Երկար էք մնալու»։

«Ո՛չ, ընդամենը մի քանի օր։ Ոչ, կարճ ժամանակ. շուտով տունն եմ գնալու»։

«Շնորհակալ եմ, որ ձեզ տեսնելու հնարաւորութիւն տւիք»։

Ընդմիջում։

«Ա՛խ, երևակայէք, ճանապարհը կորցրել եմ։ Կամերգերի մօտ եմ ապրում։ Ի՞նչպէս գնամ այնտեղ»։

«Եթէ թոյլ կը տաք, կառաջնորդեմ»։

Նրանք առաջ գնացին։

«Օտտօն տանն է ապրում», հարցրեց նա, որպէսզի մի բան ասած լինի։

«Այո՛, տանն է ապրում», կարճ պատասխանեց Վիկտորիան։

Մի տանից, որի առաջով անցնում էին նրանք, մի քանի մարդ դուրս եկան։ Նրանք մի դաշնամուր էին տանում և ամբողջ մայթը փակել էին։

2496-6

Վիկտորիան քաշվել էր և բոլորովին իր ուղեկցին կպել։ Եօհանը նայում էր նրան։

«Ներքե՛ք», ասաց Վիկտորիան։

Նրա հպումից Եօհանի մարմնով բաւական մի ալիք էր անցնում։ Նրա շնչառութիւնը մի վայրկեան տաքացրեց Եօհանի այտը։

«Ես ձեր մասին մատնի՛ մատանի եմ տեսնում», անտարբեր ժպտալով ասաց նա։ «Կարծես եմ շնորհաւորել»։

Ի՞նչ է պատասխանելու։ Նա Վիկտորիային չէր նայում և իր շնչառութիւնը զսպում էր։

«Իսկ դո՛ւք», պատասխանեց նա։ «Մի՞թէ դուք մատանի չունէք։ Իսկապէս։ Բայց ինձ մէկն ասաց... Վերջերս ձեր մասին շատ բան են ասում. նոյնիսկ թերթերում են գրում։

«Ես մի քանի ռոմանտիկներ եմ գրել», պատասխանեց նա։ «Սակայն դուք, իհարկէ, չէք կարդացել»։

«Մի՞թէ մի ամբողջ գիրք չէ։ Ինձ թուում է»...

«Այո՛, մի փոքրիկ գրքոյկ ևս կայ»։ Նրանք հրապարակին հասան։ Վիկտորիան թէև կամերգերի մօտ էր գնում, բայց չէր շոպռւում։ Նա մի նստարանի վրայ նստեց։ Եօհանը կանգնել էր նրա առջև։ Յանկարծ Վիկտորիան ձեռքը մեկնեց նրան և ասաց։ «Դուք էլ նստէք», և երբ նա նստեց, նոր միայն իր ձեռքը քաշեց։

«Ա՛յժմ, կամ երբէք», մտածում էր Եօհանը։ Նա փորձեց նորից անտարբեր ձևանալ և կատակով խօսել. ժպտում էր, նայում դէպի դաղարկ տարածութիւնը։ Լաւ.

«Այդպէս... դուք նշանդրուած էք, իսկ ինձ այդ չէք ուզում ասել։ Չէ՞ որ ես ձեր հարևանն եմ, այնտեղ, տան հարևանը»։

Վիկտորիան մտածում էր։ «Ես այսօր ուրիշ բան եմ ուզում խօսել քեզ հետ», ասաց նա։ Եօհանը մի րոպէ լրջացաւ և հանդարտ արտասանեց.

«Այո՛, այո՛։ Սակայն ես այդ տեսնում եմ»։

Ընդմիջում։

Նա նորից սկսեց։

«Իհարկէ, ես միշտ էլ գիտէի, որ դուք չէք կարող ինձ... Այո՛, իհարկէ, ես նա չեմ, ով... Ես մի ջրաղացպանի որդի եմ, իսկ դուք... Հասկանալի է, այդպէս։

«Նոյնիսկ չեմ կարողանում հասկանալ, թէ ինչպէս եմ համարձակւում նստել այստեղ, ձեր կողքին։ Չէ որ, ես պիտի ձեր առաջ կանգնէի, կամ չոքէի։ Այդ այնպէս կը լինէր, ինչպէս հարկն է։ Բայց և այնպէս կարծում եմ... բացակայութեանս բոլոր տարիները իրանց գործը տեսել են։ Կարծեմ, ես այժմ կարող եմ, աւելի մեծ համարձակութիւն ունենալ։ Գիտեմ, որ ես այժմ այլևս երեխայ չեմ, գիտեմ նոյնպէս, որ եթէ կամենաք էլ, դարձեալ իրաւունք չունիք ինձ բանտը ձգել։ Ահա թէ ինչու համարձակւեցի այդ ձեզ ասել։ Սակայն դուք իմ վրայ չը պիտի բարկանաք։ Աւելի լաւ է, որ ես լռեմ»։

«Ո՛չ, խօսէք, ասացէք, ինչ որ կամենում էք»։

«Կարելի՞ է։ Այն, ինչ որ ես եմ կամենում։ Ձեր մտահնին այդ չի՛ արգելի»։

«Ո՛չ, պատասխանեց նա հանդիսաւոր»։ Նա ձեզ չի՛ արգելի։ Ո՛չ»։

«Ի՞նչ։ Ապա այդ ինչ է նշանակում, Վիկտորիա։ Աստուած ձեզ օրհնէ։ Ասացէք, չեմ սխալւում արդեօք»։

Նա վեր կացաւ և կռացաւ, որ Վիկտորիայի երեսը տեսնի։

«Մի թէ մտահնին ոչինչ չի՛ նշանակում, հարցնում եմ ես»։

«Նստէք նորից»։

Նա նստեց։

«Ա՜խ, ո՛չ։ Դուք պիտի իմանաք, թէ ես որքան յաճախ էի ձեր մասին մտածում։ Աստուած իմ, դրանից բացի մի ուրիշ միտք եղե՞լ է իմ գլխում։ Իմ տեսած բոլոր մարդկանցից ես միայն ձեզ էի ճանաչում, միայն դուք գոյութիւն ունիք ինձ համար։ Ես ի՛ միայն այսպէս կարող էի դատել.

«Վիկտորիան ամենագեղեցիկ, ամենասքանչելի աղջիկն է, և ես նրան ճանաչում եմ։ Փրեկէն Վիկտորիա, մտածում էի ես։ Ես գիտէի, ես լաւ էի հասկանում, որ ոչոք այնքան հեռու չէ ձեզնից, որքան ես, բայց ես ձեզ ճանաչում էի, և այդ ինձ համար շատ մեծ բան էր։ Ես գիտէի, որ դուք ապրում էք այնտեղ և դուէք երբեմն յիշում

էք ինձ։ Իհարկէ, դուք ինձ չէիք յիշում, բայց ես յաճախ երեկոները նստում էի սենեակումս, աթոռիս վրայ, և մտածում էի, թէ դուէք դուք ինձ երբեմն յիշում էք։ Գիտէք, Փրեկէն Վիկտորիա, այն ժամանակ կարծես երկինքը բացւում էր իմ առաջ, և ես ինձ համար ոտանաւորներ էի գրում, ունեցածս ամբողջ փողով ձեզ համար ծաղիկներ էի գնում, ծաղիկները տուն էի տանում և բաժակի մէջ դնում։ Իմ բոլոր ոտանաւորները ձեզ են նւիրւած։

Այն ոտանաւորները, որոնք ձեզ չեն նւիրւած քիչ են և անտիպ են։ Սակայն, դուք, իհարկէ, հրատարակւածներն էլ չէք կարդացել։ Այժմ էլ մի մեծ գիրք եմ սկսել։ Ա՜խ, Աստուած իմ, որքան գոհ եմ, որ լցւած եմ քեզնով։ Դրա մէջ է իմ ամբողջ բախտաւորութիւնը։ Ինչ որ տեսել եմ ու լսել, բոլորը, բոլորը ամբողջ օրեր ու գիշերներ ինձ ձեր մասին էին պատմում։ Ձեր անունը փորագրել եմ սենեակիս առաստաղի վրայ։ Պարկում եմ ու նրան նայում։ Իսկ սպասուհին այդ չի նկատում, որովհետև տառերը հապիւ են նշմարւում։ Միայն ինձ համար եմ գրել»։

Վիկտորիան շուռ եկաւ, կրծքի վրայի շրջերը յետ քաշեց և մի կտոր թուղթ հանեց։

«Նայէք», ասաց նա ծանր շնչելով։ «Ես այս կարել եմ ու պահել։ Անշուշտ ախորժելի է ձեզ իմանալ, որ ամեն երեկոյ կարդում եմ այս։ Առաջին անգամ այս ոտանաւորը ինձ հայրս ցոյց տւեց։ Ես պատուհանին մօտեցայ ու կարդացի»։

«Ո՞ւր է, չեմ գտնում,— ասաց ևս և թերթը յետ տւեց։ Բայց ևս արդէն կարդացել էի և շատ ուրախ էի»։

Թղթից բուրում էր նրա կրծքի հոտը։ Վիկտորիան ինքը թուղթը շուռ տւեց և նրան ցոյց տւեց։ Այդ նրա առաջին ոտանաւորներից մէկն էր, մի փոքրիկ քառատող, որ նրան էր վերաբերում „սպիտակ ձիով ամազոնկային“։ Այդ չորս տողում արտայայտւած էր հոգու պարզ և ուժեղ մի շարժում, մի բռնկում, որի պահելը դժւար էր, և որը վառվռուն աստղերի պէս փայլում էր տողերի արանքից։

«Այո», ասաց Եօհանը։ «Այդ ես եմ գրել, շատ վաղուց։ Երբ գրում էի, բարեկիններս խըղխըղում էին պատուհանիս տակ։ Դուք թերթը գարձեալ պահո՞ւմ էք։ Շնորհակալ եմ։ Արդէն թագցրէք։ Ա՜խ... արտասանեց նա հանդիստ ու զսպած ձայնով։ «Այժմ դուք հեռու չէք ինձնից, ո՛չ։ Ես զգում եմ ձեր ձեռքը իմիս մօտ։ Ես զգում եմ նրա տաքութիւնը։ Շատ, շատ անգամ, երբ ես ձեր մասին էի մտածում, յուզմունքից ես չափազանց ցուրտ էի զգում։ Այժմ որքան տաք եմ։ Վերջին անգամ, տանը դուք այնքան լաւն էիք։ Այժմ աւելի լաւն էք։ Ձեր աչքերը, ձեր յօնքերը, ձեր ժպիտը... Ա՜խ, չեմ իմանում, թէ ինչ եմ ասում, ամեն ինչ, ամեն ինչ ձեր մէջ»։

Վիկտորիան ժպտաց և նրան նայեց կիսախուփ աչքերով, որոնք փայլում էին երկար արտասուքների տակից։ Նա լուսաւորւած էր մի

ջերմ լուսով։ Կարծես, նա իրան երջանիկ էր զգում։ Նա, մի ակամայ շարժումով, իր ձեռքը դէպի Եօհանը մեկնեց։

«Շնորհակալ եմ», ասաց նա։

«Ո՛չ, Վիկտորիա, շնորհակալ մի լինիք», պատասխանեց Եօհանը։ Նրա հոգին ամբողջովին դէպի Վիկտորիան էր ձգտում։ Նա ուզում էր երկար, շատ երկար խօսել։ Նա ուզում էր՝ իր սրտում ամբարւած ամբողջ վիշտը թափել։ Նա հարբած էր։

«Այո... Վիկտորիա, եթէ դուք գոնէ մի քիչ սիրում էք ինձ... Չեմ իմանում, ճիշտ է, թէ չէ, բայց ասացէք, ասացէք, որ այդպէս է—ասացէք, որ այդպէս է, եթէ նոյնիսկ այդ ճիշտ չէ։ Ի սէր Աստծու, հաւատացնում եմ ձեզ, որ ես մի ինչ որ մեծ, մի ինչ որ չը լսւած բանի կը հասնեմ։ Դուք նոյնիսկ չէք կարող հրևակայել, թէ ես ինչի կը հասնեմ։ Երբեմն զգում եմ, որ իմ մէջ եռ են գալիս չը կատարւած դիտաւորութիւններ։ Նրանք ձգտում են իրենց համար մի ելք գտնել։ Երբեմն դիշերները չեմ կարողանում քնել, անդադար քայլում եմ սենեակում։ Իմ առաջ տեսիլներ են պատկերանում ու հանգստութիւն չեն տալիս ինձ։

«Սենեկակից հարևանս չի կարողանում քնել։ Նա ծեծում է պատը։ Լուսաբացին նա կատաղած վազում է ինձ մօտ։ Սակայն նա գոյութիւն չունի ինձ համար։ Այնքան շատ եմ մտածել ձեր մասին, որ ինձ թւում է, թէ դուք ինձ հետ էք։

Ես մտածում եմ պատուհանին ու երգում։

«Լուսանում է։ Բարդենիները խշխշում են։ Բարի գիշեր,—ասում եմ ես ցերեկւան։ Այդ, իսկապէս, ձեզ եմ ասում։ Այժմ նա քնած է, մտածում եմ ես։ Բարի գիշեր։ Թող Աստուած օրհնէ նրան։ Յետոյ ես պարկում եմ։ Եւ այսպէս երկոնները անցնում են իրար յետևից։ Սակայն ես երբէք չէի կարծում, որ դուք այդքան գեղեցիկ էք։ Երբ գնաք, ես ձեզ կը յիշեմ այնպէս, ինչպէս այժմ էք։ Այնպէս, ինչպէս այժմ։ Ես մաքով կը տեսնեմ ձեզ այսպիսի պայծառութեամբ»...

«Իսկ դուք ուրն էք գնալու»։

«Ո՛չ, դեռ գործերս չեմ վերջացրել։ Բայց ես կը գնամ։ Հէնց այժմ կը գնամ։ Դեռ պատրաստ չեմ, սակայն ես աշխարհում ամեն բանի համաձայն եմ։

«Այգում զբօսնում էք։ Երեկոները տեղ կը-նում էք։ Ես կը կամենայի ձեզ տեսնել, բարևել —ուրիշ ոչինչ։ Բայց եթէ դուք ինձ մի քիչ սիրում էք, եթէ իմ ներկայութիւնը տանելի է ձեզ, այն ժամանակ... ասացէք ինձ, տէք ինձ բախտաւորութիւն... Գիտէք, մի տեսակ արմաւենի կայ, որն իր կեանքում մի միայն մի անգամ է ծաղկում, թէև երբեմն մինչև ութսուն տարի է ապրում։ Տալիպոտի արմաւենին է այդ։ Նա միայն մի անգամ է ծաղկում։ Ես էլ հիմա եմ ծաղկում։ Այո, փող կը գտնեմ ու ուրն կը գնամ։ Բոլոր զբաղքներս կը ծախեմ։

«Այժմ մի մեծ գիրք եմ գրում։ Սակայն ես

այդ հէնց այժմ կը ծախեմ, հէնց վաղը, բոլորը, ինչ որ մինչև այժմ գրել եմ, և բաւական խոշոր գումար կստանամ։ Կամենում էք, որ ես ուրն գամ»։

«Այո»։

«Շնորհակալ եմ, շնորհակալ եմ։ Ներէք, որ ես շատ յոյսեր ունեմ, չափազանց հաւատ։ Որքան լաւ է, հաւատալ անսահման շատին։ Այսօր կեանքիս ամենաերջանիկ օրն է»։ Նա գլխարկը վերցրեց և կողքը դրեց։ Վիկտորիան շուրջը նայեց։ Փողոցով մի տիկին էր անցնում։ Նրա յետևից, քիչ հեռու, գնում էր մի կին՝ կողովը ձեռքին։ Վիկտորիան սկսեց անհանգստանալ։ Նա ժամացոյցը հանեց։

«Ձեր գնալու ժամանակն է», հարցրեց Եօհանը։ «Գնալուց առաջ մի բան էլ ասէք, թողէք մին էլ լսեմ ձեր ձայնը...Ես ձեզ սիրում եմ և այժմ այդ ասում եմ ձեզ։ Ձեր պատասխանից է կախուած... Ես ամբողջովին, ամբողջովին ձեզ եմ պատկանում... Ի՞նչ կը պատասխանէք։.

Ընդմիջում։

Եօհանը գլուխը քարշ արեց. «Ձէ, չէք խօսում», խնդրում էր նա։

«Ոչ այստեղ» պատասխանեց նա։ «Ես կը-պատասխանեմ այնտեղ, տանը»։ Նրանք առաջ գնացին։

«Ասում են, որ դուք ամուսնանում էք այն նորաստի աղջկայ հետ, որին դուք ապատեցիք։ Ի՞նչպէս է նրա անունը»։

«Դուք Կամիլլայի մասին էք խօսում»։

«Կամիլլա Զեյերի։ Ասում են, դուք ամուսնանում էք նրա հետ»։

«Ահա թէ ինչ... Ինչո՞ւ էք այդ մասին հարցնում... Նա դեռ փոքր է։ Ես եղել եմ նրանց մօտ։ Նրանց տանը ամեն ինչ ճոխ է ու հարուստ։ Հոյակապ ամրոց ունեն, ձերինի պէս։ Ես շատ անդամ եմ եղել նրանց մօտ։ Ո՛չ, նա դեռ փոքր է»։

«Նա տասնհինգ տարեկան է։ Ես նրան պատահեցի ուծանօթացայ։ Նա ինձ շատ դուր եկաւ։ Որքան հիանալի է», ասաց Վիկտորիան։

«Ես նրա հետ չեմ ամուսնանայ», տասց նա։

«Ո՞չ»։

Նա նրան նայեց։ Եօհանը տխրեց։ «Բայց ինչու էք դուք խօսում այդ մասին։ Դուք կամենում էք, որ ես ուշադրութիւնս ուրիշի վրայ դարձնեմ»։

Վիկտորիան մի քանի քայլ հեռացաւ ու կանգ առաւ սանդուղքի մօտ։

«Ես այդտեղ չեմ գայ», ասաց նա՝ քիչ զարմացած։ Վիկտորիան զանգահարեց և դէպի նա դարձաւ։ Նրա կուրծքը յուզուած էր։

«Ես ձեզ սիրում եմ», ասաց Վիկտորիան։ «Հասկացէք ես ձեզ, մի միայն ձեզ եմ սիրում»։ Յանկարծ նա շտապով մի քանի աստիճան ցած վազեց, իր ձեռքերով Եօհանին փաթաթեց և համբուրեց նրան։ Նա ամբողջ մարմնով Եօհանին էր կպել և դողում էր։

«Ես ձեզ, մի միայն ձեզ եմ սիրում», արտասանեց նա նորից ծանր շնչելով և հարբած նրան նայեց։ Վերևը մուտքի դուռը բացին։ Վիկտորիան նրանից բաժանուեց և սանդուղքով դէպի վեր վազեց։

IV

Լուսանում է։ Սկսում է սեպտեմբերի երկնագոյն, դողդոջուն մի օր։ Այգում հանգիստ խշխշում են բարդենիները։ Բացւում է պատուհանը, և մի մարդ գլուխը դուրս է հանում։ Նա արմունկով պատուհանի ներքնատախտակին է յենւում և երգում է։ Նա նայում է աշխարհին՝ ինչպէս երջանկութիւնից հարբած մի խենթ։ Նա յանկարծ շուռ է գալիս և իր դռանը նայում։ Մէկը դուռը բախում է։ «Ներս եկէք», կոչում է նա։ Բախողը ներս է մտնում։ Այդ մի ծերունի էր, գունատ, կատաղած հայեացքով։ Նա ձեռքին մի լամպ էր բռնած, որ վառւում էր, որովհետև դեռ բոլորովին չէր լուսացել։

«Ես ուզում եմ ձեր ուշադրութիւնը մի անգամ էլ այդ բանի վրայ դարձնել, պարոն Միւլլեր, պարոն Եօհան Միւլլեր։ Ձեզ այդպիսի վարմունք վայել է», ասաց նա բորբոքած։

«Ո՛չ», պատասխանեց Եօհանը։ «Դուք իրաւացի էք։ Բայց նայէք, այս գիշերը ո՛րքան եմ գրկել, և այս բոլորը սքանչելի է դուրս եկել։ Ես ա՛յնքան երջանիկ էի։ Այժմ վերջացրել եմ։ Պատուհանս բացի ու մի քիչ երգեցի»։

«Դուք քաղաւում էք»,—ասաց այն մարդը։ «Հաւատացնում եմ, այդ ամենաբարձր երգն է, որ ես կեանքումս լսել եմ։ Այն էլ կէս գիշերին»։

Եօհանը սեղանի վրայից վերցրեց իր թըղթերը և ընտրեց մեծ ու փոքր թերթերի մի ամբողջ խուրձ։

«Այստեղ նայէք» բացագանչեց նա։ «Ասում եմ ձեզ, որ գործս երբէք այսպէս լաւ չէր գնացել։ Կարծես, մի անընդհատ կայծակ լինէր։ Մի անգամ ես կայծակ տեսայ։ Նա անցաւ հեռագրալարի վրայով։ Աստուած իմ, կարծես, կրակի ամբողջ շերտ լինէր։ Նոյնը պատահեց և ինձ՝ այս գիշեր։ Ի՞նչ արած։ Հաւատացած եմ, որ չէք բարկանայ իմ վրայ, եթէ իմանաք, թէ այդ ինչպէս եղաւ։ Ես այստեղ նստել էի և գրում էի։ Լսում էք։ Ես տեղիցս չէի շարժւում։ Ես յիշում էի ձեզ և աշխատում էի հանդարտ լինել։ Բայց մի վայրկեան այդ մասին մոռացայ։ Կուրծքս պատրաստ էր պատռուել։ Ուզէ ես գիշերը վեր կացայ, ուզէ սկսեցի քայլել։ Որքան բախտաւոր էի»։

«Գիշերը ոչինչ չէր լսում։ Բայց բոլորովին անհերելի է ձեզ այդ։ Լուսաբացին պատուհանը բաց էք անում և այդ եղանակով քաղաւում»։

Իհարկէ։ Անհերելի է։ Սակայն ես բացատրեցի, թէ ինչու այդպէս եղաւ։ Պիտի իմանաք, որ այլ ևս ուրիշ այդպիսի գիշեր չի կարող լինել։ Ես այս գիշեր նորից որքան ապրեցի, որքան կեանք ունեցայ։ Ես անցնում էի փողոցով և

պատահեցի երջանկութեանս։ Ա՛խ, ինձ լսիր, Է։ Ես տեսայ իմ աստղին, իմ երջանկութեանը, և դիտէ՞ք ինչ, նա ինձ համբուրեց։ Նա ինձ համբուրե՛ց։ Նրա շրթունքները բաց-կարմիր էին, բոլորովին ալ։ Ես սիրում եմ նրան։ Նա ինձ համբուրեց, նա ինձ կախարդեց։ Պատահո՞ղ է, որ ձեր շրթերը դողդողան այնքան սաստիկ, որ դուք չը կարողանաք մի խօսք անգամ ասել։ Սրտիս յուզմունքից ես ամբողջովին դողդողում էի։

«Ես տուն վազեցի և իսկոյն քնեցի։ երեկոյեան դէմ ես արթնացայ։ Հոգիս դողդողում ու թրթռում էր իմ մէջ, և ես սկսեցի գրել։

«Ի՞նչ էի գրում։ Ահա ինչ։

«Վայրի ու զարմանալի մտքերը պաշարել էին ինձ։ Երկինքը բացւել էր։ Հոգուս համար մի տաք, ամառային գիշեր եկաւ։ Հրեշտակն ինձ գինի տւեց, և ես խմեցի կրանիտեայ բաժակից։ Գինին ինձ հարբեցրեց։ Ես չը լսեցի ժամացոյցի ձայնը, չը տեսայ, ինչպէս ժարեց լամպը։

«Աստուած տայ, որ դուք ինձ հասկանաք։ Անցեալ ամբողջ կեանքս վերապրեցի այս գիշեր։ Ես դարձեալ գնում էի փողոցով սիրուհուս հետ։ Բոլորը նրան էին նայում։ Մենք մտանք քաղաքի այգին։ Պատահեցինք Թագաւորին։ Երջանկութիւնից գլխարկս մինչև գետին խոնարհեցրի։ Թագաւորը նայեց սիրուհուս, դիտեց նրան, իսկ նա հպարտ էր ու սիրուն իր վեհ գեղեցկութեամբ։ Մենք դարձեալ քաղաք գնացինք։ Բոլոր դպրոցականները մեզ էին նայում, որովհետև նա

երիտասարդ էր և փայլուն շորեր էր հագել։ Հասնելով կարմիր տանը՝ մենք ներս մտանք։ Ես նրան մինչև սանդուղքի ծայրն ուղեկցեցի և ցանկանում էի ծունկ չոգել նրա առաջ։ Սակայն նա վազվզ փարեց և համբուրեց ինձ։ Այդ օրւանից շատ ժամանակ չի անցել։ Երեկ երեկոյ էր այդ։ Եթե հարցնէք, թե ես ինչ եմ գրել, կասեմ, որ բերկրանքին ու երջանկութեանը ուժգին ու անսասան հիմն եմ երգել։

«Թուում էր, որ բացւած երջանկութիւնն ընկած էր իմ առաջ և վայելուչ վզով ինձ գլխով էր անում, և ժպտում էր, և կամենում էր ինձ մօտենալ»։

«Չէ, իսկապէս ես այլևս ձեզ հետ չեմ ուզում խօսել», բորբոքւած ասաց այն մարդը։ «Ես ձեզ վերջին անգամն եմ զգուշացնում»։

Եօհանը կանգնեցրեց նրան դռան առաջ։

«Մի բոպէ սպասէք։ Գիտէք, արեգակի արտացոլումի պէս մի բան կար ձեր դէմքին։ Երբ դուք շուռ եկաք, ես տեսայ, որ այդ լաւագի լոյսն էր։ Լամպը պայծառ լոյս էր ձգել ձեր ճակատին։ Այժմ դուք, որքան նկատում եմ, այնքան էլ զայրացած չէք։

«Այո, ես բացի պատուհանը, այս պատուհանը, ես բաւական բարձր երգեցի։ Բայց ես բոլորին էլ սիրում եմ եղբօր պէս։ Երբեմն պատահում է, որ մարդու դադողութիւնը մթնանում է։ Ես պարտական էի մտածել, որ դուք դեռ քնած էք»։

«Ամբողջ քաղաքն է քնած դեռ»։

«Այո, դեռ վաղ է։ Ես ուզում եմ ձեզ մի բան նւիրել, չէք վերցնի արդեօք այս, այս իրը։ Արծաթից է շինւած։ Ինձ այս նւիրել են։ Ինձ այս մի փոքրիկ աղջիկ է նւիրել։ Նրան մի անգամ ես ազատել եմ։ Վերցրէք, ի սէր Աստծու։ Բսան գլանակ է տանում։ Ձէք ուզում ընդունել։ Ա՜խ, դուք չէք ծխում։ Թոյլ տւէք ինձ առաւօտեան ձեզ մօտ գալ և արդարանալ ձեր առաջ։ Ես շատ եմ ցանկանում մի բան անել ձեզ համար, ներւում խնդրել ձեզնից»...

«Բարի գիշեր»։

«Բարի գիշեր։ Ես իսկոյն կը պարկեմ, խոստանում եմ ձեզ։ Դուք այլևս մի հնչիւն էլ չէք լսի։ Իսկ ապագայում կաշխատեմ ուշադիր լինել»։

Այն մարդը գնաց։

Յանկարծ Եօհանը դուռը բացեց և նրա յետևից գոռաց.

«Ես վաղը գնում եմ։ Բոլորովին ճիշտ եմ ասում։ Այլևս ձեզ չեմ անհանգստացնի։ Ես գնում եմ։ Բոլորովին մոռացայ, որ այդ ձեզ ասեմ»։

Նա չը գնաց։ Զանազան հանգամանքներ նրան խանգարեցին։ Հարկաւոր էր մի քանի գործ կանոնաւորել, մի բան գնել, վճարել։ Օրն էլ անցաւ, երեկոն էլ։ Ամբողջ օրը նա խելքը կորցրած, այստեղ, այնտեղ էր վազում։ Վերջապէս նա

քաշեց կամերգերի դռան զանգը։ Վիկտորիան տա՞նն է։

Նա տանը չէր։ Եօհանը բացատրեց, որ Նրանք, նա և Ֆրեկէն Վիկտորիան, միևնոյն ա-ւանիցն են։ Եթէ նա տանը լինէր, կը կամենար Նրան տեսնել, տեսնելու թոյլտուութիւն խնդրել։ Նա ցանկանում է բարևները ուղարկել իւրայիններին։ Լա՛ւ։ Եւ նա քաղաք գնաց։ Դուցէ պատահէ Նրան, գուցէ նա կառքով անցնի։ Ամբողջ երեկոն նա թափառեց։ Թատրոնի առաջ նա պատահեց Վիկտորիային։ Բարևեց, ժպտաց։ Բարևեց երկրորդ անգամ։ Վիկտորիան բարևին պատասխանեց։ Նա կամեցաւ մօտենալ Վիկտորիային։ Նրանց բաժանում էր մի քայլ տարածութիւն։ Նկատեց, որ Վիկտորիան մենակ չէր։ Կամերգերի որդին, Օտտօն, Նրա հետ էր։ Օտտօն լեյտենանտի համազգեստով էր։ Եօհանը մտածեց. գուցէ նա գլխով անի ինձ, աչքով նշան տայ։ Բայց Վիկտորիան այլայլած ու գլուխը քարշ արած շտապեց թատրոն։ Կարծես, աշխատում էր թագնըւել։ Կարող էր նրան թատրոնում տեսնել։ Նա տոմսակ գնեց ու ներս գնաց։ Նա գիտէր, որ կամերգերը յատուկ օթեակ ունի։ Այո՛, հարուստներն առանձին օթեակ են ունենում։ Վիկտորիան նստած էր այնտեղ իր փայլուն գեղեցկութեամբ և իր շուրջն էր նայում։ Սրդհօք տեսաւ։ Ջը տեսաւ։

Առաջին գործողութիւնից յետոյ Եօհանը միջանցքում անցաւ նրա կողքով և գլխով բարե-

ւեց Նրան։ Նա նոյն ձևով պատասխանեց և զարմացական հայեացք ձգեց, երբ նրան տեսաւ։

«Ահա այստեղ քեզ ջուր կը տան», ասաց Օտտօն և ցոյց տւեց։ Եօհանը նայեց Նրանց յետևից։ Նրա աչքերի առաջ մլարը պատեց։ Անցնողները զարմանում էին նրա վրայ, հրում էին նրան, բայց նա դեռ կանգնած էր և մեքենայօրէն ներում էր խնդրում։

Վիկտորիան կորաւ նրա աչքերից։ Երբ սա վերադարձաւ, Եօհանը խոր գլուխ տւեց և ասաց.

«Ներեցէք, Ֆրեկէն»։

«Եօհանն է», ներկայացրեց նրան Վիկտորիան։ «Ճանաչո՞ւմ ես»։—«Ա՛յո», պատասխանեց Օտտօն և անփութութեամբ նրան նայեց։

«Դուք, անշուշտ, ուզում էք իմանալ, թէ ձեր ծնողների դրութիւնը ինչպէս է, այնտեղ, տանը, լա՞ւ են, թէ չէ», շարունակեց Վիկտորիան։ Նա ուրախ էր երևում, դէմքն սքանչելի էր։ «Իսկապէս, լաւ չը գիտեմ, բայց կարծեմ, ամէն ինչ լաւ էր։ Հիանալի։ Ես ձեր բարևը կը հաղորդեմ»։

«Շնորհակալ եմ։ Ֆրեկէնը շո՛ւտ է գնալու»։

«Մօտ օրերս։ Ուրեմն նրանց կը բարևեմ»։

Նա գլխով արաւ ու անցաւ։ Եօհանը յետևից նայում էր նրան։ Երբ նա ծածկուեց, Եօհանը դէպի դուռն ուղղուեց։

Յաւերժական թափառում, նեղ, տխուր փողոցներ, վեր ու վար, վեր ու վար—այսպիսի դժւարութեամբ էր աշխատում ժամանակն սպասնել։ Ժամը տասին նա կանգնած էր կամերգերի

դուռը և սպասում էր։ Ներկայացումը վերջացավ։ Դուցէ կարողանայ բանալ նրա կողքի դռնակը։ Գլխարկը վերցնել, դռնակը բանալ և, մինչև գետին խոնարհվելով, բարևել։ Վերջապէս, կէս ժամից յետոյ, Վիկտորիան եկաւ։ Մնայ, արդեօք, դարբասի մօտ կանգնած և նորից յիշեցնի իր մասին։ Նա առանց յետ դառնալու փողոցով դէպի վեր շտապեց։ Նա լսեց, ինչպէս դռները բացւեցին ու նորից փակւեցին։ Այն ժամանակ նա յետ դարձաւ ու տան առաջ սկսեց յետ ու առաջ քայլել։ Նա ոչ ոքի չէր սպասում, ոչ մի գործ չունէր։ Յանկարծ դուռը ներսից բացւեց, և Վիկտորիան փողոց դուրս եկաւ։ Նա գլխաբաց էր, միայն մի շալ էր ձգած ուսերին։ Նա կէս յուզւած, կէս վախեցած ժպտաց ու հարցրեց.

«Դուք այստեղ փայլո՞ւմ էք ու մտածո՞ւմ»։

«Ոչ», ասաց նա։ «Մտածո՞ւմ, ոչ. ես միայն քայլում եմ»։

«Ես տեսայ ձեզ այստեղ ու կամեցայ... Ես իմ պատուհանից տեսայ ձեզ։ Ես իսկոյն պիտի վերադառնամ»։

«Վիկտորի՛ա, շնորհակալ եմ, որ եկաք։ Ես նոր այնպէ՛ս յուսահատութեան մէջ էի։ Այժմ այդ անցաւ։ Ներէք, որ ես թատրոնում բարևեցի ձեզ։ Աւելի վատ դործ կատարեցի, քաշեցի կամերգերի դռան զանգը և հարցրի ձեր մասին։ Ես ուզում էի ձեզ տեսնել և իմանալ, թէ ինչ էք մտածում, ի՞նչ է ձեր կարծիքը»։

«Այո՛», ասաց նա։ «Բայց չէ որ դուք արդէն դիտէք։ Երեք օր առաջ այնքան շատ բան ասացի, որ դուք չէք կարող ինձ չը հասկանալ».

«Բայց և այնպէս ես այդ բոլորին հաւատացած չեմ»։

«Այլևս այդ հարցին չը դառնանք։ Ես բաւական բան ասացի, նոյնիսկ աւելի, քան հարկաւոր էր, և դուք այժմ տանջւում էք։ Ես սիրում եմ ձեզ։ Երեք օր առաջ կատակ չէի անում, այսօր էլ կատակ չեմ անում։ Սակայն շատ բան կայ, որ մեզ բաժանում է։ Ես ձեզ շատ թանկ եմ գնահատում։ Ձեզ հետ աւելի եմ սիրում խօսել, քան մի ուրիշի.. բայց ես այստեղ այլ ևս չը պիտի կանգնեմ, մեզ կարող են պատուհանից տեսնել։ Եօհան, շատ պատճառներ կան, որ դուք չը գիտէք։ Դուք չը պիտի խնդրէք ինձ այսուհետև ասել այն բոլորը, ինչ որ ես մտածում եմ։ Օր ու գիշեր մտածել եմ այդ մասին, բայց այդ անկարելի է»։

«Ի՞նչն է անկարելի»։

«Ամեն ինչ։ Ընդհանրապէս բոլորը։ Լսէք, Եօհան, թողէք ինձ հպարտ լինել, ձեր փոխարէն էլ, իմ փոխարէն էլ»։

«Իհարկէ։ Լա՛ւ, թող այդպէս լինի։ Ուրեմն նշանակում է, որ դուք երեք օր առաջ ինձ խաբում էիք։ Դուք անցնում էիք փողոցով, պատահեցիք ինձ, լաւ տրամադրութեան մէջ էիք և ա՛նա...

Վիկտորիան շուռ եկաւ և ուզում էր առանց դնալ։

«Միթէ ես ձեզ մի բանով վիրաւորեցի», հարցրեց Եօհանը։ Նրա դէմքը գունաթափ ու անճանաչելի էր։ «Ինչո՞ւ պիտի ձեր... կորցնեմ... Այս երկու օրւայ ու երկու գիշերւայ ընթացքում ես որևէ վատ գործ արել եմ»։

«Ո՛չ, ոչ այդ։ Ես նորից այդ մասին էի մտածում. ամեն ինչ կշռեցի։ Դուք չէք մտածում միթէ։ Այդ միշտ էլ անկարելի էր։ Դուք այդ գիտէք։ Դուք թանկ էք ինձ համար, ես ձեզ գնահատում եմ, ես ձեզ յարգում եմ»։

Նա նայեց Եօհանին, որի ժպիտը վիրաւորեց նրան և նա բորբոքած շարունակեց.

«Աստւած իմ, միթէ դուք չէք հասկանում, որ հայրս այդ բանը չի թողնի, ինչո՞ւ դուք ստիպեցիք ինձ այդ ասել։ Դուք պիտէք, թէ ինչ դուրս կը գայ դրանից։ Միթէ ճիշտ չեմ ասում»։

Ընդմիջում։

«Բացի այդ», շարունակեց Վիկտորիան։ «Ուրիշ այդպիսի պատճառներ շատ կան... Ո՛չ, ոչ, այլ ևս թատրոն մի գաք իմ յետևից։ Ես շատ վախեցայ ձեզանից, Այլևս երբէք այդպիսի բան չանէք։

«Լաւ», ասաց նա։

«Ձէք կարող մի կերպ տուն գնալ։ Ես շատ ուրախ կը լինեմ։ Ձեր ձեռքը ոչքան տաք է, իսկ ես դողում եմ։ Է՛, հարկաւոր է տուն գնալ։ Բարի գիշեր»։

«Բարի գիշեր»։

Ցուրտ, մութ գաղտնի փողոցը աւազոտ ծանծաղուտի պէս ձգւում էր հեռու, ձգւում էր անվերջ։ Նա կանգնեց՝ հին, գունաթափ վարդերը վաճառող մանկան մօտ, դէպի նա կուացաւ, ձայն ուեց նրան, մի վարդ վերցրեց և, հինգ կրոնանոց մի ոսկէ դրամ տալով նրան՝ շարունակեց առաջ գնալ։ Շուտով նկատեց, որ դարբասի մօտ հաւաքւած էին մի խումբ երեխաներ։ Տասնամեայ մի մանուկ նստած էր անշարժ ու իր կապոյտ, ծերացած աչքերը մխւանների էր յառել։ Նա դայում էր, թէ ինչպէս են մխւանները խաղում։ Նա ուզէր ներս ընկած այտեր, քառանկիւնի կզակ և դլխին՝ դլխարկի տակի մի կալեկոցեայ, թաւսակ էր դրել։ Նրա մազերը հիւանդութիւնից թափւել էին, ուստի նա կեղծ ծամ էր կրում։ Դուցէ, նրա հոգին էլ էր թառամած։ Եօհանը գնում էր, բայց չէր իմանում, որտե՞ղ է ինքը և ո՞ւր է գնում, միայն տեսած առարկաներն էին վկայում, թէ որ քաղաքամասումն է թափառում։ Սկսեց անձրև գալ, բայց նա այդ ևս չէր նկատում, նոյնիսկ հովանոցը չէր բանում, թէև ամբողջ օրը ձեռքին էր։

Նա մօտեցաւ մի նստարանի ու նստեց։ Անձրևը հեռուհեռու աւելի սաստկանում էր։ Նա մեքենայաբար բացեց հովանոցը և շարունակեց նստել։

Շուտով նրան մի անյաղթելի թուլութիւն պատեց, խաւարն աքօղեց նրա մխքը, աչքերը

փակեցին, դլուխը պտուտեց և նա խորասուզեց քնի մեջ։

Նրան արթնացրեց անցորդի բարձր ձայնը։ Նա վեր կացավ և շարունակեց առաջ գնալ։ Նրա մտքերը պարզեցին, նա յիշեց ամբողջ պատահածը, նույնիսկ այն մանկանը, որին մի վարդի համար հինգ կրոն տվեց։ Նա երևակայեց փոքրիկ մանկան ուրախությունը, երբ նա իր շիլլինգների մեջ այդ հրաշալի դրամը տեսնի։ Այդ 25 հոր չի այդ ոսկեայ հինգ կրոն է։ Գնա, Տերը նրա հետ։

Գուցե արդեն անձրևը ցրեց երեխաների խումբը, և նրանք այժմ խաղում են դարբնոցի տակ, ցատկում են մի ոտքի վրայ, պնդակ են գլորում, իսկ խոպան այլանդակված տասնամեայ ծերունին նստած նրանց է նայում։ Ո՞վ է իմանում, գուցե նա էլ իր սրտում մի ուրախալի բան ունի, գուցե այնտեղ, իր փոքրիկ սենեակում տիկնիկ ունի պահած, գոմում՝ հառլեկին, կամ հոլ։ Գուցե դեռ նա կևանքի ամեն բանից էլ չի զրկվել և նրա մաշած հոգում դեռ վառ յոյսեր կան։

Յանկարծ նրա առջև մի վայելուչ, գեղեցիկ կին յայտնվեց։ Նա ցնցվեց ու կանգ առավ։ Չէ, ծանոթ չէ։ Կինը դուրս եկավ կողքի փողոցից և առաջ շտապեց։ Նա հովանոց չունէր, թեև անձրևը շարունակվում էր։ Ետևանը հասավ այդ կնոջը, նրա երեսին նայեց ու անցավ մոտովը։ Որքան լավն էր նա ու հրեշտակաբար։ Նա բոլորովին թրջված է, կը մրսի, սակայն նա չը համարձակվեց

մոտենալ նրան։ Նա էլ իր հովանին խփեց, որ մենակ այն կինը չը թրջվի։

Կէս գիշեր էր, երբ նա տուն դարձավ։ Նրա սեղանի վրայ մի նամակ էր ընկած։ Այդ մի հրաւիրատոմս էր։ Չեյերները շատ կուրախանան, եթէ նրան վաղը երեկոյ իրանց տանը տեսնեն։ Նա այնտեղ ծանօթ հասարակութիւն կը գտնի և ի մէջի այլոց—կարող է գուշակել, ում։—Վիկտորիային, ամրոցի ֆրեկէնին։ Անկեղծ ողջոյն։

Նա քնեց իր աթոռի վրայ։ Մի քանի ժամից յետոյ արթնացավ։ Բոլորովին սառել էր։ Կամաւինջ ղրուքիամբ նստեց սեղանի մօտ։ Նրա մարմնով մի սառը դող անցավ։ Նա իրան սաստիկ խոնջացած զգաց։ Նա ցանկացավ հրաւէրին պատասխանել, որ չի կարող գալ։ Գրեց և պատրաստւում էր նամակը պօստարկղը ձգել, յիշեց, որ Վիկտորիան հրաւիրեալների թւումն էր։ Այդպէս... Վիկտորիան նրան չի յիշեցրել այդ մասին, նա վախեցել է, որ նա կը գնայ, նա չի ցանկացել նրան հանդիպել կողմնակի մարդկանց ընդհանուր։

Նա նամակը պատռեց, մի ուրիշը գրեց, հրաւէրի համար շնորհակալ եղավ և խոստացավ գնալ։

Ներքին ուժգին յուզումից նրա ձեռքերը դողդողում էին։ Նրան համակեց մի ուրախալի վիշտ։ Ինչո՞ւ չը գնայ։ Ինչո՞ւ պիտի թագնվի։ Բաւական է։

Նա շարունակում էր յուզվել։ Իր պատի օրագրոյցից մի քանի թերթ մի անգամից կտրեց ու

մի շաբթով առաջ ձգեց։ Նա երևակայում էր, որ մի բանի պատճառով ուրախ է, չափազանց հիացած, ուզում էր բաւականութիւն ստանալ... ծխել, աւելի յարմար նստել և հաճոյքի ենթարկուել...

Ծխափողը փչացել էր։ Նա սկսեց դանակը, կամ ունելին որոնել։ Յանկարծ նա ժամացոյցի սլաքը կոտրեց և սկսեց նրանով ծխափողը մաքրել։ Փչացած իրերին նայելը նրան դուր էր գալիս և նա լուռ ծիծաղում էր։ Նա մի այնպիսի բան էր որոնում, որ դարձեալ կարելի լինէր փչացնել։ Ժամանակն անցնում էր։ Ի վերջոյ, առանց իր թաց շորերը հանելու, ընկաւ անկողնի վրայ ու քնեց։ Երբ նա արթնացաւ, արդէն ցերեկ էր։ Անձրևը դարձեալ գալիս էր, փողոցները թաց էին։ Նրա գլխում քաօս կար։ Երազների կտորները խառնուել էին երեկւայ դէպքերի հետ։ Այլևս ջերմ չէր զգում, տաքութիւնը քնած էր։ Նա մի զովութիւն զգաց. կարծես, ամբողջ գիշերը թափառել էր խոնաւ անտառում և այժմ գտնւում էր առւակի ափին։

Դուռը բախեցին։ Պօստի ծառայողը նամակ էր բերել։ Նա բացեց նամակը, նայեց, կարդաց։ Նա դժւարութեամբ էր բովանդակութիւնը հասկանում։ Այդ մի փոքրիկ տոմս էր, Վիկտորիայից։ Նա մոռացել էր յայտնել, որ այսօր երեկոյան գնալու էր Զեյերնների մօտ և ցանկանում էր նրան այնտեղ տեսնել։ Այնտեղ ամեն ինչ լաւ կը բացատրի, կը խնդրի նրան մոռանալ իրեն և ա-

մեն ինչ տանել տղամարդու պէս։ Ներողութիւն, որ վատ թղթի վրայ եմ գրել։ Անկեղծ բարևներս։ Նա գնաց քաղաք թափառելու։ Ճաշեց, տուն վերադարձաւ և գրեց, որ նա այսօր Զեյերների մօտ լինել չի կարող, այլ մօտ օրերս մի ուրիշ անգամ կը մտնի նրանց մօտ, օրինակ հէնց վաղ երեկոյեան։ Եւ նա այս նամակը ուղարկեց սուրհանդակի ձեռքով։

V

Ձրուն եկաւ։ Վիկտորիան տուն գնաց։ Փոքրիկ, խուլ փողոցը իր տնակներով առաջւայ պէս խաղաղ էր։

Գիշերները՝ սկսած աստղերը ծագելուց մինչև արշալոյս, Եօհանի սենեակում ճրագ էր վառւում։ Նա աշխատում էր և մարմնչում։ Նա իր մեծ երկն էր գրում։

Անցնում էին շաբաթներն ու ամիսները։ Նա մենակ էր ու ոչ ոքի չէր ուզում տեսնել։ Նա այլևս Զեյերնների մօտ չէր գնում։

Երևակայութիւնը յաճախ նրա հետ չար խաղեր էր խաղում։ Այդպիսի դէպքերում նրա գրուածքի մէջ անսպասելի ու գործին չը վերաբերող միջադէպեր էին մտնում, որոնք յետոյ նա ստիպւած էր լինում կամ ջնջել, կամ բոլորովին դուրս ձգել։ Այս պատճառով էլ նրա աշխատանքը նկատելի չափով յապաղում էր։

Ցանկարծական մի աղմուկ խաղաղ դիշերին, փողոցով անցնող կառքի թխկոցը նրա մտքերին նոր զարկ էին տալիս ու շեղում նրա մտքի անիւը։

Հեռու այդ կառքից, զգուշացէք։

Ինչո՞ւ, իսկապէս ինչո՞ւ զգուշանալ այդ կառքից։ Նա սլացաւ հեռու։ Դուցէ միւս փողոցն անցաւ։ Սակայն, գուցէ, այդ կառքի առաջ մի մարդ է կանգնած, սիւրտուկով ու գլխարաց։ Կանգնած է նա, դէպի առաջ կռացած, և սպասում է, որ անցնեն իր վրայով, տրորեն իրան, ոչնչացնեն։ Նա ուզում է մեռնել։ Մեզ ինչ, այդ նրա գործն է։ Նա այլևս իր շապիկը չի կոճկում, իր կօշկի թելերը չի կապում։ Ձը կոճկած շապկի տակից երևում է նրա նիհար կուրծքը։ Նա կը մեռնի։

Այդ մարդը վերջին անգամն է ժպտում։ Նա մի տոմսակ է գրում ընկերոջը, մի փոքրիկ խնդիր է անում նրան։ Ընկերը նամակը կ՚ստանայ նրա մեռնելուց յետոյ։ Թիւն ու ստորագրութիւնը ևս գրած են։ Գրած է մեծ ու փոքր տառերով, իսկ գրողը մի ժամից յետոյ այլևս չի լինի։ Զարմանալի է։ Իր անւան տակ նա քաշեց սովորական պոչաւոր գիծը։ Մի ժամից յետոյ նա արդէն մեռած էր... Մի մարդ էլ կար։ Նա մեռնակ պարկած էր իր սենեակում։ Ահա երեսի վրայի երկնագոյն շրջանակը։ Ի՞նչ արած։ Ոչինչ։ Այդ նա է, նա, որ այս ամբողջ անծայր աշխարհում պիտի մենակ մեռնէր։ Նա այդ հասկանում

է, նա մտածում է անսահման։ Արդէն երեկոյ է։ Պատի ժամացոյցը ութն է ցոյց տալիս։ Նա չի հասկանում, թէ ինչու չի խփում ժամացոյցը։ Սլաքն արդէն ութից մի քանի րոպէ անց է ցոյց տալիս։ Խեղճ մարդ... Նրա մտքերն սկսեցին խառնաուզել յաւիտենական քնի մէջ։ Ժամացոյցը վաղուց է խփել, բայց նա այդ չի նկատել։ Պատից քարշ է արած նրա մօր պատկերը։ Այժմ նրան ինչ պէտք է այդ, ինչո՞ւ իրենից յետոյ նա կախած մնայ։ Նրա տանջած հայեացքն ընկնում է սեղանի վրայի ծաղկի անօթին։ Նա մեկնում է ձեռքը և անօթը յատակին ձգում։ Անօթը փշուր-փշուր է լինում։ Նա պատուհանից դուրս է նետում իր սաթէ ծխամորճը։ Այլևս հարկաւոր չէ իրան։ Ինչո՞ւ իրերը մնան, երբ ինքը չի լինելու։ Մի շաբթից յետոյ այդ մարդը մեռաւ։...

Եօհանը կանգնեց սենեակում ու սկսեց քայլել։

Հաւանօրէն հարևանն արթնացաւ, որովհետև խոմփոցը կտրուեց, լսեց հառաչանք, կսկծոտ անբոյս։ Պատուհանի տակ, բարդենիների մէջ քամին էր վշվշում։ Եօհանը մի սարսուռ զգաց։ Հին, սաղարթազուրկ բարդենիները նրան մի մի խենթ ուրուականներ էին թուում։ Հանդուգնաւոր ճիւղերը սղղում էին տան պատի վրայից և սղոցի նման խրթխրթում։ Նա նայեց իր թղթերին և նորից կարդաց։ Երևակայութիւնը նրան նորից հեռու տարաւ։ Նա ինչ գործ ունէր անցնող կառքի ու մահւան հետ։ Նա չէ՞ որ այդպէս էր նկարագրում, կանաչ և ուրախ այդպէս, այն այդպէս, որ ամրոցին

էր կապած, այո, այն այգին էր նկարագրում, հենց այն այգին։ Այժմ այգին դադարկ ու մեռած կը լինի։ Սակայն չէ, այնտեղ ոչ ձիւն կայ, ոչ ձմեռ։ Այնտեղ գարուն է, բուրմունք ու քաղցր քամիներ։ Երեկոյ է։ Խորհրդաւոր լուրը չի շարժւում։ Նրա հարթ մակերևոյթը, կարծես, արձաթից է ձուլած։ Եղրևանին բուրում է։ Ցանկապատը ծածկւած է ծաղիկների կոկոններով, օդն այնքան խաղաղ է, որ լճակի միւս կողմից լսւում են փայտամորիկների կանչերը։ Այգու ծառուղիներից մէկում Վիկտորիան է կանգնած, սպիտակ հագուստով։ Նա քսան տարեկան է։ Նա կանգնած է այգում։ Վիկտորիան ամենաբարձր վարդենուց էլ բարձր է, նա նայում է ջրին ու անտառին, հեռու, քնած լեռներին։ Նա կանաչ այգում մի սպիտակ ոգի է։ Ջանապարհից ոտնաձայն լսւեց։ Նա դէպի կանաչների մէջ թաղւած տաղաւարիկը գնաց և վանդակապատին յենւեց։ Նրա աչքերը ցած էին նայում։ Փողոցով անցնող մարդը գլխարկը վերցրեց և, մինչև գետին խոնարհւելով, բարևեց նրան։ Նա ջուրը նայեց։ Ոչոք չէկար մօտերքում։ Նա մի քանի քայլ դէպի տաղաւարը գնաց։ Այն ժամանակ Վիկտորիան յետ գնաց և ճչաց. «Ո՛չ, ո՛չ», և ձեռքով արեց։

«Վիկտորի՛ա», ասում է նա։ «Ինձ թւում է, որ այն, ինչ որ մի անգամ ասացիր, կատարեալ ճշմարտութիւն էր։ Ես այդ մասին չը պիտի երազեմ, որովհետև այդ անկարելի է»։

«Այո՛», պատասխանեց Վիկտորիան։ «Ինչ

էք կամենում»։ Նա մօտեցաւ Վիկտորիային։ Երանց միայն պատն էր բաժանում։ Նա պատասխանեց.

«Ինչ եմ կամենում։ Տեսնում էք, ուզում եմ այստեղ մի րոպէ կանգնել։ Վերջին անգամ։ Ես ուզում եմ, որքան կարելի է, ձեզ մօտենալ։ Այժմ ես ձեր կողքին եմ»։

Վիկտորիան լռեց։ Անցաւ մի րոպէ։ «Մնա՛ք բարև», ասաց նա՝ նորից մինչև գետին խոնարհւելով։ «Գնա՛ք բարև», պատասխանեց Վիկտորիան և նա՝ առանց յետ նայելու, գնաց...

Նա ինչ գործ ունի մահւան հետ։ Նա ամբոխեց գրուած թղթերը և ձգեց կրակը։ Այնտեղ ընկած էին և ուրիշ թղթեր՝ նրա թռուցիկ, իր ափերից դուրս եկած երևակայութեան պտուղները։ Սրանք էլ պիտի այրւէին։

Եւ նա նորից շարունակեց գրել այն երիտասարդի մասին, որը կանգնած էր ճանապարհին, որը բարևեց և իր վերջին, «միա՛ս բարևն» ասաց, երբ հոսում, անցնում էր նրա վերջին րոպէն։ Իսկ երիտասարդ աղջիկը զարձեալ կանգնած էր՝ սպիտակ զգեստներով։ Նա քսան տարեկան էր։ Աղջիկը չէր ուզում նրան։ Թող այդպէս լինի։ Բայց նա կանգնած էր և կապած այն պատին, որի մէւս կողմը աղջիկն էր ապրում։

Նորից շաբաթներ ու ամիսներ անցան, և գարունն եկաւ։ Ձիւնը հալւեց։ Ամբողջ տարա-

ծուխիւնը զնգում էր աղմկոտ վտակների ձայնից։ Կեանքը խաղում էր արթնացող անտառում, ուր թռչկոտում էին ամեն տեսակ մանր գազաններ, ճուռղում էին թռչուններն՝ իրենց անհասկանալի բարբառներով։ Երկրից թարմ, քաղցր բուրմունք էր բարձրանում։ Եօհանը ամբողջ ձմեռն աշխատում էր։ Անդադար պատին զարնուող բարդենու չոր ճիւղերն օր ու գիշեր հնչում էին նրա ականջին՝ թախծոտ երգեցողութեամբ։ Ի վերջոյ գարունն եկաւ, փոթորիկները խելօքացան, մշտական չրխկոցները խաղաղեցին։ Նա պատուհանը բացեց ու դուրս նայեց։ Թէև կէս գիշեր էր, բայց փողոցում կենդանութիւն էր տիրում։ Պայծառ երկնքում աստղերն էին փայլում և վաղուան համար տաք ու արևոտ օր խոստանում։ Հեռուում քաղաքի աղմուկը խառնուում էր յաւիտենական ձայնի հետ։ Յանկարծ չոգենաւի սուլոցը ճեղքեց օդը։ Գիշերւայ զնացքի աղդանշանն էր այդ, որ գիշերւայ խաղաղութեան մէջ հնչեց, որպէս ազդաղաղի կանչոց։ Այդ սուլոցը Եօհանին ամբողջ ձմեռ իրր աշխատանքի դիմելու նշան էր ծառայել։

Նա փակեց պատուհանը և նորից նստեց սեղանի առաջ, թղթերը հանեց և մի կողմ ձգեց կարդացած գրքերը։ Նա վերցրեց գրիչը։ Նրա մեծ աշխատութիւնը, համարեա, վերջացած էր։ Մնում էր եզրակացութեան գլուխը՝ իրրև հետացող նաւից ուղարկուած մի ողջոյն։ Այդ գլուխն էլ նրա երևակայութեան մէջ պատրաստ էր։ Մեծ ճանապարհի վրայ, պանդոկում մի մարդ է նստած։ Նա

դէպի հեռաւոր երկիրներ է ուղևորուում։ Նա աշխարհում շատ տարիներ է ապրել, նրա մազերն ու մէրուքը սպիտակել էին։ Նայելով նրա ուժեղ և ամուր դէմքին, կարելի էր կարծել, որ նա աւելի երիտասարդ էր, քան թուում էր։

Նրա կառքը կանգնած էր տան առաջ։ Ձին հանգստանում էր։ Կառապանը լաւ տրամադրութեան մէջ էր, որովհետև ճանապարհորդը նրան լաւ վերաբերել էր և գինով հիւրասիրել։ Երբ ճանապարհորդը իր անունը գրեց, կառաւէրը ուրախացաւ և, ի նշան մեծ յարգանքի, խոր գլուխ տւեց նրան։

«Այժմ ամրոցում ո՞վ է ապրում», հարցրեց նա։

«Գնդապետը», պատասխանեց կառաւէրը։ «Նա շատ հարուստ է, իսկ տիրուհին շատ ողորմած ու բարի է դէպի ամենքը»։

«Դէպի ամենքը», քթի տակ փնթփնթաց ճանապարհորդը և տարօրինակ կերպով ծիծաղեց։ «Նշանակում է և դէպի ինձ»։

Նա նստեց, թղթի վրայ մի բան գրեց, վերջացրեց և գրածը կարդաց։ Այդ մի փոքրիկ, թախծոտ ու հանգիստ ոտանաւոր էր, սակայն նրա մէջ դառն վգացմունք էր երևում։ Յետոյ նա ոտանաւորը պատռեց և շարունակեց նստել ու թուղթը պատռտել, ամենամանր կտորների բաժանել։ Դուռը բախեցին։ Դեղին շորերով մի կին ներս մտաւ։ Նա իր երեսի քողը չհա տարաւ։ Այդ ամրոցի տիրուհին էր, Ֆրու Վլկտորիան։ Իր վեհ

գեղեցկութեամբ նա մարդու սէրը էր ծակում։ Ճանապարհորդը ոտի կանգնեց։ Պայծառ կայծակը բոպէաբար այրեց նրա մռայլ հոգին։

«Դուք դէպի ամենքը շատ բարի էք, այդ պատճառով նոյնիսկ ինձ մօտ եկաք», ասաց նա վշտացած։ Վիկտորիան պատասխան չը ուեց, նա լուռ կանգնած էր նրա առաջ և նրան էր նայում։ Նրա նրեսը փայլում էր պայծառութեամբ։

«Ի՞նչ էք կամենում», առաջւայ եղանակով ասաց նա։ «Եկել էք ինձ անցեալի մասին յիշեցնելու։ Բայց այդ արդէն վերջին անգամը կը լինի, ամենայարգելի Ֆրու Վիկտորիա, որովհետև ես ընդ միշտ գնում եմ»։

Երիտասարդ կինը չը պատասխանեց, միայն նրա շրթունքները շարժուեցին։

«Միթէ բաւական չէ՞, որ մի անգամ ես իմ ոչնչութիւնն ու անմտութիւնը խոստովանեցի։ Այդպէս, լսէք, ես այդ երկրորդ անգամ կ՚անեմ։ Ամբողջ էութեամբս ձեզ էի պատկանում, սակայն ես արժանի չէի ձեզ։ Այժմ բաւականն էք։ Դուք ինձ մերժեցիք, դուք ուրիշին առաք», շարունակեց նա աւելի ոգեորւած ու աւելի գառնացած։ «Ես մի վռնիկ արարած էի, բարբարոս, արջ, որին արքայական այգին էին բերել»։ Սակայն ճանապարհորդը չը կարողացաւ տանել, ընկաւ աթոռի վրայ և սկսեց հեկեկալ՝ աղերսելով. «Ա՛լ, գնացէք, ներողութիւն։ Գնացէք ձեր ճանապարհով»։ Երիտասարդ կինը բոլորովին դունատուեց և բառերը հանդարտ ու պարզ արտասանելով՝ ասաց.

«Ես ձեզ սիրում եմ, հասկացէք ինձ։ Չէ որ ես ձեզ, միայն ձեզ եմ սիրում։ Մնաք բարև»։

Դէմքը ձեռքերով ծածկեց և շտապով սենեակից դուրս վազեց...

Նա գրիչը ցած դրեց ու յետ ձգուեց։ Ահա ընկած է նրա գիրքը՝ գրուած թերթերը—իր տասնամեայ աշխատանքը։ Այն միտքը, թէ նա գործը մինչև վերջը տարաւ, նրան մի հանգիստ բաւականութիւն էր պատճառում։ Նա նստած՝ լուսաւորուած պատուհանին էր նայում, իսկ նրա գլխում ազմուկ ու հնչոց կար, և ուղեղը շարունակ աշխատում էր։ Նա սուզուեց իր մտքերի մէջ։ Նրա մտքերը նման էին մի վայրի ու անմշակ այգու, ուր մխում են գետնի գոլորշիները։

Մի գաղտնի, խորհրդաւոր ճանապարհով նա յայտնուեց մի խոր, մեռեալ հովտում, ուր մի կենդանի էակ անգամ չը կար։ Հեռուում ընկած էր մենակ ու մոռացած մի երգեհոն։ Նա մօտենում է նրան ու զննում։ Երգեհոնը հնչում էր՝ արիւնով շաղախւած։ Նա աւելի հեռուն է գնում, մօտենում է դադարկ հրապարակին։ Ամեն ինչ դադարկ էր։ Ոչ մի ծառ չէր երևում։ Ամենաբարակ ձայն անգամ չէր լսւում։ Այդ մեն մենակ հրապարակ էր։ Բայց աւազի վրայ մարդու ոտքի հետքեր էին երևում, և օդում, կարծես, դեռ կախւած էր վերջին, հէնց նոր արտասանած խօսքը։ Նրան մի տարօրինակ զգացում է պատում։ Նրան

վախեցնում են օդում նորից վերակենդանացող բառերը: Նրան ճնշում են: Նա իրանից յեռ է մղում, բայց նրանք նորից մօտենում են... Նրանք այլևս բառեր չէին, այլ ծերունիները... Ծերունիների ամբողջ ամբոխ: Նրանք պարում էին, նա տեսնում էր նրանց: Ինչո՞ւ են պարում նրանք, ինչու նրանց պարի մէջ գէթ մի փոքրիկ կնճռանութիւն չի նկատւում: Նրանցից ցրտութիւն էր փչում: Նրանք նրան չէին տեսնում, որովհետև կոյր էին: Նա բարձր ձայնով կանչում է նրանց, բայց մեռելները նրան չեն լսում: Նա դէպի Աբևելը է գնում, արեգակի մօտ, և մօտենում է սարին: Մի ձայն է լսւում:

«Դու սարին մօտեցար»:

«Այո» պատասխանում է նա: «Ես կանգնած եմ լերան մօտ»:

Ձայնը շարունակում է. «Այդ իմ ոտքերն են: պարկած եմ՝ աշխարհի ծայրին կապած: Եկ և առաջաիր ինձ: Եւ այն ժամանակ նա ուղեւորւում է դէպի աշխարհի ծայրը: Մի մարդ կանգնած է կամուրջի վրայ և պահպանում է նրան: Նա սուրբերներն է հաւաքում: Այդ մարդը մուշկհայ է: Նա կամնում է նրա սուրերը դողանալ: Եօհանը սարսափում է, երբ տեսնում է այդ մարդուն: Նա նրա վրայ թքում է և սեղմած բռունցքներով սպասում: Սակայն միւսը անշարժ է մնում, իր սպասողական դրութեամբ:

«Շրջւիր», մի ձայն է լսւում նրա յետևից: Նա շրջւում է և իրանից քիչ հեռու տեսնում է

մի գլուխ, որը ճանապարհով սահում էր և նրան ճանապարհ ցոյց տալիս: Այդ մի մարդկային գլուխ էր և ժամանակ առ ժամանակ լուռ ու անձայն ծիծաղում էր: Նա հետևում էր նրան: Գլուխը օր ու գիշեր սահում էր, և նա շարունակում էր գնալ:

Ծովափին գլուխը ծածկւում է աւազի տակ ու անհետանում: Նա էլ ծովն է գնում ու սուզւում: Նա կանգնում է մեծ դռների առաջ ու տեսնում է մի հսկայ, հաչող ձուկը: Ձուկը բաց ունէր պարանոցի վրայ և շան պէս հաչում էր: Ձկան միւս կողմը կանգնած էր Վիկտորիան: Նա ձեռքերը դէպի Վիկտորիան է մեկնում: Վիկտորիան մերկ էր, ժպտում էր, և քամին ծածանում էր նրա մազերը: Նա կանչում է Վիկտորիային, բայց լսում է իր սեպհական ձայնը և արթնանում է:

Եօհանը վեր կացաւ, մօտեցաւ պատուհանին: Բոլորովին լոյս էր: Նա փոքրիկ հայելուն է նայում, որ կախւած էր պատուհան շրջանակից, և տեսնում է, որ իր կոպերը կարմրել են: Նա լամպը հանգցնում է և ցերեկւայ մոխրագոյն լուսով մի անգամ էլ կարդում իր գիրքը: Ապա պարկում է:

Նոյն օրը ճաշին Եօհանը վճարեց սենեակի վարձը, ձեռագիրը տւեց խմբագրատուն և հեռացաւ քաղաքից: Նա գնաց արտասահման: Ոչոք չիմացաւ, որտեղ էր նա յատկապէս:

VI

Մեծ երկը լույս տեսաւ։ Այդ տրամադրութիւնների, տեսիլների, ձայների մի փոքրիկ, հընչուն աշխարհ էր, մի ամբողջ թագաւորութիւն։ Առնում էին ու կարդում։

Անցաւ մի քանի ամիս։ Երբ աշունն եկաւ, Եօհանը մի նոր գրուածք վերջացրեց։ Այժմ ինչ կ'ասեն։ Նրա անունը բոլորի շրթների վրայ էր, նա երջանիկ էր։

Վերջին երկը հայրենիքից հեռու էր գրուած։ Նրանից հանգստութեան շունչ էր բուրում, և նա գինու պէս թունդ էր։

Թանկագին ընթերցող, այդ մի պատմուածք էր Դիդերիխի և Իսելինի մասին, գրուած էր լաւ ու անհոգ ժամանակ, երբ ամեն ինչ դիւրաւ տանելի էր, գրուած էր ամենալաւ դիդաւորութեամբ դէպի Դիդերիխը, որին Աստուած սիրով հարուցած...

Եօհանն արտասահմանում էր։ Ոչոք չը գիտէր, որտեղ է նա։ Անցաւ մի տարուց աւելի, նախ քան մէկն իմացաւ այդ մասին։

«Կարծես, դուռը թակեցին», ասաց մի անգամ երեկոյան ծերունի Ջրաղացպանը։ Նա ու նրա կինը հանգիստ նստել ու ականջ էին դնում։ «Չէ, ոչինչ չի լսուում», ասաց կինը։ «Արդէն ժամը տասն է, շուտով գիշեր կը լինի»։

Անցաւ մի քանի րոպէ։ Յանկարծ, կարծես, սիրտ առնելով ուժգին ու հանգիստ կերպով դուռը թակեցին։ Ջրաղացպանը բացեց դուռը։ Նրա առաջ կանգնած էր ամրոցի ֆրեկէնը։

«Մի վախենաք, ես եմ», ասաց նա՝ ամաչկոտ ձայնով։ Նա ներս մտաւ։ Նրան աթոռ առաջարկեցին, բայց նա չընստեց։ Նա գլխին միայն մի շարֆ էր ձգել, իսկ ոտներին ցածրիկ կօշիկներ կային, թէև դեռ գարուն չէր և եղանակը խոնաւ էր։

«Ես ուզում եմ ձեզ նախազգուշացնել, որ գարնանը լեյտենանտը գալու է», ասաց նա։ «Լեյտենանտը իմ փեսացուն է։ Նա հաւանօրէն անտառը կը գայ վայրի կացար որսալու։ Այդ մասին էի ուզում ասել ձեզ, որ չը վախենաք»։

Ջրաղացպանն ու իր կինը զարմացած նայում էին ֆրեկէնին։ Առաջ նրանց չէին նախազգուշացնում, երբ քաղաքից հիւրեր էին գալի և անտառում ու մարգագետիններում որս էին անում։ Նրանք իրանց խորին շնորհակալութիւնը յայտնեցին։

Վիկտորիան դարձաւ դէպի դուռը։ «Ես միայն այդ էի ուզում ասել։ Ես կարծում էի, որ դուք արդէն ծերացել էք և, լաւ կը լինի, որ ձեզ նախազգուշացնեմ»։

Ջրաղացպանը պատասխանեց». Շնորհակալ ենք ձեզնից, ֆրեկէն։ Բայց ձեր ոտներն ու փոքրիկ կօշիկները թրջել էք»։

«Չէ, ճանապարհը չոր էր», ասաց նա։ «Միևնոյն

նոյն է, ես այս կողմն էի դալիս։ Մնաք բարև»։

«Գնաք բարև»։

Նա քաշեց հանապակը և ուզում էր դուրս գնալ, սակայն յետ դարձաւ և հարցրեց.

«Եօհանի մասին ոչինչ չէ՞ք լսել»։

«Ո՛չ։ Մենք նրա մասին ոչինչ չենք լսում։ Շնորհակալ ենք, որ նրա մասին հարցնում էք։ Ո՛չ, ոչինչ չը գիտենք»։

«Գուցէ նա շուտով կը գայ։ Կարծում էի, որ նրանից տեղեկութիւն ստացած կը լինէք»։

«Ոչ։ Անցեալ գարնանից՝ նրանից տեղեկութիւն չենք ստանում։ Նա չէ՞ որ օտար երկրում է»։

«Այո, օտար երկրում է։ Այնտեղ լաւ է նրա համար։ Ինքն էլ է գրում, որ լաւ ու անհոգ կեանք է անցնում։ Նշանակում է, նա դոհ է»։

«Մ՛ա, Աստուած տայ, որ այդպէս լինի։ Մենք նրան սպասում ենք։ Նա մեզ ոչինչ չի գրում, ոչ ոքի էլ չի գրում։ Մենք նրան միշտ սպասում ենք։

«Հաւանական է, որ նրա համար այնտեղ աւելի լաւ է, եթէ այդքան քիչ հոգս ունի։ Այո, այո։ Այդ նրա գործն է։ Ես կամեցայ իմանալ, թէ նա գարնանը գալու է տուն։ Դարձեալ մնաք բարև»։

«Գնաք բարև»։ Ջրաղացպանը կնոջ հետ նրա յետևից դուրս եկաւ։ Նրանք տեսան, թէ նա ինչպէս դէպի ամրոցը թեքուեց և գլուխը բարձր բռնած՝ գնաց։ Նա քայլում էր ճանապարհի ձախ փոսերի միջով և կեղտոտում իր մանրիկ բաշմակները։

Մի քանի օրից յետոյ Եօհանից նամակ եկաւ։ Եթէ ամէն բան յաջող գնայ, նա մի ամսից յետոյ իր նոր աշխատութիւնը կը վերջացնի և տուն կը գայ։

Նա իր ամբողջ ժամանակը լաւ է անցրել։ Նրա նոր երկը շուտով պատրաստ կը լինի։ Նրա մաքերը վխտում են համաշխարհային կեանքի մէջ։

Ջրաղացպանը գնաց ամրոցը։ Ճանապարհին նա մի թաշկինակ գտաւ, որը, ըստ երևոյթին, վիկտորիայինն էր։ Հաւանօրէն նա երեք օր առաջ երկոյեան էր վայր ձգել։

Ֆրեկէնը վերևում, իր սենեակումն է։ Սակայն սպասուհին նրան կը յայտնէ։ Ի՞նչ կայ։ Սակայն ջրաղացպանը ցանկանում է անձամբ խօսել։ Աւելի լաւ է, սպասի։ Վերջապէս Ֆրեկէնն եկաւ։

«Լսեցի, որ կամենում էք ինձ հետ խօսել», ասաց նա բանալով հարևան սենեակի դուռը։

Ջրաղացպանը մօտեցաւ, թաշկինակը նրան տուեց և ասաց.

«Մենք Եօհանից նամակ ստացանք»։

Մի վայրկեան Ֆրեկէնի դէմքին փայլեց մի պայծառ ուրախութիւն։

Մի կարճ ակնթարթ միայն։ Նա պատասխանեց։

«Շնորհակալ եմ։ Այո, այս իմ թաշկինակն է»։

«Նա կը գայ», շարունակեց Ջրաղացպանը, համարեա, շշնջալով։ Ֆրեկէնի դէմքը սաւը արտայայտութիւն ստացաւ։

«Զրաղացպանն, բարձր ասէք, ով պիտի գայ»։

«Եօհանը»։

«Եօհանը, այո՛։ Է, ինչ անենք որ»։

«Ա՜խ, չէ որ... ես կարծում էի, որ այդ հարկաւոր է ասել ձեզ։ Կնոջս հետ խօսեցինք, որ այդպէս աւելի լաւ կը լինի։ Չէ որ, երկու օր առաջ հարցնում էինք, թէ նա գարնանը տո՞ւն կը գայ։ Այո՛, կը գայ»։

«Իսկ դուք շա՜տ ուրախ էք։ Ե՞րբ կը գայ»։

«Մի ամսից յետոյ»։

«Այդպէ՛ս։ Ուրիշ բան էլ չ՚ք ասում։ Ուրիշ ոչի՞նչ»։

«Այո՛, ոչինչ։ Մենք կարծում էինք, որովհետև դուք հարցնում էիք... Ո՛չ, էլ ոչինչ չէ հարկաւոր, միայն այդ էի ուզում ասել»։

Զրաղացպանը դարձեալ ձայնն իջեցրեց։ Վիկտորիան դուրս եկաւ նրան ուղեկցելու։ Միջանցքում պատահեցին նրա հօրը, որի մօտով անցնելիս, Վիկտորիան ասաց բարձր ու անտարբեր ձայնով.

«Զրաղացպանն ասում է, որ իր որդին շուտով վերադառնալու է։ Դու Եօհանին յիշո՞ւմ ես»։

Զրաղացպանը ամրոցի դարբասից դուրս եկաւ՝ ինքն իրան խօսք տալով, որ այլևս չըլիմարանայ, կնոջը չըլսի, եթէ սա նորից սկսի իր ծածուկ դիտաւորութիւնների մասին պատմել։ Նրան ցոյց կը տայ։

—

Լճի մօտ մի վայելուչ անձնեի կար։ Մի ժամանակ նա ուզում էր կարել այդ ծառը և կարթի կոթ շինել։ Այն ժամանակից շատ տարիներ են անցել, և այդ ծառի հաստութիւնը նրա ձեռքից աւելի է։ Նա զարմացած ծառին նայեց ու առաջ գնաց։ Աւազակի մօտ ձարխոտի մի անցանելի թաւուտ էր աճել, մի ամբողջ անտառ, որի միջով ոլոր-մոլոր անցնում էին կենդանիների ոտատեղերից կազմուած կածանները, որոնք կիսով չափ ծածկուած էին ձարխոտի քարշ ընկած տերևներով։

Առաջւայ պէս ոտքերով ու ձեռքերով ճեղքելով ձարխոտը՝ նա անցաւ թաւուտի միջով։ Միջատները ու զեռուները նրա դանդաղ քայլերից փախչում էին։ Գրանիտեայ քարահանքի մօտ նա վիշտ թռիներ, մանուշակներ և սպիտակ անեմոններ գտաւ։ Նա սկսեց հաւաքել։ Այդ սիրուն, հաբաղատ բուրմունքները նրան փոխադրեցին հեռաւոր անցեալի օրերը։ Հեռու կապոյտում երևում էին հարևան շէնքերի բարձր մասերը։ Լճի միւս կողմում կկուն էր կանչում։ Նա նստեց ու սկսեց ինչ որ մեղեդի երգել։ Յանկարծ մի ոտնաձայն լսեց։ Արեգակը դէպի արևմուտք էր թեքւում։ Երեկոյ էր, բայց տաքութիւնը դեռ թրթռում էր օդում, ջրերն ու անտառները հանդըստանում էին անվերջ խաղաղութեան մէջ։

Նա նկատեց մի կանացի կերպարանք, որը կածանով դէպի քարահանքն էր բարձրանում։ Այդ Վիկտորիան էր։ Նա ձեռքին բռնած ունէր մի

զամբիւղ։ Եօհանը վեր կացաւ, գլխարկը վերցրեց, բարևեց և ուզում էր գնալ։

«Ես չէի կամենում ձեզ խանգարել», ասաց Վիկտորիան։ «Ես ցանկանում էի միայն ծաղիկ քաղել»։ Նա չը պատասխանեց։ Նա նոյնիսկ գլխի չը ընկաւ, որ նրա պարտիզում ամեն տեսակ ծաղիկներ կան։

«Ես թէև զամբիւղը վերցրի, բայց դուցէ ոչինչ չը գտնեմ։ Ինձ ծաղիկներ են հարկաւոր այն հիւրերի համար, որոնք շուտով մեզ մօտ են գալու»։

«Ահա սպիտակ անեմոններ ու մանուշակներ», ասաց նա։ «Այնտեղ վերևը գայլուկ կայ, բայց հաւանական է, ծաղկած չը լինի, դեռ շուտ է»։

«Դուք այժմ առաջւանից աւելի գունատ էք», նկատեց Վիկտորիան։ «Արդէն երկու տարի է անցել այն ժամանակից։ Լսել եմ, որ դուք արտասահման էիք գնացել։ Ես կարդում էի ձեր գրւածքները»։

Բայց նա ոչինչ չը պատասխանեց։ Թւում էր, որ հարկաւոր է ասել. «Այո, բարի երեկոյ, ֆրեկէն», և գնալ։ Նրանից մինչև հեռանալ քարը մի քայլ էր մնում և ապա մի քայլ մինչև Վիկտորիան։ Այդ պատճառով նա կարող էր մի կողմ քաշւել, այդ շատ բնական կը լինէր։ Վիկտորիան հէնց նոյն ճանապարհի վրայ էր կանգնած։ Նա դեղին շորեր էր հագել, կարմիր գլխարկ ծածկել։ Նա զարմանալի ուղեցիկ էր։ Նրա վիզը բաց էր։

«Ես ձեր ճանապարհը կտրել եմ», ցած ձայնով շշնջաց նա։ Նա իր ամբողջ կամքը լարեց, որ իր յուզմունքը ծածկի։ Մի քայլ էր բաժանում նրանց։ Վիկտորիան կանգնել էր և չէր թողնում նրան անցնել։ Նրանք միմեանց աչքերի էին նայում։ Յանկարծ Վիկտորիան յուզւեց, աչքերը ցած ուղղեց և մի կողմ քաշւեց։ Նրա դէմքին անվճռականութիւն էր երևում, բայց նա ժպտում էր։

Նա մօտեցաւ Վիկտորիային ու կանգ առաւ։ Նրան զարմացրեց Վիկտորիայի թախծոտ ժպիտը։ Նրա սիրտը բուռն թափով դէպի Վիկտորիան էր ձգտում։ Նա ասաց, ինչ որ այդ րոպէին միտքն ընկաւ։ «Այո, դուք, իհարկէ, այն օրւանից յետոյ մի քանի անգամ քաղաք գնացիք։ Այն ժամանակից... Ա՛խ, նոր յիշեցի, որ այնտեղ, ձեր դրօշաձողի մօտ, շատ ծաղիկ կայ»։ Վիկտորիան դէպի նա դարձաւ և զարմացած նկատեց, որ նրա երեսը շատ գունատ ու յուզւած էր։

«Երեկոյան մեզ մօտ չէ՞ք գայ», ասաց Վիկտորիան։ «Իհարկէ, եթէ ցանկանում էք մեր հասարակութեան մէջ լինել։ Մօտ օրերս քաղաքից մեզ մօտ հիւրեր են գալու», շարունակեց նա, և նրա երեսը նորից շառագունւեց։ «Ես կրկին կը յայտնեմ, թէ դուք յատկապէս երբ գաք։ Կը գա՞ք»։

Նա չը պատասխանեց։ Նրա համար այդ հասարակութիւնը գոյութիւն չ'ունէր։ Նա ամրոցին չէր պատկանում։

«Մի՛ հրաժարւէք։ Հաւատացնում եմ, որ ձեզ համար շատ հետաքրքիր կը լինի։ Ես դիտմամբ ձեզ համար մի սիւրպրիզ եմ պատրաստել»։

Լուսթիեն։

«Այլևս դուք ոչնչով չէք զարմացնի ինձ», պատասխանեց նա։ Վիկտորիան կծեց իր շրթունքը։ Նրա երեսով մի յուսահատական ժպիտ անցավ։

«Ինձնից ինչ էք ուզում», հազիւ լսելի ձայնով պատասխանեց Վիկտորիան։

«Ոչինչ չեմ ուզում, ֆրեկէն Վիկտորիա։ Ես այստեղ նստած էի և ուզում էի ձեզ ազատել իմ ներկայութիւնից»։

«Ա՜խ, այո, ես տուն էի գնում։ Ես այսօր ամբողջ օրը թափառում էի անտառում և վերջապէս այստեղ հասայ։ Ես կարող էի դէպի վեր գնալ, առաւելի ուղղութեամբ, ուրիշ ճանապարհով և այն ժամանակ այստեղ չէի լինի»։

«Թանկագին ֆրեկէն, տեղն իմը չէ, այլ՝ձերը»։

«Եօհան, ես մի անգամ սաստիկ ցաւ եմ պատճառել ձեզ, այժմ ես կամենում եմ սխալս ուղղել։ Ես, իսկապէս, ձեզ համար սիւրպրիզ եմ պատրաստել, ես կարծում եմ... այսինքն յոյս ունեմ, որ այդ կ'ուրախացնէ ձեզ։ Աւելի բան ասել չեմ կարող, բայց այս անգամ կը խնդրէի ձեզ՝ գալ»։

«Կը գամ, եթէ այդ ձեզ որոշ բաւականութիւն է պատճառում»։

«Այո, շնորհակալ եմ ձեր սիրալիրութեան համար»։

Նա անտառը մտաւ, ապա յետ դարձաւ ու նայեց։ Վիկտորիան զամբիւղը դրել էր կողքն ու նստել։ Սակայն նա տուն չը գնաց, այլ շարունակեց անտառում թափառել։ Հազարաւոր մտքեր էին անցնում նրա գլխով։ Սիւրպրիզ։ Երբ Վիկտորիան այդ մասին ասաց, նրա ձայնը դողդողաց։ Նրա հոգին լցած էր ջերմ, թրթռուն երջանկութեամբ։ Ֆայլելիս զգում էր, որ ոտները գետնին չէին կպչում։ Այդ մի պատահականութիւն էր, որ Վիկտորիան այսօր սպիտակ զգեստներ էր հագել։ Նկատեց, որ նրա մատին մատանի ևս չը կար։ Անցաւ մի ժամ։ Նրան շրջապատել էին անտառից ու մարգագետիններից բարձրացող գոլորշիները, որոնք նրա սիրտն ու ուղեղն էին թափանցում։ Նա նստեց, ընկաւ մէջքի վրայ, ձեռքերը գլխի տակ դրեց ու լսում էր, ինչպէս լճակի միւս կողմում կանչում էր կկուն։ Օդում հնչում էր թռչուններուի զարմանալի երգեցողութիւնը։

Նա մի անգամ էլ վերայիշեց ամբողջ պատահածը, ապրեց այդ անցեալ դէպքերով։ Երբ Վիկտորիան նրա մօտ, քարտահանքը, բարձրացաւ ու կանգնեց նրա առաջ, նա իր դէմքին շորերով, պայծառ-կարմիր գլխարկով նմանում էր քարից քար ճախրող թիթեռնիկի։

«Ես չեմ կամենում խանգարել ձեզ», ասաց Վիկտորիան և իր բաց կարմիր ժպիտով ժպտաց։ Նրա փայլուն դէմքից աստղեր էին թափւում։ Նրա վզի վրայ նշմարւում էին բարակ, երկնագոյն երակները, իսկ աչքերի տակի մի քանի գարնանային պեպենները նրան տաք երփնաւորուած էին տեսել։ Նա քանի տարեկան էր։

Սիւրպրիզ։ Ի՞նչ է կամենում նա ասել։ Գու-

ցէ նա ցանկանում է ցոյց տալ նրա գրւածքները —երկու, կամ երեք հատորով—և ուրախացնել նրա-նով, որ գնել է ու թերթերը կարել։ Ուշադրու-թեան մի փոքրիկ նշան, ընկերական մխիթա-րանք։ Խնդրեմ, չ'արհամարէք այդ։

Նա յանկարծակի ցատկեց և կանգնեց։ Վիկ-տորիան վերադարձաւ դատարկ զամբիւղը ձեռքին։

«Դուք ծպիրկ չը գտաք», ասաց նա մեքե-նայաբար։

«Ո՛չ։ Ես չէի էլ որոնում, այլ միայն այնտեղ նստած էի»։ Եօհանը շարունակեց.

«Ա՜խ, այո, յիշեցի, թէ ինչ պիտի ասէի ձեզ։ Ի սէր Աստծու, չը կարծէք, թէ դուք ինձ որևէ տանջանք էք պատճառել։ Դուք ոչ մեղք ու-նէք, որ քաւէք, և ոչ էլ որևէ թիւրիմացութիւն կայ, որ ընկերական ծառայութեամբ հարթէք։

«Մի՛թէ», ասաց նա սարսափահար և շարու-նակեց մտածել ու նրան նայել։ «Մի՛թէ, ես կար-ծում էի, որ այն անգամ... Ես չեմ ուզում, որ դուք դէպի ինձ միշտ թշնամութիւն, չարութիւն տածէք այն բանի համար, ինչ որ այն ժամա-նակ պատահեց»...

«Ձէ։ Ես այդպիսի բան չեմ զգում»։ Վիկ-տորիան նորից խորասուզւեց իր մտքերի մէջ. յանկարծ նա ցնցւեց։

«Լաւ» ասաց Վիկտորիան։ «Այդ պատճառով ես ցանկանում էի իմանալ։ Ուրեմն այդ ձեզ վրայ այնքան էլ ուժեղ տպաւորութիւն չի արել... Այդ-պէս։ Դէ այլևս այդ մասին չը խօսենք»։

«Այո, չը խօսենք։ Ձեզ համար այդ միևնոյն է, դուք դէպի իմ տպաւորութիւնները անտարբեր էք այժմ, անտարբեր էիք և առաջ։

«Մնաք բարև», ասաց Վիկտորիան։ «Մնաք բարև առ այժմ»։

«Գնաք բարև» ասաց նա։

Իւրաքանչիւրը գնաց իր ճանապարհով։ Եօ-հանը կանգնեց ու յետ նայեց։ Վիկտորիան հե-ռանում էր։ Եօհանը ձեռքը մեկնեց դէպի նա և սկսեց քաղցր խօսքեր շշնջալ. «Ես դէպի ձեզ դառ-նութիւն չեմ զգում, ոչ, ոչ, չեմ զգում։ Ես ձեզ սիրում եմ... Վիկտո՛րիա»... կոչեց նա։

Վիկտորիան այդ լսեց, ցնցւեց, նայեց ու շարունակեց դէպի հեռուն գնալ։

Անցաւ մի քանի օր։ Եօհանը սաստիկ անհան-գիստ էր, չէր կարողանում ոչ աշխատել, ոչ քնել։ Նա, համարեա, ամբողջ օրն անտառումն էր։ Նա բարձրանում էր բլուրը, որ ամբողջապէս սոճի ծառերով էր պատած, և ուր դրօշակաձողն էր տնկած։ Բլուրի, ինչպէս և ամբողջ կլոր աշտա-րակի վրայ դրօշակ կար։ Եօհանը առանձնապէս յուզւում էր։ Ամբողջում ռօնական պատրաստու-թիւն էին տեսնում, հիւրերին էին սպասում։

Կէսօրը խաղաղ ու շոգ էր։ Առւակը, իբրև մի զարկերակ, անցնում էր այրող շրջակայքով։ Շոգենաւը՝ ծուխծոցի մակերևոյթի վրայ սպիտակ շերտեր թողնելով, մօտենում էր ափին։ Ամբողջ բակից դուրս եկան չորս կառք և դէպի նաւահան-գիստն ուղեւորւեցին։

Շոգենաւը հասաւ ափին։ Նաւից իջան մի քանի տղամարդ ու կին և տեղաւորուեցին կառքի մէջ։ Ամրոցից որոտացին հրացանների ձայները։ Երկու մարդ, որ կանգնած էին աշտարակի վրայ, լցնում էին որսորդական հրացաններն ու արձակում, լցնում ու արձակում։

Նրանք 21 անգամ արձակեցին։ Կառքերն ամրոցին մօտեցան, և մեծարանքը դադարեց։

Այո, այո, անկասկած ամրոցում ոճն էր։ Ի պատիւ հիւրերի ծածանում էին դրօշակները, հնչում էին ողջոյնները։ Կառքերում նստած էին նաև մի քանի պինուորականներ, դուքս, լեյտենանտ Օտտօն էլ էր նրանց մէջ։

Եօհանն իջաւ բլուրից ու գնաց տուն։ Ճանապարհին նրան կանգնեցրեց ամրոցից ուղարկուած մարդը, որ Վիկտորիայից նամակ էր բերել։ Նա նամակը գլխարկի մէջ էր դրել։ Պէտք էր նամակին պատասխանել։ Եօհանը բարձրաձայն սրտով բաց արեց նամակն ու կարդաց։ Վիկտորիան ամենասիրալիր դարձուածներով հրաւիրում էր նրան։ Նա շատ էր խնդրում, գոնէ այս անգամ գալ։ Նամակբերի հետ պատասխանի էր սպասում։

Հրաշալի, անսպասելի երջանկութիւն։ Աբիւնը խփեց նրա գլուխը, և նա նամակբեր մարդուն պատասխանեց, որ շատ շնորհակալ է և իսկոյն կը գայ։ «Բարի եղէք հաղորդել իմ պատասխանը», աւելացրեց նա, մի շատ խոշոր դրամ դրեց նրա բուռը և շտապեց դէպի տուն, որ հագնուի։

VII

Եօհանի մէջ առաջին անգամ ոգեը ամրոցի շէմքը դրեց և բարձրացաւ երկրորդ յարկը։ Ներսից լսւում էր բազմաթիւ ձայների թնդիւնը։ Նրա սիրտը ուժգին բաբախում էր։ Նա դուռը բախեց ու ներս մտաւ։

Դեռ չը ծերացած տանտիրուհին դիմաւորեց նրան և սիրալիր սեղմեց նրա ձեռքը։

«Շատ ուրախ եմ, ցանկալի տեսութիւն։ Նա Եօհանին յիշում է, երբ սա փոքր էր,—իսկ այժմ նա մեծ մարդ է»... Կարծես, նա ուզում էր մի քան էլ աւելացնել, երկար ժամանակ բռնել էր նրա ձեռքը և փորձող հայեացքով նրան էր նայում։

Մօտեցաւ ամրոցատէրը և նոյնպէս սեղմեց նրա ձեռքը, ասաց, ինչ որ կինն էր ասել. որ նա մեծ մարդ է, ոչ թէ բառացի իմաստով, այլ նշանաւոր մարդ է»։

Շատ դուրալի էր։

Նրան ներկայացրին բոլոր տղամարդկանց ու կանաց. շքանշաններով զարդարուած պարոն կամերգերին, նրա կնոջը, հարեան կալւածատիրոջը, Օտտօ-լեյտենանտին։ Վիկտորիային նա դեռ չէր տեսել։ Ինչ յետոյ դուրս եկաւ Վիկտորիան՝ գունատ ու անվճռական դէմքով։ Նա մի երիտասարդ աղջկայ ձեռքից բռնած բերում էր։ Նրանք անցան դահլիճով, բոլորին բարե-

ւեցին, ամենքին մի սիրալիր խօսք ուղղեցին։ Եօհանի առաջ նրանք կանգ առան։ Վիկտորիան ժպտալով ասաց. «Նայէք, ահա Կամիլլան, միթէ սա սիւրպրիզ չէ։ Չէ՞ որ դուք ծանօթ էք։ Նա քիչ կանգնեց, երկուսին էլ նայեց և դահլիճից դուրս եկաւ։ Եօհանն սկզբում անշարժ կանգնած էր։ Ահա սիւրպրիզը։ Վիկտորիան ընկերաբար աշխատում էր իր տեղն ուրիշին տալ։

Լսում էք, դուք։ Եկէք ու միմիանց առէք։ Կատարեալ գարուն է, արեգակը փայլում է։ Պատուհանները բացէք և թողէք բուրմունքը ներս թափւի։ Սարեակները ճուռղում էին կեչիների կատարներին։

Ինչո՞ւ իրար հետ չէք խօսում։ Ծիծաղէք, ծիծաղէք։

«Այո, մենք ծանօթ ենք», ասաց Կամիլլան։ «Ինձ դուք մի անգամ այս կողմերում չըլից ազատել էք։

Կամիլլան մի նորհաս, ուրախ, շիկահեր աղջիկ էր։ Նա կարմիր-վարդագոյն շորեր էր հագել։ Նա տասնեօթ տարեկան էր։ Եօհանը կատակում էր ու առաջները սեղմած ծիծաղում։ Կամիլլայի ուրախ շատախօսութիւնը քիչ-քիչ Եօհանին թարմացրեց ու հանգստացրեց։ Նրանք զրուցում էին, ու Եօհանի սիրտը հանգստանում էր։ Կամիլլան դեռ մանկական հասակից սովորութիւն ունէր՝ լսելիս գլուխը մի կողմ թեքել։ Եօհանն այդ պիտէր, սակայն նա սիւրպրիզ էր նրա համար։ Վիկտորիան նորից մտաւ սենեակը, լեյտենանտի ձեռքը

բռնեց, նրան Եօհանի մօտ տարաւ ու ասաց. «Դուք չէ՞ որ Օտտօի հետ ծանօթ էք, նա իմ փեսացուն է։ Հաւանական է, որ դուք նրան յիշում էք»։

Տղամարդիկ յիշում էին միմիանց։ Նրանք մի քանի անհրաժեշտ խօսքեր ասացին, անհրաժեշտ ողջոյնը տւին ու բաժանւեցին։

Եօհանն ու Վիկտորիան մենակ մնացին։

Եօհանն ասաց. «Այդպէս, ա՛յդ էր սիւրպրիզը»։

«Այո», պատասխանեց նա անհամբեր ու զրգռւած։

«Ես ուզում էի ձեզ համար ամենալաւ բանն անել, ինչ որ կարող էի։ Մի յամառէք, աւելի լաւ է, շնորհակալ լինէք։ Նկատեցի, որ ուրախացաք»։

«Շնորհակալ եմ, ճիշտ է, ես ուրախացայ»։

Եօհանին պատից մի անսահման յուսահատութիւն։ Նա մեռելի գոյն ստացաւ։ Եթէ Վիկտորիան նրան երբևէ ցաւ էր պատճառել, այժմ առաւտւթեամբ վարձատրեց, իր սխալն ուղղեց։ Նա անկեղծ շնորհակալ էր նրանից։

«Նկատում եմ, որ այսօր մատանի ունէք։ Այդ այլևս մի հանէք ձեր մատից», խռւլ ձայնով ասաց Եօհանը։

Լռութիւն։

«Ո՛չ, այսուհետև այլևս մատիցս չեմ հանի», պատասխանեց նա։ Նրանք միմիանց աչքերի նայեցին։ Եօհանի շրթունքները դողդողում էին։ Նա գլխի շարժումով լեյտենանտին ցոյց տւեց և կոպիտ ու խռպոտ ձայնով ասաց.

«Դուք լաւ ճաշակ ունէք, ֆրեկէն Վիկտորիա։ Նա գեղեցիկ տղամարդ է։ Ուսադիրներն աւելի են լայնացնում նրա ուսերը»։

Վիկտորիան շատ հանգիստ պատասխանեց.

«Չէ, նա գեղեցիկ չէ, բայց ուսում առած, կրթւած մարդ է։ Չէ որ այդ էլ արժէք ունի»։

«Այդ ինձ է վերաբերում, շնորհակալ եմ», բարձր ձայնով ծիծաղեց Եօհանը և, առանց ամաչելու, ասաց. «Իսկ գրպանում փող կայ, այդ աւելի մեծ արժէք ունի»։

Վիկտորիան յանկարծ նրանից հեռացաւ։

Նա սկսեց անհանգիստ քայլել անկիւնից անկիւն։ Կամիլլան մի բան էր հարցնում, բայց նա ոչինչ չէր լսում ու չէր պատասխանում։ Կամիլլան մի բան էլ ասաց, նոյնիսկ նրա թեւը քաշեց, նորից հարցրեց, բայց իզուր։ Վերջապէս Կամիլլան ծիծաղելով ասաց. «Ո՛չ, նա ոչինչ չի լսում, միշտ քայլում է ու մտածում, քայլում է ու մտածում»։

Վիկտորիան լսեց այդ ու ասաց.

«Այո, նա ուզում է մենակ մնալ։ Նա ինձ ևս յետ ուղեց»։ Բայց յանկարծ Եօհանին մօտեցաւ ու բարձր ձայնով ասաց. «Դուք հաւանօրէն մտածում էք, թէ ինձնից ինչպէս ներողութիւն խնդրէք։ Այդ մասին մի հոգաք։ Ընդհակառակը ես պիտի ձեզանից ներողութիւն խնդրեմ, որ այդպէս ուշ հրաւէր ուղարկեցի։ Այդ իմ կողմից մեծ անուշադրութիւն էր։ Ինչ էր մնում, բոլորովին մոռանայի, վերջին րոպէին միայն յիշեցի։ Սակայն յոյս ունեմ, որ դուք կը ներէք, որովհետև մինչև այդ ժամանակ շատ հոգս ունէի»։

Եօհանը լուռ նայում էր Վիկտորիային, իսկ Կամիլլան կամ սրան էր նայում, կամ միւսին։ Վիկտորիայի սառն ու գունատ դէմքին բաւականութեան զգացում էր երևում։ Նա վրէժխնդիր էր լինում։

«Ես սրանք են մեր կատակերները», ասաց նա՝ Կամիլլային դառնալով։ «Մենք ոչինչ չը պիտի սպասենք նրանցից։ Ահա այնտեղ նստած է իմ փեսացուն և էշայեահամի որսի մասին է պատմում։ Ահա և բանաստեղծը, խորասուզած իր մտքերի մէջ... Մի բան ասէք, մի փոքրիկ բառ շշնջացէք, բանաստեղծ»։

Եօհանը ցնցուեց։ Նրա ընկերակներն ուռել էին։

«Լաւ։ Դուք խնդրում էք, որ մի բան ասեմ։ Լաւ»։

«Ա՛խ, չէ։ Ձեզ մի հարկադրէք»...

Վիկտորիան ուզեց գնալ։

«Ուղղակի գործի էութիւնից սկսենք», դանդաղ ու ժպտերես ասաց Եօհանը։ Սակայն նրա ձայնը դողում էր։

«Շատ ժամանակ է անցել այն օրից, երբ դուք սիրահարւած էիք, ֆրեկէն Վիկտորիա»։

Մի քանի վայրկեան կատարեալ լռութիւն թագաւորեց։ Երկքն էլ ականջ էին դնում իրենց սեպհական սրտի բաբախմանը։ Կամիլլան ամաչկոտութեամբ ասաց. «Ներէք։ Վիկտորիան սի-

բահարւած էր իր փեսացուի վրայ։ Ջէ որ նա նշանդրւած է, միթէ չէք իմանում»։

Սեղանատան դռները բացւեցին։

—

Եօհանն իր տեղը գտաւ և նրա առաջ կանգ առաւ։ Ամբողջ սեղանը պտտւում էր նրա աչքերի առաջ, նա բազմաթիւ մարդիկ էր տեսնում, աղմուկ էր լսում։

«Ահա ձեր տեղը, համեցէք», ասաց սիրալիր տանտիկինը։ «Միայն թէ բոլորը շուտով նստէին»։

«Ներեցէք», ասաց նրա յետևից Վիկտորիան։ Նա մի կողմ թեքւեց։ Վիկտորիան նրա առմսը վերցրեց և դրեց եօթը մարդուց յետ, ծերացած, մի ժամանակ ամրոցում ուսուցիչ եղած մի պարոնի տեղի մօտ։ Եօհանը լսել էր, որ այդ պարոնը խմող է։ Վիկտորիան նրա տեղում մի ուրիշ առմս դրեց ու նստեց։ Եօհանը կանգնել, շուրջն էր նայում։ Տանտիրուհին սեղանի միւս ծայրին կարգադրութիւններ էր անում և աշխատում էր նրան չը նայել։ Նա աւելի յուզւեց և ջղայնացած նստեց իր նոր տեղում։ Նրա նախկին տեղում նստեց Դիտլեֆի ընկերներից մէկը, մի երիտասարդ, որ կրծքին ադամանդեայ կոճակներ ունէր։ Սրա ձախ կողքին Վիկտորիան էր նստել, աջ կողքին՝ Կամիլլան։ Ճաշն սկսւեց։ Ծերունի տնային ուսուցիչը Եօհանին դեռ մանկութիւնից էր յիշում։ Նրանց մէջ մի խօսակցութիւն սկսւեց։ Ուսուցիչը պատմում էր, որ երիտասարդ ժամանակ ինքն էլ է բանաստեղծութեամբ զբաւուել, բայց նրա ձեռագիրները այնպէս էլ անտիպ մնացին։ Գուցէ յարմար դէպք պատահի, Եօհանը տեսնի այդ ձեռագրերը։ Նրան էլ էին հրաւիրել այս ընտանեկան հանդիսին, որ նա էլ ուրախանայ Վիկտորիայի նշանադրութեանը։ Ամրոցատէրն ու տիրուհին ի նշան հին բարեկամութեան էին այդ սիրալիրութիւնը ցոյց տւել։

«Ես ձեր գրւածքները չեմ կարդացել», ասաց հին ուսուցիչը։ «Երբ ուզում եմ մի բան կարդալ իմ սեպհական գրւածքներն եմ վերցնում։ Սակայն ես դեռ կամենում եմ, որ հասարակութիւնն իմանայ, թէ ինչպիսի մարդ եմ եղած ես։

«Այո, մեր սերունդը այժմեան գրողների նման չէր, նա չէր շտապում տպագրութեամբ հանդէս գալ։ Ձեր կենացը»։

Ճաշը շարունակւում էր։ Տանտէրը բաժակը չրխկացրեց ու կանգնեց։ Նրա բարեհամբոյր, նիհար դէմքը սաստիկ յուզւած էր երևում։ Թւում էր, որ նա շատ գոհ է։

Եօհանը գլուխը ցած խոնարհեցրեց։ Նրա բաժակը դադարկ էր, և ոչոք չէր լցնում։ Նա շիշը վերցրեց, բաժակը լիքը լցրեց և դարձեալ գլուխը խոնարհեցրեց։

Իսկոյն լ'ակսի։

Գեղեցիկ ու երկար ճառը վերջացաւ ուրախութեան աղաղակներով։ Նշանադրութիւնը յայտարարւեց։ Ամեն կողմից երջանկութեան անթիւ բարեմաղթութիւններ ու ցանկութիւններ էին

թափուում ամրոցատիրոջ աղջկայ ու կամերգերի որդու հասցէին։ Եօհանը իր բաժակը մինչև վերջին կաթիլը դադարկեց։ Մի քանի րոպէից յետոյ նրա լարած ջղայնութիւնը հանգստութեան փոխուեց։ Շամպանի գինին ցրուեց նրա երակներում։ Նա լսեց, որ կամերգերը նոր կենաց մաղթեց, լսեց կեցցէների աղաղակները։ Բոլորը բաժակները չրխկացնում էին։ Եօհանը Վիկտորիային նայեց։ Մա նստած էր գունատ, տանջուած և գլուխը ցած խոնարհած։ Բայց Կամիլլան Եօհանին ողջունեց գլխի շարժումով։ Եօհանը նոյն ձևով պատասխանեց։

Իսկ հին ուսուցիչն անդադար խօսում էր նրա ականջի տակ։ «Ա՜խ, ինչ լաւ է, հիանալի է, որ նրանք իրար գտան։ Բախտը ինձ համար այդպիսի վիճակ չէր վճռել։ Ես երիտասարդ ուսանող էի, ունէի մեծ-մեծ ծրագիրներ, անգնահատելի տալանդ, յայտնի հօր անուն, մեծ կալուածներ, հարստութիւն, շատ նաւեր։ Օրիորդը երիտասարդ էր և լաւ ընտանիքից։

«Ես գնացի նրա մօտ և սիրոս բաց արի նրա առաջ։ Նա մերժեց։

«Կարծդ էք հասկանալ նրան։ Չէ, նա չի կամենում, ասաց նա։ Ես ձգտում էի անել, ինչ որ կարելի է, աշխատում էի, այդ բանին նայում էի տղամարդու պէս։ Բայց հօրս դժբախտութիւնը պատահեց, նա իր ամբողջ հարստութիւնը կորցրեց, մուրհակներով պարտք մնաց, մի խօսքով կատարեալ կերպով քայքայուեց։ Այն ժամանակ

էլ ինչ անէիր։ Դրան էլ տղամարդու պէս վերաբերուեցի։ Բայց այն աղջիկը, որի մասին քիչ առաջ ասացի, նորից յայտնուեց, որոնեց ու գտաւ ինձ քաղաքում։ Ինձնից ինչ էր ուզում, իրենից հարցրէք։ Ես աղքատացայ, ընտրեցի ուսուցչի չնչին պաշտօնը, ամբողջ յոյսերս խորտակուեցին, բանաստեղծութիւնը մի կողմ նետուեց, և ահա այժմ նա եկել է ու կամենում է իմ կինը լինել։ Կամենում է»։

Ուսուցիչը Եօհանին նայեց ու հարցրեց.

«Կարծդ էք նրան հասկանալ»։

«Է՛, այն ժամանակ դուք չը ցանկացաք։

«Կարծդ էի, ձեզ եմ հարցնում։ Մի աղքատ ուսուցչիկ էի, կիւրակի օրերը հազիւ էի ծխախոտ գնում, էլ ինչ էք ուզում։ Այդպիսի կեանքով կարծդ էի նրան պահել։ Միայն ասացէք, խնդրեմ, կարծդ էք նրան հասկանալ»։

«Այնուհետև նա ինչ եղաւ»։

«Ա՜խ, Աստուած, իմ հարցին չէք պատասխանում։ Նա մի գնդապետի հետ ամուսնացաւ։ Մի տարի յետոյ։ Գնդանօթաձիգ գնդապետի հետ։ Ձեր կենացը»։

Եօհանն ասաց.

«Աստւում են, այնպիսի կանայք են լինում, որոնք դէպք են փնտրում, որ իրենց գթասրտութիւնը գործադրեն։ Եթէ տղամարդը լաւ է ապրում, այդպիսի կանայք նրան չեն սիրում, նրանից հեռանում են և կարծում են, որ իրանք նրան ամենևին պէտք չեն։ Եթէ մի դժբախտութիւն

պատահի, տղամարդը իր գլուխը խոնարհեցնի,— ահա նորից յայտնւում են նրանք և ասում. ես եկայ»։

«Բայց ինչու նա այն լաւ ժամանակը չը համաձայնեց, երբ ես յոյսերով լի մի փոքրիկ աստւած էի»։

«Նա ցանկանում էր սպասել, մինչև որ կեանքը ջախջախէ ձեզ։ Սակայն, Աստւած գիտէ, թէ նա ինչ էր կամենում»։

«Սակայն կեանքը չը ջախջախեց ինձ, գետնին չը սեղմեց։ Երբէք։ Ես հպարտ մնացի և նրան մերժեցի։ Ա՛յս մասին ինչ կասէք»,

Եօհանը լռեց։

«Գուցէ, դուք իրաւացի էք», ասաց հին ուսուցիչը։ «Դուք իրաւացի էք, երդւում եմ Աստւածով ու բոլոր սրբութիւններով», ասաց նա յանկարծակի ոգևորութեամբ և նորից կռնծաց։ «Վերջ իվերջոյ նա մի ծեր գնդապետի առաւ։ Նա ամուսնուն խնամում էր, հոգ էր տանում նրա մասին, իր պատառը նրա հետ կիսում էր, մի խօսքով ապրում էր որպէս մի կատարեալ տանտիկին։ Թնդանօթաձիգ գնդապետ»։

Եօհանը աչքերը վեր բարձրացրեց։ Վիկտորիան բաժակը ձեռքին բռնած ուղիղ նրան էր նայում։ Նա բաժակը բարձրացրեց։ Եօհանը խրախուսւեց և ինքն էլ իր բաժակը բարձրացրեց։ Նրա ձեռքը դողում էր։ Վիկտորիան բարձր, ձայնով հարևանի անունն արտասանեց ու ծիծաղեց։ Նա մաղթեց հին ուսուցչի կենացը։ Եօհանը վրդովւած բաժակը ցած դրեց ու անվըճ-

ռական եղանակով ժպտաց։ Բոլորը նրան էին նայում։ Ծերունի ուսուցիչը իր նախկին աշակերտուհու ուշադրութիւնից յուզւեց։ Արցունքները թափւեցին նրա աչքերից։ Նա շտապով խմեց։

«Եւ այժմ,—շարունակեց ուսուցիչը,—իմ մենակ, աննշան էութեամբ իզուր ծանրութիւն եմ պատճառում երկրին։ Ճակատագիրը ինձ համար էլ այդպիսի վիճակ է տնօրինել։ Ոչ ոք չը գիտէ, ինչ կայ իմ հոգում, ոչ ոք իմ գանգատները չի լսիլ։ Գիտէք, ինչպիսի թռչուն է տատրակը. լսո՞ւել էք, որ այդ թռչունը նախ պղտորում է վճիտ ջուրը և ապա խմում»։

«Ո՛չ, այդ ես չը գիտէի»։

«Այո՛, այո՛։ Այդպէս է։ Այն աղջիկը, որին կեանքը ինձ համար էր նախապատրաստել, ինձ չը հասաւ։ Սակայն ես դարձեալ իմ առանձին ուրախութիւնները ունեմ, բայց ես նրանց խաւարեցնում եմ։ Ես խաւարեցնում եմ այդ ուրախութիւնները, ուստի և ստիպւած չեմ լինում յուսահատւել։ Վիկտորիային նայէք։ Նա հէնց նոր բարեմաղթեց իմ կենացը։ Ես նրա ուսուցիչն եմ եղել։ Այժմ նա մարդու է գնում, և ես բաւխաւոր եմ, անձամբ բախտաւոր եմ։ Կարծես, նա իմ հարազատ դուստրն է։

«Գուցէ մի օր էլ նրա երեխաներին եմ դաս տալու։ Այո՛, իհարկէ, կեանքում շատ ուրախութիւններ կան։ Սակայն ես աւելի ու աւելի համոզւում եմ, որ դուք ճիշտ էք մտածում կանանց կարեկցութեան մասին... Երդւում եմ Աստծու

անունով դուք... Մի լոպէ ներէք ինձ»։ Նա իր բաժակը վերցրեց ու գնաց դէպի Վիկտորիան։ Նա քայլում էր ոստիկ դէպի առաջ կռացած ու քիչ տարուբերուելով։

Շատ ճառեր արտասանեցին։ Յօսեց լեյտենանտը, հարևան կալւածատէրը մաղթեց կանաց, յատկապէս, տանտիկնոջ կենացը։ Յանկարծ կըրծքին ազամանդեայ գնդաձեղ կրող երիտասարդը կանգնեց ու Եօհանի անունն արտասանեց։ Նա երիտասարդութիւնից լիազօրութիւն էր ստացել, ողջունել երիտասարդ բանաստեղծին։ Այդ մի վերին աստիճանի գովասանական ճառ էր, ժամանակակիցների ջերմ գոհունակութիւնը, լի հիացմունքով ու խնամարհութեամբ դէպի նրա տաղանդը։ Եօհանն սկզբում իր ականջներին չէր հաւատում և շշնջում էր ուսուցչին.

«Մի՞թէ նա իմ մասին է խօսում»։

Ուսուցիչը պատասխանեց. Այո, նա ինձ, կանխեց։ Վիկտորիան այսօր ինձ էր խնդրում այդ մասին, և ես հէնց պատրաստւում էի խօսել»։

«Ասում էք, ով խնդրեց ձեզ»։

Ուսուցիչը ուշադրութեամբ նրան նայեց։

«Ոչ ոք», պատասխանեց նա։

Ճառի ամբողջ ընթացքում բոլորի հայեացքը Եօհանին էր յառել։ Տանտէրը գլխով հաւանութեան նշան էր տալիս, իսկ կամերգերի կինը սևեռած նրան էր նայում դիտակով։ Երբ ճառը վերջացաւ, բոլորը բարեմաղթելով խմեցին։

«Նա ձեզ էր դիմում, պատասխանէք,

ասաց հին ուսուցիչը։ «Թէև հարկաւոր էր առաջ մեծերի մասին մտածել։ Բայի այդ, ես չեմ կարող նրա հետ համաձայնել։ Ամենևին»։

Եօհանը Վիկտորիային նայեց։ Նա է յանձնարարել ազամանդեայ կոճակներով երիտասարդին այդ ճառն ասել։ Նա ինչո՞ւ է այդպէս արել։ Առաջ նա ուրիշին է խնդրել, ուրեմն պարզ է, որ նա այդ մասին մինչև ճաշ է հոգացել։ Ինչո՞ւ։ Իսկ այժմ նստած է իր տեղում, աչքերը ցած խոնարհեցրած, և նրա դէմքի ոչ մի գիծը չէ մատնում նրա հոգեկան դրութիւնը։

Նա ոստիկ ու խոր յուզած էր։ Նա ուզում էր Վիկտորիայի ոտներն ընկնել և շնորհակալութիւն յայտնել, շնորհակալութիւն յայտնել... Այդ նա յետոյ կ՚անի, ճաշից յետոյ։ Կամիլլան աջ ու ձախ շատախօսում էր։ Նրա երեսը փայլում էր ուրախութիւնից։ Նա շատ ուրախ էր, տասնեօթ տարին ուրախութիւնից բացի նրա համար ուրիշ ոչինչ չէր բերել։ Նա մի քանի անգամ Եօհանին գլխով արեց և նշան արեց, որ նա կանգնի։

Եօհանը վեր կացաւ։

Նա խօսեց կարճ, ոգևորուած ու յուզուած ձայնով։ Ի պատիւ երջանիկ զէպքի պատրաստուած այս հանդիսին չեն մոռացել և նրան, կոմսիային, աննշան մարդուն։ Նա շնորհակալ է նրանից, ով առաջինը ցանկացաւ նրան հրաւիրել, շնորհակալ է նաև նրանից, ով իր ճառում այդպիսի բարեկամական վերաբերմունք արտայայտեց դէպի

նա, շնորհակալ է բոլոր ներկայ եղողներից, որ լսեցին իր համար այնքան գովասանական ճառը, թէև նա այս ընթացքում բոլորովին կողմնակի մարդ է։ Իհարկէ նա իր հրաւիրելու համար պարտական է այն երևոյթին, որ հարևանի որդին է...

«Ո՛չ», բացագանչեց Վիկտորիան բորբոքած աչքերով։ Բոլորը նրան նայեցին։ Նրա այտերը այրւում էին, կուրծքը՝ փոթորկւում։

Եօհանը լռել էր։ Ծանր ու անյարմար լռութիւն թագաւորեց։ «Վիկտորիա», զարմացած ասաց ամրոցատէրը։ «Շարունակէք», նորից բացագանչեց Վիկտորիան։ «Ո՛չ, շնորհիւ ձեր անձնական արժանիքի, շարունակէք»։ Նրա աչքերը մարեցին, նա անօգնական ժպտում էր և գլուխը շարժում։ Ապա նա արցունքներն աչքերին դարձաւ հօրը.

«Ես ուզում էի ասել, որ նա չափազանցնում է։ Ես չէի ուզում խանգարել»..

Եօհանը նրա բացատրութիւնը լսեց և անյարմար դրութիւնից դուրս գալու միջոց գտաւ։ Նրա սիրտը ամուր բաբախում էր։ Նա նկատեց, որ Վիկտորիայի մայրը անսահման քնքշութեամբ և արցունքոտ աչքերով իրան է նայում։

«Այո, նա չափազանցնում է, ասաց նա, ֆրեկէն Վիկտորիան ճիշտ է ասում։ Նա այդպէս սիրալիր կերպով յիշեցրեց, որ նա եղել է ոչ միայն իրենց հարևանը, այլ և մանուկ հասակի խաղընկերը, որին և իսկապէս պարտական է այսօրւայ հիւրասիրութեան համար։ Այո, այդպէս է։ Նա ճոհ է նրանից։

«Երբ նա դեռ տանն էր ապրում, ամրոցի անտառը նրա համար փոխարինում էր աշխարհին, իսկ անտառից այն կողմը, անվերջ հեռաւորութեան մէջ կապարին էր տալիս անյայտ, հէքիաթային մի այլ աշխարհ։ Այդ անցած տարիներում Դիտլեֆն ու Վիկտորիան յաճախ էին նրա յետևից մարդ ուղարկում ու կանչում զբօսանքի, կամ իրենց խաղերին մասնակցելու համար։ Ահա նրա մանկութեան ամենաքաղցր յիշողութիւնները։ Յետագայում, երբ նա մտածում էր այդ մասին, գտնում էր, որ այդ բոլորը ահագին ազդեցութիւն են արել նրա կեանքի վրայ, թէև առաջ այդ ոչ ոք չէր նկատում։ Երբ նրան կրկին յաջողւում է մի բան գրել, մի այնպիսի գեղեցիկ երկ, որ առանձին տպաւորութիւն է թողնում, ինչպէս քիչ առաջ ասացին, այդ յաջողւում է այն ժամանակ, երբ նրա մէջ անցեալի յիշողութիւններն են բորբոքւում։ Նրա երկու ընկերները բախտաւորութեամբ լուսաւորեցին նրա մանկութիւնը, ուսուն և նրա գրւածքների գլխաւոր արժանիքը նրանց է պատկանում։ Նա կամենում է ամրոցի երկու զաւակի բախտաւորութեան սովորական մաղթանքներին միացնել և իր անձնական գոհունակութիւնը իր երջանիկ անցրած մանկութեան՝ այդ ամառնային կարճ, երջանիկ օրւայ համար...»

Ճառը վերջացաւ։ Բոլորն էլ ըմպեցին ու շարունակեցին ուտել ու խօսակցել։

Դիտլեֆը չոր կերպով ասաց մօրը.

«Երբէք չէի երևակայել, որ ես եմ նրա երկերը գրել։ Հը՞»։

Բայց մայրը լուրջ մնաց, բաժակն իր զաւակների բաժակներին խփելով՝ ասաց. «Շնորհակալութիւն յայտնէք նրան, շնորհակալութիւն։ Այդ ըստ ամենայնի հասկանալի է։ Նա շատ մեծ էր... Ի՞նչ ես ուզում, Վիկտորիա»... «Ուզում եմ սպասուհու ձեռքով այս շիշորուկի ճիւղը ուղարկել նրան ի շնորհակալութիւն։ Միթէ չի կարելի»։

«Ո՛չ», պատասխանեց լեյտենանտը։

Ճաշից յետոյ հասարակութիւնը ցրուեց սենեակներում։ Ոմանք դուրս եկան պատշգամբը, ոմանք՝ այլուր։ Եօհանը պատշգամբից իջաւ և գնաց տաղաւարը։ Այնտեղ նստած էին մի քանի տղամարդիկ, որոնք ծխում էին ու խօսակցում։ Հարևան կալւածատէրը ցածր ձայնով քննադատում էր տանտիրոջ ֆինանսական դրութիւնը։ Նրա կալւածքն անմշակ է, այգինները՝ խոտակոտած, անտառները՝ կարուած։ Այս դրութեամբ նա, հաւանօրէն, հազիւ է կարողանում տան ապահովագրութեան փողը վճարել։

«Որքա՞ն դումարով է ապահովագրած»։

Կալւածատէրը մի մեծ դումար ասաց։

Իսկապէս ամրոցում երբէք անտեսութիւն չէին անում, հակայական ծախսերից չէին քաշւում։ Ի՞նչ կը նստի, օրինակի համար, այսօրւայ ճաշը։ Այժմ, հաւանօրէն, ամբողջ ամրոցում մի գրոշ անգամ չի գտնւի, նոյնիսկ տանտիկնոջ գոհարեղէնի արկղում։ Սակայն փեսայի կարողութիւնը գործը կը շտկի, և նորից կսկսւի նախկին հոյակապութիւնը։

«Իսկ նա որքա՞ն կարող է ունենալ»։

«Նա այնքան մեծ կարողութիւն ունի, որ...»

Եօհանը վեր կացաւ և գնաց այգին։ Շիշորուկը ծաղկել էր։ Նա ներս էր շնչում նարգիսի, յասմիկի և հովտաշուշանի բուրմունքներով յագեցած օդը։ Նա նստից մի քարի վրայ, պատի տակ, անկիւնում։ Թփերը ծածկում էին նրան։

Նա տանջւած էր հոգեկան յուզումներից, թուլացած յոգնածութիւնից։ Մտքերը խառնւում էին նրա գլխում։ Նա ուզում էր վեր կենալ, գնալ տուն, բայց մնացել էր նստած, առանց տեղիցը շարժւելու, խուլ ու համր դէպի ամբողջ շրջապատը։

Յանկարծ ճանապարհի կողմից խօսակցութիւն ու ոտնաձայներ լսեցին։ Նա ճանաչեց Վիկտորիայի ձայնը։ Նա շնչառութիւնը զսպեց ու մի քիչ յետ քաշւեց։ Տաղաւարի արանքից փայլում էր լեյտենանտի կերպարանքը։ Փեսացուն ու հարսնացուն միասին զբօսնում էին։

«Ըստ իս, դու քեզ շատ տարօրինակ ես պահում։ Ուշադրութեամբ լսում ես նրա խօսքերը, յանկարծակի ընդհատում ես նրան։ Այդ ինչ է նշանակում»։ Վիկտորիան կանգ առաւ և հպարտութեամբ ուղղւեց։

«Դու ուզո՞ւմ ես այդ իմանալ», ասաց նա։

«Այո՛»։

Վիկտորիան լռել էր։

«Եթե այդ առանձին ոչինչ չի նշանակում, այն ժամանակ ինձ համար վճռապես միևնույն է», ասաց Լեյտենանտը։ «Կարող ես և չասել»։

Վիկտորիայի յուզմունքն իջավ։

«Ո՛չ, այդ առանձին ոչինչ չի նշանակում», պատասխանեց Վիկտորիան։ Նրանք շարունակեցին առաջ գնալ։ Լեյտենանտը ուսերը չղաղցրեց թեի տակ և բարձր ձայնով ասաց. «Բայց նա պիտի զգույշ լինի, որ սպան սուիլւած չը լինի նրան ապտակել»։ Նրանք դեպի տաղաւարն ուղղեցին։

Եօհանը դեռ նստած էր քարի վրայ և իրան դեռ մի անյայտ, համր յուսահատութեան մէջ էր ղգում։ Հարնացուն հանգստացնում էր փեսացուի խանգստ, չարամիտ կասկածանքները։ Վիկտորիան ասաց, ինչ որ պիտի ասէր այդպիսի դէպքում, որպէսզի նրա սիրտը հանգստացնի։ Նա ասաց ու նրա հետ առաջ գնաց։

Սարեակները ճաւաղում էին նրանց գլխի վրայ։ Այո, այո։

Իսկ նա ճաշի ժամանակ ասում էր. թող Աստուած երկար կեանք պարգևի նրանց։

Նրա համար շատ դժւար էր հանգստացնել օրիորդի անզգոյշ բռնկումը, բայց նա նոյնիսկ շնորհակալութիւն չը յայտնեց։ Նա առաւ իր բաժակն ու խմեց։ Հիացէք, որքան վայրուչ ձևով եմ խմում...

Կողքից դիտէք կնոջը, երբ նա խմում է։

Նայէք նրան, ինչով էլ որ խմելիս լինի, բաժակով, գաւաթով, կամ մի այլ անօթով։ Նա միշտ շրթունքն է մեկնում դէպի անօթը և հէնց թեթև կպչում է հեղուկին թէ չէ, սկսում է սաստիկ կոտըրտուել։ Եթէ դուք այդ ժամանակ ուշադրութեամբ նրա ձեռքերին նայէք, նրան կը յուսահատեցնէք։ Ընդհանրապէս երբէք կնոջ ձեռքերին մի նայէք, նա այդ տանել չի կարողանում, յաղթահարւում է։ Նա կսկսի ձեռքերը շարժել՝ աշխատելով, գեղեցիկ դիրք տալ նրանց և կամ որևէ եղակը, կամ կնճիռը ծածկել։ Ի վերջոյ նա չի կարող այդ տանել, կը բարկանայ ու կը հարցնի.

«Ինչո՞ւ էք նայում»։

Մի անգամ օրիորդը նրան համբուրեց։ Այդ ամառ ժամանակ էր, շատ վաղուց է՛, բաւական է։ Աստւած գիտէ, թէ այդ եղել է։ Ինչպէս պատահեցաւ։ Կարծես, նրանք նստել էին նստարանի վրայ ու երկար խօսակցում էին։ Յետոյ սկսեցին քայլել։ Նա նրան այնքան մօտիկ էր գնում, որ, համարեա, նրա ձեռքին էր կպչում։

Մի տան մուտքի առաջ նա համբուրեց։

«Ես ձեզ սիրում եմ», ասաց նա...

Իսկ այժմ փեսացուն ու հարսնացուն նրա մօտով անցան և դուրս նստած են տաղաւարում։ Լեյտենանտն ասաց, որ սուիլւած կը լինի ապտակ հասցնել։ Նա շատ լաւ լսեց նրա խօսքերը, քնած չէր, բայց վեր չը կացաւ, նրանց չը մօտեցաւ։ Սպան սուիլւած կը լինի նրան ապտակել», ասաց նա։ Ա՛խ, մինչ միևնոյն չէ նրա համար...

Նա վեր կացաւ և տաղաւարին մօտեցաւ։ Այնտեղ ոչ ոք չը կար։ Կամիլլան կանգնած էր պատշգամբում և կանչում էր նրան։ Ծնդրում ենք։ Պատշգամբում սուրճ են խմում։ Նա գնաց։ Այնտեղ մի քանի հիւրեր էին նստած, նաև վեհաշուքն՝ հարսնացուի հետ։ Եօհանը իր բաժակը վերցրեց, քիչ հեռացաւ և իր համար տեղ գտաւ։ Կամիլլան զրուցում էր նրա հետ։ Կամիլլան շատ աշխոյժ էր և նայում էր՝ իր լայն բացած աչքերով։ Նա չը կարողացաւ դիմադրել, սկսեց խօսել, նրա հարցերին պատասխանել, ծիծաղել։ Ո՞ւր էր այսքան ժամանակ, թագնուո՞ւմ էր։ Ճշմարիտ չէ՞։ Կամիլլան որոնել էր նրան այգու բոլոր մասերում և չէր գտել։ Նշանակում է, այնտեղ չի եղել։

«Վիկտորիա, սա այգո՞ւմն էր», հարցրեց Կամիլլան։ Վիկտորիան պատասխանեց։ «Ո՛չ, ես դրան այգում չը տեսայ»։ Լեյտենանտն անբաւականութեան մի հայեացք ձգեց հարսնացուի վրայ, և որպէսզի նրան յիշեցնի իրենց խօսակցութիւնը, կանչեց կալւածատիրոջը այնպիսի բարձր ձայնով, որ ամբողջ պատշգամբում լսուեց. «կարծեմ, դուք ինձ հրաւիրեցիք՝ միասին վայրի կեռցար որսալու գնալ»։

«Այո՛, այո՛, խնդրում ենք», պատասխանեց կալւածատէրը։ Լեյտենանտը Վիկտորիային նայեց։ Սա նստած էր նոյն դրութեամբը և, ըստ երևոյթին, չէր էլ պատրաստւում համոզել նրան, որ այդ ենթադրելի որսից չեռ կենայ։ Լեյտենանտի դէմքը մռայլուեց։ Նա սկսեց ջղային շարժումով ոլորել բեխերը.

Կամիլլան նորից դիմեց Վիկտորային։

Լեյտենանտը շտապով կանգնեց տեղից և ասաց կալւածատիրոջը.

«Լաւ, ես իսկոյն կը գամ ձեզ հետ, հէնց այս երեկոյ»։ Ասաց ու գնաց։ Կալւածատէրն և ուրիշ շատերը հետևեցին նրան։ Կարճ լռութիւն տիրեց։ Յանկարծ դուռը բացուեց և լեյտենանտը դուրս եկաւ սաստիկ յուզուած։

«Բաւն ես մոռացել», ասաց Վիկտորիան։ Լեյտենանտը չէր կարողանում ուղիղ կանգնել, արագ ու ցատկոտն քայլերով դէպի դուռը դիմեց։ Երբ անցնում էր Եօհանի մօտով, իբր թէ յանկարծակի ու առանց դիտաւորութեան, ձեռքը նրա երեսին կպցրեց և նորից իր ցատկոտն քայլերով դէպի դուռը վազեց։

«Զգոյշ, լեյտենանտ, աչքիս կպաք», ասաց Եօհանը՝ բարձր ծիծաղելով։

«Դուք սխալւում էք», պատասխանեց նա։ «Ես ձեզ ապտակեցի, հասկանո՞ւմ էք, հասկանո՞ւմ էք»։

Եօհանն առաւ թաշկինակը, նրանով սրբեց աչքն ու ասաց.

«Դուք, իհարկէ, կատակ էք անում։ Դուք, իհարկէ, լաւ էք հասկանում, որ ես կարող եմ ձեզ երկու տակ ծալել ու դնել գրպանս»։ Այս խօսքերն ասելով՝ Եօհանը վեր կացաւ։ Լեյտենանտն շտապով դուրս պրծաւ. «կատակ չէի անում, ես ապ-

տակեցի, անասունն», և նա աղմուկով խփեց դուռը իր յետևից։

Վիկտորիան դեռ կանգնած էր սենեակի մէջտեղում՝ դունատ, որպէս դիակ։ «Նա ձեզ խաբեց», սարսափած հարցրեց Կամիլլան։

«Նա յանկարծակի աչքիս կպաւ։ Ուզում էք նայել»։

«Աստուած իմ, աչքը բոլորովին կարմրել է, արիւնոտւել։ Մի, մի տրորէք։ Թողէք ջրով շփեմ։ Ձեր թաշկինակը որքան կոպիտ է, պահէք այդ, լաւ է, իմս վերցնէք։ Ա՛խ, Աստուած իմ, ուղղակի աչքի մէջ»։

Վիկտորիան էլ իր թաշկինակը մեկնեց։ Նա ոչինչ չասաց, թէև նրա շրթունքները դողդողում էին։ Նա դանդաղ մօտեցաւ ապակէ դռանը, շուռ եկաւ և սկսեց դէպի այգին նայել։ Նա պատռտեց իր թաշկինակը, կտոր-կտոր արեց։ Մի քանի րոպէից յետոյ նա դուռը բացեց և կամաց ու լուռ դուրս եկաւ։

VIII

Կամիլլան գնաց ջրաղացը։ Նրա հոգում ուրախութիւնն ու խենդն էին իշխում։ Նա մենակ էր. ուղղակի փոքրիկ սենեակը մտաւ ու ժպտալով ասաց.

«Ներէք, որ դուռը չը բախեցի, սակայն ջուրն այնպէս աղմկում է, որ միևնոյն է, դուք չէիք լսի։ Նա շուրջը նայեց ու բացագանչեց.

«Որքան հիանալի է այստեղ, որքան հաճելի։ Ո՞ւր է Եօհանը, ես նրան ճանաչում եմ։ Նրա աչքն ինչպէ՞ս է»։ Նրան աթոռ առաջարկեցին, ու նա նստեց։ Եօհանը ջրաղացումն էր, նրան կանչեցին։

«Ես կամեցայ, ձեր առողջութիւնը հարցնել», ասաց նա։ «Շարունակէք շփել սառը ջրով»։

«Զարժէ», պատասխանեց Եօհանը։ «Աստուած օրհնէ ձեզ։ Ինչպէ՞ս եկաք այստեղ։ Ուզում էք ջրաղացի անիւը տեսնել։ Շնորհակալ եմ, որ եկաք»։ Նա գրկեց իր մօրը, մօտեցրեց նրան և ասաց. «Ահա իմ մայրը»։ Նրանք իրան անիւի մօտ։ Ծերունի ջրաղացպանը գլխարկը վերցրեց, խոր գլուխ տւեց ու ինչ որ բան ասաց։ Կամիլլան չը լսեց, բայց ժպտաց ու կոյրզկուրան ասաց։ «Շնորհակալ եմ, շնորհակալ եմ։ Այո, շատ եմ ուզում նայել»։ Աղմուկը նրան վախեցրեց։ Նա բռնել էր Եօհանի ձեռքը և մեծ ու ուշադիր աչքերով նայում էր երկու տղամարդկանց, աշխատելով նրանց հասկանալ։ Նա, կարծես, խլացել էր։

Բազմաթիւ անիւները, զսպանակները, ջրաղացի ամբողջ մեխանիզմը զարմացնում էին նրան։ Նա կրկնապատկւած հետաքրքրութեամբ ծիծաղում էր, քաշում էր Եօհանի ձեռքից, ցոյց էր տալիս։

Անիւը կանգնեցրին, նորից բաց թողին, որպէսզի նրան անիւի կազմութիւնը ցոյց տան։ Երբ ջրաղացից գնաց, դեռ երկար ժամանակ Կամիլլան շարունակում էր, ծիծաղելի աստիճանի, բարձր խօսել։ Կարծես ջրաղացի աղմուկը դեռ խլա-

ցնում էր նրան։ Եօհանը նրան ուղեկցեց մինչև ամրոց։ «Նա ինչպէ՞ս համարձակուեց ձեր երեսին խփել, չեմ հասկանում», ասաց նա։ «Եւ յետոյ ինչպէ՞ս նա իսկոյն կալւածատիրոջ հետ որսի գընաց։ Այդ մի վերին աստիճանի ագէտ դէպք էր։ Վիկտորիան ինձ ասաց, որ ինքն ամբողջ օրը չի քնել»։

«Այդ դէպքում նա կը հանգստանայ այսօր ցերեկը», պատասխանեց նա։ «Իսկ դուք երբ էք մտադիր տուն վերադառնալ»։

«Վաղը։ Դուք երբ պիտի քաղաք գաք»։

«Աշնանը։ Այսօր ճաշից յետոյ կարծէք եմ ձեզ տեսնել»։

«Այո, իհարկէ, իհարկէ», բացագանչեց նա»։ «Մի ինչ որ քարանձաւի մասին էին պատմում, արդեօք ինձ չէ՞ք ցոյց տայ»։

«Իհարկէ, ցոյց կը տամ։ Կը գամ ձեր յետեւից», ասաց Եօհանը։

Տուն դառնալիս, ճանապարհին Եօհանը նըկատեց մի քարի վրայ ու երկար մտածում էր։ Նրա մտքում մի փայլուն ու լուսաւոր միտք ծնուեց։

Ճաշից յետոյ նա գնաց ամրոցը, բայց ներս չը մտաւ, այլ մարդ ուղարկեց Կամիլլայի մօտ իր մասին յայտնելու։ Մինչ նա կանգնած սպասում էր, երկրորդ յարկի պատուհաններից մէկում յայտնուեցաւ Վիկտորիայի կերպարանքը։ Նա ուշադրութեամբ նայեց Եօհանին, շուռ եկաւ և անհետացաւ սենեակի խորքում։ Կամիլլան եկաւ։ Եօհանը նրան տարաւ քարանձաւը, ապա քաղաքը։ Նա իրան շատ հանգիստ ու բախտաւոր էր զգում։ Երիտասարդ աղջկայ ներկայութիւնը աշխուժութիւն էր տալիս նրան։ Կամիլլայի պարզ և ուրախ բառերը թրթռում էին օդում և նրա սիրտը թափանցուում։ Բարի ոգինները վխտում էին նրա շուրջը»...

«Կամիլլա, յիշում եմ, որ դուք մի օր ինձ մի արծաթէ կոթով դաշոյն էք նուիրել։ Ես այն ուրիշ իրերի հետ պահել էի արկղումս, որովհետև չէի գործածում»։

«Ա՜խ, դուք չէիք գործածում։ Է՜, ինչ անենք, որ»։

«Ես այն կորցրել եմ»։

«Ողբալի բան է։ Կաշխատեմ նրա փոխարէն մի ուրիշը գտնել ձեզ համար»։

Նրանք առաջ գնացին։

«Իսկ յիշո՞ւմ էք այն ոսկէ մեդալիոնը, որ ինձ նուիրեցիք։ Նա շատ գեղեցիկ էր և յիշատակ ունէր։ պատուիրեցիք նրա վրայ մի քանի բարեկամական բառեր քանդակել»։

«Այո, յիշում եմ»։

«Անցեալ տարի արտասահմանում մի ուրիշին նուիրեցի»։

«Այդ չի կարող պատահել։ Մի՞թէ ուրիշին նուիրեցիք։ Ինչո՞ւ»։

«Ես այն տեսայ երիտասարդ ռուս ընկերոջս՝

ի յիշատակ։ Նա ինձ ծնկաչոք շնորհակալութիւն յայտնեց դրա համար»։

«Մի թէ նա այդքան ուրախացաւ։ Անշուշտ, եթէ նոյն իսկ ծունկ չոգեց։ Մի ուրիշը կը նախրեմ նրա փոխարէն։»

Ներանք մօտեցան ջրաղացը ամրոցից բաժանող ճանապարհին։ Եօհանը կանգնեց և ասաց.

«Այս թափուռներում մի անգամ մի դէպք պատահեց։ Ամառւայ տաք երեկոյ էր, ես անտառը գնացի, մի բան, որ յաճախ էի անում միայնութեան օրերին. պարկեցի խոտի վրայ, թփերի մէջ և մտածում էի։ Յանկարծ նկատեցի, որ երկու հոգի զբօսնելով հանդիստ գնում էին ճանապարհով։ Մէկն օրիորդ էր։ Նա կանգնեց։ Նրա ուղեկիցը հարցրեց. ինչո՞ւ կանգնեցիր, և պատասխան չստանալով շարունակեց։ Ի՞նչ պատահեց։ Ոչինչ, պատասխանեց օրիորդը, սակայն դուք ինձ այդպէս չը պէտք է նայէք։ Ես ձեզ ի՞նչ արեցի։ Ես գնում էի ու նայում միայն, ուրիշ ոչինչ, ասաց պարոնը։ Այո՛, պատասխանեց օրիորդը, ես դիտեմ, որ դուք ինձ սիրում էք, բայց հայրիկս չի համաձայնի, հասկանո՞ւմ էք, այդ անկարելի է։ Իհարկէ, անկարելի է, շշնջաց պարոնը։ Օրիորդը շարունակեց. որքա՜ն լայն ձեռք ունէք, ձեր ձեռքը զարմանալի է ու լաւը, և նա բռնեց պարոնի ձեռքը»։

Ընդմիջում։

«Իսկապէ՞ս է՛, վի՞րջը», հարցրեց Կամիլլան։

«Ձը դիտեմ», պատասխանեց Եօհանը։

«Ապա օրիորդն ինչո՞ւ նրա ձեռքի մասին խօսեց։ Հաւանօրէն նրա ձեռքը շատ գեղեցիկ է երևացել օրիորդին. գուցէ նա սպիտակ ձեռնոցներ ունէր։ Ո՛հ, այն ժամանակ ես այդ հասկանում եմ։ Անշուշտ օրիորդն էլ նրան էր սիրում»։

«Կամիլլա, ասաց նա, եթէ իմանայիք, որ ես ձեզ շատ եմ սիրում, և որ մի քանի տարի պիտի սպասեմ,—ուզում եմ հարցնել միայն... Ուրիշ խօսքով, ես ձեզ արժանի չեմ, սակայն ի՞նչ էք կարծում, գուք կարո՞ղ էիք երբևէ իմ կինը լինել։ Մի, կամ երկու տարի յետոյ»։

Լուռթիւն։

Կամիլլան յանկարծ շփոթւեց ու կարմրեց։ Նա թեքւեց դէպի առաջ և ապա յետ քաշւեց։ Նա իր ձեռքերն ամուր սեղմել էր։ Եօհանը բռնեց նրա մէջքից, գրկեց նրան ու հարցրեց. «Երբևէ կարելի՞ է այդ։ Համաձայն էք»։

«Այո՛», պատասխանեց Կամիլլան ու ընկաւ նրա գիրկը։

Միւս օրը նա գնաց Կամիլլային մինչև նաւահանգիստ ուղեկցելու։ Նա խորին գոհունակութեամբ ու երջանկութեամբ համբուրեց օրիորդի փոքրիկ, անմեղ, մանկական ձեռքը։

Վիկտորիան ուղեկցելու չէր եկել։

«Ինչո՞ւ ոչոք չեկաւ քեզ հետ»։

Կամիլլան սարսափահար աչքերով պատմեց, որ ամրոցում մեծ դժբախտութիւն է պատահել։

Այսօր առաւօտեան հեռագիր եկաւ։ Ամրոցատէրը դիակի գոյն սառաւ։ Պարոն կամերգերն ու նրա կինը ճչացին։ Օտտօն երիկ երեկոյեան, որպէս ժամանակ, գնդակահար է եղել։

Եօհանը բռնեց Կամիլլայի ձեռքը։

«Նա մեռել է, լեյտենանտը»։

«Այո, նրա մարմինն արդէն բերում են։ Սոսկալի է»։

Նրանք առաջ գնացին։ Իւրաքանչիւրն իր մտքերի մէջ էր խորասուզած։ Նրանց սթափեցրին միայն նաւահանգստի խուռն ամբոխը, շոգենաւը, նաւապետի ձայնը։ Կամիլլան իր ձեռքը նրբան աւեց՝ քաշելով։ Նա համբուրեց ու ասաց.

«Այո, այո, ես արժանի չեմ քեզ, Կամիլլա։ Ո՛չ, ես բոլորովին անարժան եմ։ Բայց եթէ դու իմ կինը լինես, կ՛աշխատեմ քեզ համար անել այն, ինչ որ կարող եմ»։

«Ես քոնը կը լինեմ։ Ես միշտ, միշտ երազել եմ այդ մասին»։

«Մի քանի օրից յետոյ ես կը գամ։ Մի շաբթից յետոյ մենք նորից կը տեսնուենք», ասաց Եօհանը։

Կամիլլան տախտակամածի վրայ էր։ Եօհանը մինչեւ նաւի անհետացնելը գլխով բարեւում էր նրան։ Երբ նա յետ դարձաւ, որ տուն գնայ, տեսաւ Վիկտորիային, որ նոյնպէս Կամիլլային գլխով էր անում և թաշկինակը շարժում։

«Ես շատ ուշ եկայ», ասաց նա...

Եօհանը չը պատասխանեց։ Ի՞նչ ասի, մխի-

թարի նրան... չնորհաւորի՞... կամ նրա ձեռքը սեղմի...Վիկտորիայի ձայնը կտրուած էր, երեսը՝ դունատ։ Երևում էր, որ նա այդ օրերը շատ է զգացել ու յուզուել։

Ժողովուրդն սկսեց նաւահանգստից ցրուել։

«Ձեր աչքը դեռ կարմիր է», ասաց նա ու գնաց։ Նա յետ դարձաւ, նայեց Եօհանին, բայց սա դեռ տեղից չէր շարժուել։

Յանկարծ Վիկտորիան յետ դարձաւ և մօտեցաւ նրան։ «Օտտօն մեռել է», սառը կերպով ասաց նա, և նրա աչքերը փայլեցին։ «Սակայն ձեզ համար այդ վճռապէս մխիթարական է, դուք մի խօսք անգամ չ՛ասացիք ինձ։ Նա ձեզնից հազար անգամ լաւն էր, լսո՞ւմ էք։ Գիտէք, ինչպէս է նա մեռել։ Հրացանի ամբողջ լիցքը կպել է նրան, և նրա գլուխը ամբողջապէս կտոր-կտոր է եղել, նրա փոքրիկ, չիմար գլուխը... Նա հազար անգամ...»

Նա հեկեկաց ու հանդարտ քայլերով տուն գարձաւ։ Սակայն նա խոր յուսահատութեան մէջ էր։

Ուշ երեկոյեան մէկը բախեց ջրազացի դուռը։ Եօհանը բացեց ու դուրս նայեց։ Դռան յետևը կանգնած էր Վիկտորիան և նրան կանչում էր։ Նա գնաց նրա յետևից։ Վիկտորիան ամուր բռնեց նրբա ձեռքը և նրան իր յետևից քաշելով տարաւ։ Նրա ձեռքը սառցի պէս սառն էր։

«Աւելի լաւ է, նստենք», ասաց Եօհանը։

«Դուք չափազանց յուզված էք։ Նստեք և հանգըստացեք»։ Ներանք նստեցին։ Վիկտորիան շշնջաց.

«Կը ցանկայի իմանալ, թէ ինչ էք մտածում իմ մասին. չէ որ ես ձեզ ոչ մի կերպ չեմ կարող հանդիստ թողնել»։

«Դուք շատ դժբախտ էք», պատասխանեց նա։ Բայց ինձ լսեք, Վիկտորիա, աշխատեք հանգստանալ։ Արդիօք կարող եմ որևէ ձևով ձեզ օգնել»։

«Ի սէր Աբրահէի, ներեք ինձ, ներեք այն խօսքերի համար, որ այօր ձեզ ասացի։ Ներեք ինձ», աղերսում էր նա։ «Այո, ես շատ, շատ դժբախտ եմ, դժբախտ էի բոլոր այս անցեալ, երկար տարիների ընթացքում։ Ես ասացի, որ նա հազար անգամ լաւ էր ձեզնից, սակայն այդ ճշմարիտ չէ։ Ներեք ինձ։ Նա վախճանուեց, նա իմ փեսացուն էր—ահա բոլորը։ Դուք կարծում էք, որ ես այդ ցանկանում էի։ Եօհան, նայէք. ահա իմ նշանի մատանին։ Ես այս վաղուց, շատ վաղուց եմ ստացել... և ահա ձգում եմ այս, ձգում եմ։ Նա մատանին նետեց հեռու, անտառը։ Ներանք երկուսն էլ լսեցին մատանու զնգոցը։

«Հայրս էր այդ ցանկանում։ Նա աղքատ է, նա, համարեա, մուրացկան է, իսկ Օտտօն ժամանակով մեծ կարողութիւն պիտի ստանար։—Դու պարտական ես այդ անել, ասաց հայրս։

«Չեմ ուզում, պատասխանեցի նրան։—Բայց մտածիր քո ծնողների մասին, մեր ամրոցի մասին, իմ բարի, ձեր անւան մասին, իմ պատուի մասին։—Լաւ, համաձայն եմ, ասացի ես, բայց երեք տարի սպասէք, համաձայն եմ։ Հայրիկս շնորհակալ եղաւ և որոշեց սպասել։ Օտտօն էլ էր սպասում։ Բոլորն էլ սպասում էին։ Բայց մատանին իսկոյն ուրիշ ինձ։

«Ժամանակն անցնում էր, և տեսնում էի, որ ինձ ոչինչ չի օգնի։ Այլ ևս ինչու սպասել, ասացի հօրս, ինձ մօտ կանչիր ամուսնուս։—Թող Աստուած օրհնէ քեզ, զաւակս,—ասաց նա և մի անգամ էլ շնորհակալ եղաւ համաձայնութեանս համար։ Այն ժամանակ եկաւ Օտտօն։ Ես նաւահանգիստ չը գնացի նրան դիմաւորելու, այլ տեսնում էի պատուհանից, ինչպէս նա մօտեցաւ մեր տանը։ Այն ժամանակ ես մօրս մօտ վազեցի, չոգեցի նրա առաջ։—Ի՞նչ է պատահել, զաւակս,—հարցրեց նա։—Ո՛չ, ոչ, ես նրան առնել չեմ կարող։ Նա եկաւ, նա այնտեղ, ցածը կանգնած է։ Աւելի լաւ է, իմ կեանքն ապահովեցրէք, ես ծովը կը նետուեմ, գետը կընկնեմ, այդ ինձ համար աւելի հեշտ կը լինի։

«Մայրիկս գունատուեց, լաց եղաւ։ Եկաւ հայրս և ասաց. Դէ, սիրելի Վիկտորիա... գնացած, նրա մօտ։

«Ես չեմ կարող, չեմ կարող, ասում էի ես, նորից կրկնում. խնդրում էի, որ նա ինձ խղճայ, աւելի լաւ է, ինձ ապահովագրի։

«Հայրիկս ոչ մի բառ չ'ասաց։ Նա նստեց աթոռի վրայ և սկսեց մտածել։ Տեսայ, որ նա ամ-

բողջ մարմնով դողում էր, այն ժամանակ ասացի. կանչիր նրան, ես համաձայն եմ»։

Վիկտորիան լռեց։ Նա դողդողում էր։ Եօհանը բռնեց նրա ձեռքն և սկսեց տաքացնել։

«Շնորհակալ եմ», ասաց Վիկտորիան։ «Ի սէր Աստծու, Եօհան, ձեռքերս ամուր սեղմէք։ Շնորհակալ եմ։ Աստուած իմ, ձեր ձեռքերը որքան տաք են։ Շատ շնորհակալ եմ ձեզանից։ Սակայն նաւահանգստում ասածիս համար ներէք ինձ, ներէք»։

«Այդ բոլորը ես վաղուց եմ մոռացել։ Ուզում էք, մի տաք շալ բերեմ ձեզ համար»։

«Ո՛չ, շնորհակալ եմ։ Չեմ հասկանում, թէ ինչու եմ այսպէս դողում։ Գիւղից այրւում է, Եօհան, ուզում եմ ներուժն խնդրել ձեղնից։ Ես որքան» ..

«Ո՛չ, ոչ, հարկաւոր չէ, հանգստացէք, հանգիստ նստէք»։

«Դուք ձեր ճառն ինձ համար ասացիք։ Այն րոպէից, երբ դուք ոտի կանգնեցիք, մինչև ձեր կրկին նստելը ես ոչինչ չէի հասկանում, միայն ձեր ձայնն էի լսում։ Ձեր ձայնը հնչում էր իմ ականջին՝ որպէս մի հրաշալի երգէոն։ Ես յուսահատւում էի, որովհետև նա այնպէս դիւթում էր ինձ։ Հայրս հարցրեց, թէ ինչու ես ձայնարկեցի և ձեզ ընդհատեցի։ Այդ դէպքից նա շատ դժգոհ էր։ Բայց մայրիկս չը հարցրեց։ Նա հասկանում էր։ Ես դեռ մի քանի տարի առաջ եմ ամբողջ ճշմարտութիւնը նրան ասել։ Երբ քաղաքից դարձայ,

նորից ամբողջը կրկնեցի։ Այդ այն ժամանակ էր, երբ ես պատահեցի քեզ»։

«Այլևս այդ մասին չը խօսենք»։

«Ո՛չ, սակայն ինձ ներէք, լսէք, ինձ խղճացէք, ինձ ներէք... Աստուած իմ, ինչ անեմ ես։ Այնտեղ, տանը, հայրիկս է իր գրասենեակում յետ ու առաջ քայլում։ Նրա համար այդ շատ սարսափելի է։ Վաղը կիւրակի է, նա կարգադրել է բոլոր ծառաներին ու մշակներին արձակել։ Այդ նրա այսօրւայ միակ կարգադրութիւնն է։ Նա գունատւել, մոխրագոյն է դարձել, չի խօսում։ Ապագայ փեսայի մահը նրա վրայ շատ սոսկալի ազդեցութիւն է արել։ Մայրիկս ասացի, որ ձեզ մօտ եմ գալիս։—Վաղը միայն մենք երկուս կը գնանք կամերգներին ու նրա կնոջը ճանապարհ ձգելու, ասաց մայրիկս։

«Ես Եօհանի մօտ եմ գնում, կրկնեցի ես։— Հայրիկդ այնքան փող գտնել չի կարող, որ մենք երեքով գնանք, ուստի նա տանը կը մնայ, պատասխանեց նա և խօսքը փոխեց։ Այն ժամանակ ես մօտեցայ դռանը։ Մայրիկս ինձ նայեց։ Այժմ ես գնում եմ նրա մօտ, ասացի ես։ Մայրիկս մօտեցաւ ու համբուրեց ինձ ասելով. այո՛ այո, թող Աստուած ձեզ օրհնէ»։

Եօհանը նրա ձեռքը բաց թողեց ու ասաց.

«Այժմ բոլորովին տաքացել են»։

«Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, ես տաքացել եմ։ Չէ՞ որ ես ամեն ինչ մայրիկիս ասել եմ։ Նա բոլորը գիտէ։—Բայց դու ուժ ես սիրում,

սիրելի վաւակս, հարցրեց նա։—Ես Եօհանին եմ սիրում, մի միայն Եօհանին։ Սիրում եմ ամբողջ կեանքովս, սիրում եմ, սիրում եմ»։

Եօհանը շարժւեց։

«Արդէն ուշ է։ Տանը ձեզ համար կ՛անհանգըստանան»։

«Ո՛չ։ Չէ որ դուք արդէն գիտէք, որ ես ձեզ սիրում եմ։ Եօհան, չէ որ որ դուք այդ տեսաք։ Որքան էլի կարօտում ձեզ այս բոլոր տարիների ընթացքում։ Այնքան շատ էի կարօտում, որ ոչ ոք, ոչ ոք հասկանալ չի կարող։ Երբ անտառում գնում էի ճանապարհով, մտածում էի, որ աւելի լաւ է շեղւեմ ճանապարհից, անտառը մտնեմ և կածանով գնամ, այն կածանով, որով նա սիրում էր գնալ։ Ես ևս այնտեղով գնամ։

«Այն օրը, երբ լսեցի, որ դուք գալիս էք, սպիտակ-դեղնագոյն շորերս հագայ։ Յուզմունքից և սպասելուց ես հիւանդանում էի. կամ դուրս է գալիս, կամ սենեակն էի մտնում։ Մայրիկս ասաց։—Այսօր ինչ երջանիկ դէմք ունես։—Իսկ ես քայլում էի ու կրկնում. այսօր նա տուն եկաւ, որքան գեղեցիկ է նա, նա եկել է, նա վերադարձել է։ Զը համբերեցի, երկու օրից յետոյ դեղին շորերս հագայ ու քարահանք գնացի։ Յոյս ունէի որ այնտեղ ձեզ կը հանդիպեմ։ Յիշո՞ւմ էք, ես ձեզ պատահեցի։ Ես ամենևին էլ ծաղիկ չէի որոնում, որպէս ասացի ձեզ, ես ամենևին էլ դրա համար չէի եկել... Բայց դուք այնուհետև ինձ տեսնելիս չէինք ուրախանում։ Բայց և այնպէս... գոհ էիք,

որ հանդիպեցիք։ Այդ արդէն երրորդ տարին էր։ Ձեր ձեռքին մի ճիւղ կար, որով դուք հով էիք անում։ Երբ գնացիք, այդ ճիւղը վերցրի, թագցրի ու տուն տարայ»։

«Վիկտորիա, այլևս ինձ այդ մասին ոչինչ մի ասէք», ասաց նա երերուն ձայնով։

«Լաւ», վախեցած պատասխանեց Վիկտորիան և բռնեց նրա ձեռքը, «լաւ, այլևս չեմ ասի։ Դուք չէք կամենում»...

Վիկտորիան սկսեց ջղաձգաբար շփել նրա ձեռքը։ «Այո, իհարկէ, ես չեմ կարող սպասել, որ դուք կամենաք... Բացի այդ ես ձեզ այնքան սաստիկ եմ տանջել... Սակայն, գուցէ, դուք յետոյ, ժամանակով հնարաւորութիւն ունենաք ինձ ներել, այո, ոչ այժմ, ժամանակով»։

«Ա՛խ, իհարկէ։ Բայց խնդիրն այդ չէ»։

«Ապա ո՞րը»։

Լռութիւն։

«Ես նշանդրւած եմ», ասաց Եօհանը։

IX

Հետևեալ օրը, որ կիւրակի էր, ինքն ամբողջաւորն անձամբ ջրաղացպանի մօտ եկաւ և խնդրեց, որ նա կէսօրին ձիերը լծի ու լեյտենանտ Օտոյի դիակը շոգենաւ տանի։ Ծերունին նայում էր նրան և ոչինչ չէր հասկանում։ Այն ժամանակ ամբողջաւորը բացատրեց, որ ինքը բոլոր ծառայողներին արձակել է, և որ տանը ոչոք չկայ, բո-

լորը եկեղեցի են գնացել։ Երևում էր, որ նա ամբողջ գիշեր չէր քնել, մեռելի գոյն էր առացել և ածիլված չէր։ Բայց դարձեալ, ըստ իր սովորութեան, ձեռնափայտը բարձր բռնած՝ արագ շարժում էր ու իրան ամուր և ուղիղ պահում, մէջքը չէր ծռում։ Ջրաղացպանը իր ամենալաւ շորերն հագաւ և գնաց։ Նա ձիերը լծեց։ Դագաղը կառքի վրայ դնելիս՝ ամբողջատէրն անձամբ օգնում էր նրան։ Ոչոք ներկայ չէր, և մի տեսակ խորհրդաւոր լռութիւն էր իշխում նրանց շուրջը։

Ջրաղացպանը գնաց նաւահանգիստ։ Նրա յետևից գնում էր կամերգերը իր կնոջ հետ, ապա Վիկտորիան՝ իր մօր հետ։ Ամբողջատէրը՝ կանգնած պատշգամբում, գլխով էր անում։ Բամին ծածանում էր նրա սպիտակ մազերը։ Դագաղը տախտակամածի վրայ բարձրացրին, ապա բարձրացան ուղեկիցները։ Վիկտորիայի մայրը կանգնած էր տախտակամածի վրայ և բարձր ձայնով ասում էր ափին կանգնած Ջրաղացպանին, որ քարևի մարդուն։ Վիկտորիան էլ խնդրում էր՝ հօրը բարևել։ Շոգենաւը շարժւեց։ Ջրաղացպանը կանգնած՝ երկար նայում էր շոգենաւին։ Սաստիկ քամի էր փչում, ծովածոցը ալեկոծւում էր։ Քառորդ ժամից յետոյ շոգենաւը անհետացաւ։ Ջրաղացպանը տուն դարձաւ։ Նա ձիերը դոմը տարաւ, կապեց, կերակուր տւեց և ուզում էր ամբոց գնալ, բարևներն ամբոցատիրոջը յայտնելու։ Սակայն խոհանոցի դուռը փակ էր։ Նա

ուզեց պատել ամբոցի շուրջը և գլխաւոր մուտքից մտնել։ Բայց այդ էլ էր փակ։

«Կէսօր է արդէն։ Հաւանօրէն ամբոցատէրը քնած է», մտածեց նա։ Բայց որովհետև նա բարեխիղճ մարդ էր, ուզում էր իրեն արած յանձնարարութիւնը անպատճառ կատարել, ուստի ծառայանոց գնաց։ Նա յոյս ունէր, որ գոնէ այնտեղ մարդ կը գտնի և կը խնդրի բարևները հաղորդել։ Բայց նա այնտեղ ևս ոչ ոքի չը գտաւ։ Նա նորից դուրս եկաւ, մտն եկաւ ամբոցի շուրջը, աղախիններէի սենեակը մտաւ։ Այնտեղ ևս մարդ չը կար։

Ամբողջ ապարակը դադարկ էր։

Նա ուզում էր նորից դուրս գալ, երբ յանկարծ նկուղներից մէկում մի լոյս նկատեց։ Նա կանգ առաւ։ Վանդակաւոր փոքրիկ պատուհանից պարզ տեսաւ, որ այնտեղ մի մարդ կար, որը մի ձեռքին մի մոմ բռնած, միւսին մի բազկաթոռ՝ նկուղն էր մտնում։ Այդ ամբոցատէրն էր, որ հէնց նոր էր ածիլւել և տօնական սև ֆրակ էր հագել։ «Կարելի է պատուհանը ծեծել և տիկնոջ բարևը հաղորդել նրան», մտածեց Ջրաղացպանը, բայց կանգ առաւ։ Ամբոցատէրը նայեց իր չորս կողմը, շուրջը լուսաւորեց, մին էլ նայեց, ապա առաջ քաշեց մի տոպրակ, որը՝ ըստ երևոյթին՝ լցւած էր խոտով, կամ ծղօտով. տոպրակը յենեց դռանը և սկսեց կժով ինչ որ հեղուկ լցնել նրա վրայ. յետոյ բերեց մի քանի արկղ, դրեց տոպրակի մօտ, յարդ ցանեց նրանց վրայ, ապա ծաղկամանի պատւան-

դանը դռանը դէմ արեց, այդ ևս նոյն հեղուկով թրջեց։

Ջրաղացպանը նկատում էր, որ ամբոցատէրը միևնոյն ժամանակ աշխատում էր զգեստները չը կեղտոտել։ Նա այրած մոմի մնացորդը տոպրակի վրայ դրեց և ծղօտով զգուշութեամբ ծածկեց։ Այս բոլորից յետոյ նա զգուշութեամբ նստեց բազկաթոռի վրայ։

Ջրաղացպանը նայում էր այդ ամբողջ պատրաստութեանը աւելի ու աւելի զարմացած և չէր կարողանում աչքը պատուհանից հեռացնել։ Նրա մէջ մի մութ կասկած ծագեց։ Ամբոցատէրը դեռ նստած էր բազկաթոռի վերայ և ձեռքերը ծալած՝ նայում էր մոմին, որ քիչ-քիչ այրւում, վերջանում էր։ Ջրաղացպանը տեսաւ, ինչպէս նա թաւ տուից իր թևերի վրայի փոշին և առաջուայ պէս ձեռքերը ծալեց։ Ծերունի ջրաղացպանը չը կարողացաւ համբերել և սարսափից ճչաց։ Ամբոցատէրը գլուխը յետ դարձրեց և պատուհանին նայեց։ Յանկարծ նա վեր ցատկեց, թռաւ պատուհանի մօտ ու պատուհանից դուրս նայեց։ Նրա հայեացքի մէջ արտացոլել էին աշխարհի բոլոր տանջանքները։ Նրա շրթունքներն այլանդակւել էին։ Նա լուռ, սպառնական եղանակով մեկնեց սեղմած բռունցքները, ապա նորից դիմեց նկուղի խորքը, շարունակելով մի ձեռքով սպառնալ։ Երբ նա բազկաթոռին հասաւ, մոմը մարեց, և իսկոյն մի պայծառ բոց բռնկւեց։ Ջրաղացպանը ճչաց ու պատուհանից փախաւ։ Մահւան սարսափով բռնւած, ինքն իրան կորցրած, նա վազեց դէպի բակը, բայց չը գիտէր, թէ ինչ անի։ Նա նորից դէպի նկուղը վազեց, սկսեց ձեռքով կոտրել պատուհանի շրջանակը։ Նա ճչում էր, բռնում էր երկաթի փակիչներից, շուռ էր տալիս, ծռում, դուրս քաշում... Յանկարծ նկուղի խորքից մի սոսկալի ճիչ լսւեց, առանց բառերի։ Կարծես մեռելի տնքոց լինէր։ Ճիչը երկու անգամ հնչեց։ Ջրաղացպանը սարսափահար վախաւ դէպի իր տունը։ Նա չէր համարձակւում նոյն իսկ շուրջը նայել։ Երբ մի քանի րոպէից յետոյ նա յետ վազեց Եօհանի հետ, ամբոցի հին վայրենայ շէնքը արդէն ամբողջովին բռնւած էր պայծառ բոցով։ Նաւահանգստից մի քանի մարդ վազեցին, բայց ոչինչ չը կարողացան անել։ Ամեն ինչ ոչնչանալու էր։ Բայց Ջրաղացպանը գերեզմանի պէս համր էր կտրել։

X

Սակայն ինչ է սէրը։ Սէրը, — այդ մի քամի է, որ շարժում է վարդի թերթիկներն ու նորից խաղաղւում։ Սակայն սէրը ուժեղ է անսասան ժայռի պէս, ամբողջ կեանքում, մինչև մահ չի տատանւում։ Աստւած նրան զանազան յատկութիւններ է շնորհել... Երբեմն նա յաւերժական է, երբեմն վայրկենապէս անհետանում է։

Երկու մայր զրուցելով գնում էին ճանապարհով։ Մէկը տօնական, երկնագոյն զգեստներ էր հագել։ Նրա սիրելի անձը երկար ճանապար-

հորդութիւնից նոր էր վերադարձել: Միւս կինը սգոյ զգեստներ էր հագած: Սա երեք աղջիկ ունէր: Երկուսը սևահեր էին, մէկը՝ շիլահեր: Շիլահերը մեռել էր: Այդ ժամանակից անցել էր տասը տարի, ամբողջ տասը տարի: Բայց մայրը դեռ շարունակում էր սգոյ շորեր հագնել:

«Այսօր ինչ հրաշալի օր է», ուրախութիւնից բացագանչեց երկնագոյն շորերով կինը և ծափ տւեց: «Տաքութիւնն ու սէրը հարբեցնում են ինձ: Որքան բախտաւոր եմ ես: Ես պատրաստ եմ չոգել ճանապարհի մէջտեղին, ձեռքերս արևին մեկնել և նրան համբոյրներ ուղղել»:

Սգոյ զգեստներ հագած կինը լուռ էր, չէր ժպտում, չէր պատասխանում:

«Դու դարձեալ տխո՞ւր ես քո փոքրիկ աղջկայ համար», միամտութեամբ հարցրեց միւսը: «Չէ՞ որ արդէն, կարծեմ, այն ժամանակից տասը տարի է անցել»:

Սգազգեստ կինը պատասխանեց.

«Այո, նա այժմ տասնհինգ տարեկան կըլինէր»:

«Սակայն դու երկու ուրիշ աղջիկ ես ունեա», մխիթարում էր նրան միւսը:

«Այո, նրանք երկուսն էլ թուխ մազեր ունեն, իսկ նա, որ մեռաւ, ոսկեգոյն մազեր ունէր...» հեկեկաց նա, և երկու կանայք բաժանուեցին: Իւրաքանչիւրը գնաց իր ճանապարհով, իր սիրով:

Սակայն նրա երկու աղջիկն էլ սիրահարւած էին և մէկին էին սիրում:

Սիրեցեալը եկաւ մեծ մօտ և ասաց.

«Ես ձեր քրոջը սիրում եմ և եկել եմ ձեզնից խորհուրդ հարցնելու: Երեկ ես դաւաճանեցի նրան: Նա տեսաւ, թէ ես ինչպէս էի միջանցքում աղախնին համբուրում: Նա թոյլ և խղճալի ձայնով ճչաց ու անցաւ: Այժմ ինչ անեմ ես: Ես ձեր քրոջը սիրում եմ: Ի սէր Աստծու, նրա հետ խօսէք, օգնէք ինձ»:

Աղջիկը գունատւեց և ձեռքը սրտին սեղմեց, բայց բարեսրտութեամբ ժպտաց և, կարծես թէ, կամենալով նրան օրհնել, ասաց. «Ես ձեզ կօգնեմ»:

Միւս օրը պարոնը կրտսեր քրոջ մօտ գնաց, չոգից նրա առաջ և սէր երդւեց: Օրիորդը նրան ոտից մինչև գլուխ մի հայեացքով չափեց և պատասխանեց. «Դժբախտաբար, ես այժմ ձեզ տասը կրոնից աւելի ոչինչ չեմ կարող տալ: Անշուշտ դրա համար էք խնդրում: Սակայն գնացէք քրոջս մօտ: Նա ձեզ աւելի կը տայ»: Եւ օրիորդը հպարտութեամբ բարձրացնելով իր գլուխը՝ հեռացաւ նրանից: Բայց երբ իր սենեակն եկաւ, ընկաւ յատակի վրայ և սիրոյ յուզմունքից սկսեց իր ձեռքերը կոտրատել:

Ձմեռ էր: Փողոցներում ցուրտ էր; մառախուղը պատել էր ամենուրեք: Քամին փոշու ամբողջ սիւներ էր բարձրացնում: Եօհանը դարձեալ ապրում էր քաղաքում, իր հին սենեակում, ուր նա յաճախ էր լսում բարդենու ճիւղերի վայտէ

տան պատերին կպչելու խզզոցը։ Նա դարձավ նոյն սենեակումն էր, որտեղից նա շատ անգամ էր հրճւել լուսաբացը դիտելով։ Բայց այժմ արեգակը չէր երևում։ Նա միշտ իր գրածի վրայ էր աշխատում։ Գրած թերթերի թիւը աւելի ու աւելի շատանում էր։ Նա հէքիաթական երազներ կարմիր—արեգակնագոյն անվերջ դիշերներ էր նկարագրում։

Բայց լաւ օրերն անցան, վատ օրերն եկան։ Բայց յաճախ էր պատահում, որ մի յիշողութիւն, մի միտք, աչքերի և արտասանած բառերի մասին ունեցած որևէ յիշատակ յանկարծակի մարում էին նրա ոգևորութիւնը հէնց այն ժամանակ, երբ նա լաւ էր աշխատում։ Այդպիսի դէպքում նա կանգնում էր ու սկսում՝ սենեակում անկիւնից անկիւն քայլել։ Նա այնքան երկար էր քայլել, որ յատակի վրայ կազմւել էր մի սպիտակ գիծ որը օրէցօր լայնանում էր...

«Այսօր չեմ կարողանում ոչ աշխատել, ոչ մտածել։ Յիշողութիւններն ինչ հանգիստ չեն տալիս։ Ահա կընստեմ և կը գրեմ այն բոլորը, ինչ որ անցրել եմ մի անգամ գիշերը։ Թանկագին ընթերցող, այսօր ինձ համար շատ ծանր ու տանջող օր էր։

Ձիւն է գալիս։ Փողոցներում ոչ ոք չըկայ։ Ամեն տեղ տխրութիւնն է թագաւորում։ Իսկ իմ հոգում սարսափելի միայնութիւն է իշխում։ Երկար թափառեցի փողոցներում, ապա սկսեցի քայլել այստեղ, իմ սենեակում, աշխատեցի մոքերս

մի քիչ հաւաքել։ Այժմ, հաւարեա, երեկոյ է, իսկ ես ինձ տանջած եմ զգում։ Ես մրսում եմ, ես դունատ եմ մաւրող օրւայ պէս։ Թանկագին ընթերցող, չը նայելով իմ այս դրութեանը, փորձում եմ մի փայլուն, հրաշալի գիշեր նկարագրել։ Աշխատանքը հանգստացնում է ինձ, և գուցէ ես մի քանի րոպէից յետոյ աշխուժանամ։

Դուռը բախեցին, ներս մտաւ Կամիլլա Ջեյերը, նրա երիտասարդ հարսնացուն։ Նա գրիչը ցած դրեց ու կանգնեց։ Երկուսն էլ ժպտացին ու բարևեցին միմեանց։

«Ինչո՞ւ պարերեկոյթի մասին ոչինչ չես հարցնում», բացագանչեց Կամիլլան՝ ընկնելով աթոռի վրայ։ «Ես մինչև ժամը երեքը պարեցի, պարեցի բոլոր պարերը, պարեցի Րիչմոնդի հետ»։

Եօհանը պատասխանեց.

«Հաղար անգամ չնորհակալ եմ, Կամիլլա, որ եկար։ Այսօր հոգիս վշտոտ է, իսկ դու այդպէս ուրախ ես։ Այդ լաւ է, գուցէ ինձ ևս ուրախացնես։ Պարերեկոյթին ինչպէ՞ս էիր հագնւած»։

«Իհարկէ կարմիր։ Ա՜խ, Աստուած իմ, շատ շատախօսեցի ու ծիծաղեցի։ Այնքան ուրախ էր։ Այո, այո ես կարմիր շորեր էի հագել, այնպիսի շորեր, որ թևեր չունէին։ Նոյնիսկ ամենափոքրիկ չափով անգամ չունէին։ Րիչմոնդը Լօնդօնի գեսպանատունն է ծառայում»։

«Այդպէս»։

«Նրա ծնողներն անգլիացի են. բայց ինքն

այստեղ է ծնուել։ Ի՞նչ է պատահել, աչքերդ բոլորովին կարմրել են։ Արտասուե՞լ ես»։

«Ո՛չ, պատասխանեց նա ժպտալով, այլ ուշադրութեամբ զննեցի իմ կախարդական աշխարհները, ուր փայլում է աչք ծակելու չափ զօրեղ լոյս ունեցող արեգակ։ Կամիլլա, եթէ ուզում ես խելօք աղջիկ լինել, էլ մի պատռտի թղթերս, ինչպէս հէնց նոր արեցիր»։

«Ա՜խ, Աստուած իմ, ես այնքան տարուեցի մաքերովս, որ արածս չը նկատեցի, ներիր ինձ, Եօհան»։

«Դա դաղարկ բան է։ Այդ մի նկատողութիւնների հասարակ տետր էր։ Լսիր, մազերիդ վարդ կպցրե՞լ էիր։

«Այո, կարմիր վարդ, այնքան կարմիր, որ, համարեա, սև էր երևում։ Լսիր, Եօհան, հարսանեկան ճանապարհորդութեան ժամանակ Լօնդօն գնանք։ Այդ այնքան էլ զարուհելի չէ, որքան պատմում են, իսկ այնտեղի մառախուղները էլ սաստիկ չափազանցնում են»։

«Այդ քեզ ո՞վ ասաց»։

«Ռիչմոնդը։ Երեկոյան նա պատմեց ինձ այդ մասին, իսկ նա լաւ գիտէ այդ։ Դու ծանօթ չես նրա հետ»։

«Չէ։ Ես նրան ճանաչում եմ։ Նա մի օր իմ մասին մի ճառ է ասել։ Այն ժամանակ ադամանդէ կոճակներ ունէր։ Ահա բոլորը, ինչ որ նրա մասին գիտեմ։

«Նա շատ լաւն է։ Գիտե՞ս, նա մօտեցաւ ինձ, բարևեց ու ասաց. դուցէ Ֆրեդին այլ ևս ինձ չի ճանաչում։ Այն ժամանակ ես նրան վարդ տուեցի»։

«Ի՞նչ վարդ»։

«Այն վարդը, որ մազերիս էի փակցրել»։

«Հաւանօրէն շատ էիր գրաւուել նրանով»։

«Ամենևին, ոչ մի այդպիսի բան։ Չի կարելի մէկին դովել, մէկի մասին լաւ խօսել, որպէսզի... Թուէ, Եօհան, ցնորուե՞լ ես։ Այլևս երբէք նրա անունը չեմ արտասանի»։

«Տէրը քեզ հետ, Կամիլլա, ես ամենևին չէի ուզում... Մի կարծիր, ի սէր Աստծու, որ իսկապէս... Ընդհակառակը, ես ցանկանում եմ շնորհակալութիւն յայտնել նրան, որ նա այդպէս սիրալիր զբաղեցրել է քեզ»։

«Եթէ դու այդպէս անես, այն ժամանակ ամբողջ կեանքումս նրան ոչ մի խօսք չեմ ասի»։

Լռութիւն։

«Վա՜յ, ազ բոլորը թողնենք։ Դու արդէն պատրաստո՞ւմ ես գնալ»։

«Այո, այլևս չեմ կարող ճնալ։ Ինչպէ՞ս է աշխատանքդ, առաջ գնո՞ւմ է, թէ չէ։ Մայրիկս վերջերս հարցնում էր այդ մասին։ Երևակայիր, մի քանի շաբաթ է Վիկտորիային չէի տեսել, քիչ առաջ պատահեցի նրան»։

«Ա՞յժմ»։

«Այո, հրբ այստեղ էի գալիս», ասաց նա ժպտալով։ «Աստուած իմ, որքան փոխուել է նա։ Լսիր, մեզ մօտ շո՞ւտ կը գաս»։

«Այո, շուտ կը գամ», վեր ցատկելով պատասխանեց նա։ Նրա երեսը պայծառացաւ։ «Ես նախ ուզում եմ գրել, ինչ որ մտածել եմ։ Ուզում եմ պատմուածքներիս եղրակացութիւնը գրել։ Ա՛խ ես ուզում գրել, ուզում եմ։ Վերևից գետնին նայիր։ Կարծես, գետինը պապի մի հազուագիւտ, գեղեցիկ ծիրանի է։ Մարդիկ զոյգ-զոյգ, իրար յետևից քայլում են նրա ծալքերի մէջով։

«Երեկոյ է, սիրոյ ժամ։ Այս գրուածքիս վերնագիրը դնում եմ. „Սեռի հզօրութիւնը“։ Կարծում եմ, որ այս շատ ուժեղ դուրս կը գայ։ Յաճախ տեսիլքներ եմ տեսնում, և իւրաքանչիւր անգամ կուրծքս, քիչ է մնում, երջանկութիւնից պատռւի, ես ուզում եմ ամբողջ երկիրը գրկել։ Մարդկանց, գազաններին, թռչուններին; բոլորի համար սիրոյ ժամը հասել է։ բոլորը բռնուել են հաճոյքի ալիքով, նրանց աչքերին լոցալառած են կրծքերը յուզուած։ Գետնից բարակ, կարմրաւուն մէգ է բարձրանում։ Մերկացած սրտերի ամաչկոտութիւնն է այդ, որ դիշերը կարմիր լոյս է թափում։ Իսկ այնտեղ, հեռում կախուած են վիթխարի լեռները, որոնք քնած են և խոսել ու կոյր դէպի իրենց ամբողջ շրջապատը։

«Առաւօտեան Աստուած արեգակի այրող ճառագայթներով լուսաւորեց ամբողջ երկիրը։ Ես այդ „Սեռի հզօրութիւն եմ“ անուանում»։

«Այսպէս»։

«Այո, կը գամ, երբ գրեմ, վերջացնեմ։ Կամիլլա, հազար անգամ շնորհակալ եմ, որ ինձ

մօտ եկար։ Մոռացիր, ինչ որ ասացի։ Ես գաղտնի միաք չունէի»։

«Ո՛հ, ես արդէն մոռացել եմ։ Բայց և այնպէս այլևս նրա անունը երբէք չեմ յիշի։ Երբէք»։

Միւս օրը Կամիլլան դարձեալ եկաւ։

Նա գունատ էր և շատ յուզուած։

«Ի՞նչ է պատահել», հարցրեց Եօհանը։

«Ոչինչ», շտապով պատասխանեց նա։ «Չէ որ ես քեզ սիրում եմ։ Ի սէր Աստծու, մի կարծիր, որ իբրև թէ ինձ որևէ բան է պատահել, որ իբր թէ ես քեզ չեմ սիրում։ Ո՛չ։ Միայն գիտես, մենք Լօնդօն չենք գնայ։ Ի՞նչ գործ ունենք այնտեղ։ Այն մարդն ինքն էլ չը գիտէր, ինչի մասին էր խօսում ինձ հետ։ Լօնդօնում մառախուղները նրա կարծածից շատ են։ Ինչո՞ւ ես ինձ նայում։ Չէ որ ես նրա անունը չը յիշեցի։ Ինչ ստախօսն էր նա, գլխից ամեն տեսակ յիմարութիւններ դուրս տուեց։ Ո՛չ, Լօնդօն չենք գնայ»։

Եօհանն ուշադրութեամբ լսում էր ու նրան նայում։

«Ո՛չ, մենք այնտեղ չենք գնայ», ասաց Եօհանը մտածկոտ։

«Այո, ճշմարիտ է, չէ՞, մենք չենք գնայ»։ «Սեռի հզօրութիւնը» գրուածքդ վերջացրիր։ Աստուած իմ, այդ ինձ համար որքան հետաքրքիր է։ Շուտ կը վերջացնե՞ս և մեզ մօտ կը գա՞ս, Եօհան։ Սիրոյ ժամ է...Այդպէ՞ս չէ։ Պապի սքանչելի ծի-

բանու ծալքերը, կարմիր-վարդագոյն դիշերները։ Աստուած իմ, ասածներդ ինչ լաւ յիշում եմ։ Վերջերս բաւական սակաւ եմ քեզ մօտ լինում։ Բայց այսուհետև ամեն օր կը գամ խնամելու, թէ արդեօք չես վերջացրել։

«Շուտով կը վերջացնեմ», ասաց նա՝ շարունակելով նայել նրան։

«Այսօր գիրքդ աւարտեցի և սենեակս դրի։ Ուզում եմ բոլորը կարդալ։ Այդ ինձ, համարեա ամենևին չի յոգնեցնում, այլ ուրախացնում է։ Լսիր, Եօհան, բաւի եղիր ինձ տուն առաջնորդել։ Չեմ խնամում ինչու, մի տեսակ անհանգիստ եմ։ Դուցու է այնտեղ, փողոցում մէկին ինձ սպասում է։ Ես, համարեա, այդ բանին հաւատում եմ...և նա յանկարծակի հեկեկաց ու ասաց. «Ես առաջօր անուանեցի նրան։ Ինչո՞ւ այդպէս արեցի։ Նա ամենևին չէր սառում, նա միշտ...Հինգշաբթի օրը մեզ մօտ հիւրեր պիտի գան, բայց նա չի լինի։ Իսկ դու կը գաս, լսո՞ւմ ես։ Դու խոստանո՞ւմ ես։ Բայց և այնպէս ծանր է ինձ համար, որ նրա մասին այդպէս վատ խօսեցի։ Ես չեմ խնամում, թէ իմ մասին ինչ ես մտածում»...

Եօհանը պատասխանեց։ «Ես սկսում եմ քեզ հասկանալ»։

Կամիլլան նրա վզովն ընկաւ, լալով ու դողդողալով իր երեսը դրեց նրա կրծքին։

«Այո, սակայն չէ՞ որ ես քեզ սիրում եմ», ասաց Կամիլլան։ «Մի կարծիր, որ այդպէս չէ։ Ես մենակ նրան չեմ սիրում, ո՛չ, այդ անմտու-

թիւն կը լինէր։ Երբ դու անցեալ տարի ինձ առաջարկութիւն արիր, ես այնքան բախտաւոր էի։ Ապա յայտնուեց նա։ Հասկանալ չեմ կարողանում։ Եօհան, այդ իմ կողմից շատ զզուելի է։ Գուցէ նրան աւելի եմ սիրում, քան քեզ, ոչինչ անել չեմ կարող, այդ իմ ուժերից վեր է։ Ա՛խ, Տէր-Աստուած, նրան տեսնելուց յետոյ քանի անքուն գիշերներ եմ անցրել։ Զգում եմ, որ նրան աւելի ու աւելի եմ սիրում։ Ի՞նչ անեմ։ Դու ինձնից մեծ ես, սովորեցրու ինձ։ Բայց ես նրան չեմ համբուրէ, ո՛չ, հաւատա՛ ինձ։ Ես միայն մի վարդ եմ տալ նրան։ Եօհան, ինչո՞ւ չես պատասխանում։ Ասա, ի՞նչ անեմ։ Այլ ևս տանել չեմ կարող, ինձ համար անտանելի է»։

Եօհանը լուռ նստել էր և նրան էր նայում։ Նա ասաց. «Ես ձեզ ոչինչ չեմ կարող պատասխանել»։

«Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, Եօհան։ Ի՞նչ լաւ է, որ ինձ վրայ չես բարկանում», ասաց նա արցունքները սրբելով։ «Սակայն մի կարծիր, ի սէր Աստծու, թէ ես քեզ չեմ սիրում։ Վկայ է Տէր Աստուած, որ ես այսուհետև աւելի յաճախ կը գամ քեզ մօտ, քան առաջ։ Բայց նրան աւելի եմ սիրում։ Այդ ես չէի կամենում, ո՛չ, այդ իմ յանցանքը չէ»։

Եօհանը լուռ կանգնեց, գլխարկը վերցրեց և ասաց. «Գնանք»։

Նրանք իջան սանդուղքով։ Այնտեղ փողոցում Բիչմոնդն էր կանգնած։ Սա մի սև մազե-

րով երիտասարդ էր։ Նրա թուխ աչքերում կեանքն ու երիտասարդութիւնն էին փայլում։ Նրա այտերը ցրտից վարդագոյն էին դարձել։

«Մրսո՞ւմ էք», ասաց Կամիլլան վազելով դէպի նա։

Նրա ձայնը յուզմունքից դողում էր։ Յանկարծ նա շտապով Եօհաննին մօտեցաւ, բռնեց նրա ձեռքն ու ասաց. «Ներիր, որ չը հարցրի, թէ դու էլ չե՞ս մրսում։ Դու վերարկուդ չը հագար։ Ձը գնամ, վերարկուդ բերեմ։ Ո՞չ։ Այդ դէպքում ամուր կոճկիր»։ Նա նրա փիւրտուկը կոճկեց։

Եօհանը ձեռքը Բիչմոնդին տւեց։ Նա իրեն մի տեսակ տարօրինակ դրութեան մէջ էր զգում, կարծես, ամբողջ դէպքն իրեն չէր վերաբերում։ Նա անվճռակամ ժպտում էր ու շշնջում.

«Շատ ուրախ եմ, որ ձեզ տեսայ»։

Բիչմոնդը յանցաւորի, կամ շփոթւածի դէմք չունէր։ Նա ճանաչեց Եօհանին և, ըստ երևոյթին, ուրախացաւ, քաղաքավարի բարևեց նրան։

«Լօնդոնի մի գրախանութում տեսայ ձեր մի գլուածքի թարգմանութիւնը։ Ես այնպէս լաւ ըզգացի ինձ, կարծես հեռաւոր հայրենիքիցս մի ողջոյն լսեցի»։

Կամիլլան գնում էր երկուսի մէջտեղով և հերթով, մէկին կամ միւսին էր նայում։ Վերջապէս նա ասաց. «Այդպէս, Եօհան, հինգշաբթի օրը արի։ Ներիր, որ միշտ իմ գործերի մասին եմ խօսում», աւելացրեց նա ծիծաղելով։ Սակայն խոկոն Բիչմոնդին դարձաւ և նրան խնդրեց, որ գնայ։ Ծա-

նօթներից ոմանք կը հաւաքւեն, ի միջի այլոց, այնտեղ կը լինին և Վիկտորիան ու նրա մայրը։

Յանկարծ Եօհանը կանգ առաւ ու ասաց.

«Ես այժմ կարող եմ տուն դառնալ»։

«Յաւիտենութիւն, մինչև հինգշաբթի», ասաց Կամիլլան։

Բիչմոնդն անկեղծութեամբ սեղմեց նրա ձեռքը։

Եւ նրանք երկուսով շարունակեցին ճանապարհը։ Նրանք երկուսն էլ երիտասարդ էին ու բախտաւոր։

XI

Մի մայր, որ երկնագոյն շորեր էր հագել, սաստիկ յուզւած էր։ Նա ամեն մի րոպէ այգուց աղդանշանի էր սպասում։ Բայց ոչ ոք չէր կարող այգուց անցնել, քանի ամուսինը տանն էր։

Ա՛խ, այդ ամուսինը, քառասնամեայ, ճաղատ այդ ամուսինը...Ի՞նչ մռայլ միտք անցաւ նրա գլխով և ստիպեց նրան այդպէս գունատւել։

Ամուսինը աչքերը լրագրին յառած՝ նստած էր իր աթոռի վրայ անշարժ, անողոք։ Կինը յուզւում էր, արդէն ժամը աւանմէկն էր։ Երեխաները վաղուց էին պարկել քնելու։ Բայց ամուսինը չէր գնում։ Ի՞նչ կը լինի, որ յանկարծ աղդանշանը հնչի, վոքրիկ, թանկագին բանալիով դռները բացւին, և երկու տղամարդիկ իրար հանդիպին, միմեանց աչքերի նային...Նա չը համարձակւեց իր մտքերը վերջացնել։

Նա անցաւ սենեակի մութ անկիւնը, նա յուսահատութիւնից կոտրատում էր իր ձեռքերը։ Վերջապէս չը կարողացաւ համբերել։ «Արդէն ժամը տասնմէկն է։ Եթէ ակումբը պիտի գնաս, գնա, ժամանակն է»։

Ամուսինը յանկարծակի վեր թռաւ, աւելի տաստիկ գունատուեց, սենեակից դուրս եկաւ և տանից դուրս գնաց։ Այգու առաջ նա կանգ առաւ և ականջ դրեց ազդանշանի հազիւ լսելի սուլոցին։ Տուտերի միջից ոռնաձայն լսուեց, այգու դռան կողպէքը չրխկաց ու մի քանի րոպէից յետոյ պատուհանի վարագոյրի վրայ գծագրուեցին երկու սուերներ։ Նա արդէն լաւ էր ճանաչում այդ ազդանշանները, քայլերը, պատուհանի վրայի երկու սուերը—բոլորը նրան ծանօթ էին։ Նա դէպի ակումբի շէնքը գնաց։ Ակումբը բաց էր, պատուհանից լոյս էր երևում։ Բայց նա ներս չը մտաւ։

Կէսժամաչափ նա թափառում էր փողոցներում, իր այգու շուրջը։ Անվերջ կէս ժամ։ «Թող քառորդ ժամ էլ սպասեն», մտածեց նա և նորից սկսեց քայլել, քանի տասնհինգ րոպէն չէր անցել։ Ապա նա անցաւ այգու միջով, սանդուղքով բարձրացաւ և դուռը բախեց։ Աղախինը բացեց, դռլուխը դուրս հանեց և ասաց։

«Տիկինն արդէն վաղուց է»...

«Պարկել քնելու», ընդհատեց նա։ «Բարի եղէք տիկնոջը յայտնել, որ պարոնը վերադարձել է»։

Աղախինը գնաց, բախեց տիկնոջ դուռն ու ասաց։ «Հրամայած է յայտնել, որ պարոնը վերադարձել է»։

Ներսից կանացի ձայնը պատասխանեց.

«Ի՞նչ ես ասում, պարոնը դարձե՞լ է։ Քեզ ո՞վ հրամայեց այդ ասել»։

«Ինքը պարոնը։ Նա դռան յետևը կանգնած է»։

Սենեակում լսուեց տնքոց, ճիչ, շտապ փըսփսոց, մի ինչ որ դուռ բացուեց ու կրկին ծածկուեց։ Ամուսինը ներս մտաւ։ Սարսափից չորացած կինը դուրս եկաւ նրա առաջ։

«Ակումբը փակ էր», ասաց նա կնոջը՝ կարեկցութեան զգացմունքով։ Ես դիտմամբ վերադարձիս մասին զգուշացրի, որ քեզ չը վախեցնեմ»։

Կինը հանգստացած ընկաւ աթոռի վրայ մտածելով, որ ինքը փրկուած է։ Նա իրեն բախտաւոր էր զգում։ Նրա բարի սիրտը խօսեց, նա հարցրեց ամուսնու առողջութեան մասին։

«Գունատ ես, ի՞նչ է պատահել, սիրելիս»։

«Ոչինչ։ Ձեմ մրսում», պատասխանեց նա։

«Հաւանօրէն, քեզ բան է պատահել, դէմքդ այնպէ՞ս տանջուած է ու զարմանալի արտայայտութիւն ունի»։ Ամուսինը պատասխանեց. «Ո՛հ, ես ժպտում եմ, ես մի նոր սովորութիւն եմ արել—ժպտալ։ Այլ ևս այս ծամածռութիւնը դէմքիցս չի անցնի»։

Կինը այս տարօրինակ խօսքերը լսեց, բայց նրանց իմաստը հասկանալ չը կարողացաւ։

Ի՞նչի մասին է խօսում նա։

Բայց յանկարծ ամուսինը բռնեց նրան, փաթաթեց ձեռքերով—իր երկաթէ սարսափելի ուժով ու փսփսաց նրա երեսին. «Ի՞նչ կասես, եթէ մենք խարդաւանենք նրա կնոջը... Նրա, որ հէնց նոր դուրս եկաւ, եթէ մենք նրա կնոջը խարդաւանենք»։

Կինը ճչաց ու աղաչեց։ Ամուսինը հանդարտ ու չոր ծիծաղելով հեռացաւ նրանից։ Միևնոյն ժամանակ նա անբնական եղանակով ծամռւում էր բերանն ու ծնկներին խփում։

Առաւօտեան կնոջ բարի սիրտը նորից մեղմացաւ և նա ասաց ամուսնուն.

«Երէկ երեկոյեան զարմանալի ուշաթափութիւն ունեցար։ Այժմ անեցել է, բայց դու այսօր գունատ ես»։

«Այո, պատասխանեց նա։ Իմ հասակում յափշտակելը վտանգաւոր է»։

Վենդեր կլօնաւորը, սիրոյ զանազան տեսակները ներկայացնելով, նկարագրում է նաև մի բացառիկ սէր, որ մարդու ամբողջապէս կլանում է։

Երիտասարդ ամուսինները հէնց նոր էին վերադարձել հարսնական երկար ճանապարհորդութիւնից և դնացել էին հանգստանալու։ Ներանց կարի վրայով մի ասուպ ցոլաց։ Ամառը նորապսակները երկուսով միասին էին զբօսնում և իրարից չէին բաժանւում։ Նրանք դեղին, կարմիր,

երկնագոյն ծաղիկներ էին հաւաքում ու տալիս էին միմեանց։ Նրանք ուտում էին, ինչպէս է քամին խոտերը շարժում, լսում էին, ինչպէս էին անտառում երգում թռչունները։ Նրանց արտասանած իւրաքանչիւր բառը նրանց սէրն էր արտայայտում։

Ամեն նրանք զբօսնում էին սահնակներով։ Ձիերը զնդզնգացնում էին իրենց փոքրիկ զանգակները։ Նրանց վերևը ձգւած էր կապոյտ երկինքը, որի յաւերժական հարթութիւններում աստղերն էին շողշողում։

Այսպէս անցան շատ-շատ տարիներ։ Նրանք արդէն երեք երեխայ ունէին։ Նրանք դարձեալ միմիանց սիրում էին այնպէս, ինչպէս առաջին օրը, առաջին համբոյրի ժամին։ Բայց հիւանդութիւնը տապալեց հպարտ մարդուն և մահիճը ձգեց։ Նրա կնոջ համբերութիւնը խիստ փորձի պիտի ենթարկւէր։ Երբ նա առողջացաւ, անկողնից վեր կացաւ, ինքն իրեն չէր ճանաչում։ Հիւանդութիւնը նրա դէմքն այլակերպել էր, և նրա մազերը բոլորովին թափւել էին։ Նա տանջւում էր ու մտածում։ Վերջապէս առաւօտեան ասաց. «Այժմ, իհարկէ, դու ինձ չես սիրում»։

Բայց կինը նրա վզովը փաթաթւեց, բորբոքած համբուրեց նրան նախկին երիտասարդական խանդաղատանքով։ Նա ասաց. «Ես սիրում եմ, սիրում եմ, քեզ։ Ես երբէք չեմ մոռանայ որ, դու ինձ ընտրեցիր և ոչ մի ուրիշին և ինձ այսպիսի բախտաւորութիւն տւիր»։

Նա անցաւ իր սենեակը, կարդաց իր ոսկեայ մազերը, որպէսզի Նրան նմանուի, ուժ սիրում էր։

Յարձակում շատ-շատ տարիներ անցան։ Ընդունք արդէն ծերացել էին, նրանց երեխաները մեծացել էին։ Նրանք առաջուայ պէս երջանիկ էին։ Ամառն զբօսնում էին դաշտերում, նայում էին, ինչպէս էր քամին խոտերը շարժում։ Ձմեռը մուշտակի մէջ փաթաթուած սահում էին սահնակով։ Իսկ նրանց գլխի վրայ փուած էր աստեղազարդ երկինքը։ Նրանց սիրտը տաք ու ուրախ էր բաբախում, Նրանք, կարծես, դիւթուած էին կախարդական խմիչքով։

Կինը զրկուեց ոտքից։ Նրան անխնայ բազմոցով էին մարդ ածում։ Ամուսինն ինքն էր մարդ ածում։ Սակայն կինը, ըստ երևոյթին, իր դժբախտութեան պատճառով շատ էր տանջուում։ Նրա դէմքի վրայ տանջանքի խոր կնճիռներ երեւեցան։

Վերջապէս մի անգամ նա ասաց.

«Ես այժմ կը կամենայի մեռնել. ոտքից զրկուեցի և այլանդակուեցի, իսկ քո դէմքը այդպէս գեղեցիկ է։ Դու չես ցանկանայ այլևս ինձ համբուրել և չես կարող ինձ առաջուայ պէս սիրել»։

Բայց ամուսինը յուզմունքից կարմրած դէմքով նրան և ասաց. «Սիրելիս, ես քեզ կեանքիցս աւելի եմ սիրում։ Քեզ սիրում եմ, ինչպէս սիրում էի առաջին օրը, առաջին ժամին, երբ դու ինձ վարդ տուիր։ Ծիշտ ես։ Դու վարդն ինձ տուիր և նայեցիր քո գեղեցիկ աչքերով։ Վարդը

քեզ նման էր բուրում, դու վարդի պէս կարմրած էիր, իսկ ես երջանկութիւնից հարբած էի։ Բայց այժմ ես քեզ աւելի եմ սիրում, դու աւելի գեղեցիկ ես, քան երիտասարդ ժամանակդ էիր։ Ես քեզնից չնորհակալ եմ ինձ հետ անցրած իւրաքանչիւր օրւայ համար»։

Ամուսինը իր սենեակը գնաց և իր երեսը թթու ջուր քսեց, որ տգեղանայ։ Կնոջ մօտ դառնալով՝ ասաց. «Ես դէմքս յանկարծակի թթու ջրով թրջեցի։ Նայիր, երեսս ամբողջապէս խանձուել է։ Այժմ, իհարկէ, դու ինձ չես սիրի»։

«Ո՜հ, դու իմ ամուսինը, սիրելիս», շշնջաց կինը և համբուրեց նրա ձեռքը։ «Դու աշխարհում ամենագեղեցիկ մարդն ես, քո իւրաքանչիւր մազի համար սիրտս դողդողում է։ Ես քեզ սիրում եմ և մինչև մահս կը սիրեմ»։

XII

Եօհանը փողոցում պատահեց Կամիլլային, որն իր հօրն ու մօր և երիտասարդ Ռիչմոնդի հետ գնում էր։ Նրանք կառքը կանգնեցրին և բարեկամաբար խօսեցին նրա հետ։ Կամիլլան նրա ձեռքը բռնեց ու ասաց. «Մեզ մօտ չ'եկար, շատ հիւրեր կային։ Մինչև վերջին րոպէն քեզ սպասում էինք, բայց դարձեալ չ'եկար»։

«Ինձ խանգարեցին», պատասխանեց Եօհանը։

«Ներիր, որ վերջին օրերս քեզ մօտ չեմ եկել», շարունակեց Կամիլլան։ «Հաւանական է, որ

շուտով գամ, հէնց որ Րիչմոնդը գնայ։ Ա՛խ, մեզ մօտ որքան ուրախ անցաւ։ Իսկ Վիկտորիան հիւանդացաւ, նրան տարան տուն։ Լսի՛լ եա՛։ Շուտով այցելելու եմ նրան։ Նա, իհարկէ, այժմ աւելի լաւ կը լինի, գուցէ բոլորովին առողջացել է»։

«Ես Րիչմոնդին մի մեդալիոն եմ նուիրել, ճիշտ քեզ նուիրածիս նման։ Լսիր, Եօհան, դու պիտի ինձ խոստանաս, որ վառարանդ վառելու մասին կը հոգաս։ Երբ գրում ես, աշխարհում ամեն բան մոռանում ես, և սենեակդ սարսափելի ցուրտ է լինում։ Ի սէր Աստծու, աղախնին կանչիր և պատուիրի վառել»։

«Այո՛, աղախնին կը կանչեմ», ասաց նա։

Տիկին Զեյերն էլ խօսեց նրա հետ։ Նա հարցրեց նրա վերջին գրուածքի՝ «Սեռի հզօրութեան» մասին։ Արդեօք գործը առաջ է գնում։ Նա անհամբերութեամբ էր նրա լոյս տեսնելուն սպասում։

Եօհանը պատասխանեց, ինչ որ պէտք էր, խոր գլուխ տւեց և նայում էր հեռացող կառքի յետևից։ Այդ բոլորը որքան հեռու երևացին նրան —այդ կառքը, այդ մարդիկ, նրանց խօսակցութիւնը։ Երբ տուն էր վերադառնում, նա իր հոգում մի սառը դատարկութիւն էր զգում։ Տան առաջ նկատեց մի մարդ, որը յետ ու առաջ էր քայլում։ Եօհանը նրան ճանաչեց, հին ծանօթ էր, ամրոցի նախկին ուսուցիչը։ Եօհանը բարևեց նրան։ Նա երկար, տաք, հոգատար ձեռքով մաքրած մի վերարկու էր հագել, նրա դէմքը համարձակ վճռականութիւն էր արտայայտում։

«Դուք ձեր առաջ ձեր կօլլեգային ու բարեկամին էք տեսնում», ասաց նա։ «Տէ՛ք ձեր ձեռքը, երիտասարդ։ Վերջին ժամանակներս Աստած հրաշալի փոփոխութիւններ մտցրեց իմ կեանքի մէջ։ Ես ամուսնացել եմ, ունիմ իմ ընտանեկան օջախը, կին ունեմ, մի փոքրիկ այգի։ Կեանքում ուղղակի հրաշքներ են պատահում։ Դուք ի՞նչ էք կարծում այս մասին»։

Եօհանը զարմացած նայեց նրան։

«Այսպէս, լսէ՛ք։ Տեսնում էք։ Ես գաս էի տալիս նրա որդուն։ Նա իր առաջին ամուսնութիւնից մի որդի ունէր։ Հասկանալի է, նա ամուսնացած է եղել և այրիացել է։ Այսպէս, ես այրու հետ ամուսնացայ։ Մանուկն առաջին ամուսնուց էր։ Ես անդադար այնտեղ էի գնում, տեսնում էի այգին, այրուն, և սկսեցի այդ մասին մտածել... Յանկարծ մի միտք մտաւ գլուխս, և ես ինքս ինձ ասացի. «Ենթադրենք, որ նրան բախտն է քեզ համար նախընտրել և այլն, բայց ես դարձեալ կ՚անեմ այդ, որովհետև այդ աստղերից է նախագուշակած։ Տեսնում էք. ահա ինչպէս կատարուեց այդ բոլորը։

«Շնորհակալ եմ», ասաց Եօհանը։

«Լա՛ւ... Այլևս ոչ մի բառ։ Գիտեմ, ինչ էք ուզում ասել. իսկ ի՞նչ եղաւ նա, առաջինը։ Դուք ձեր երիտասարդական յաւերժական սէրը մոռացել էք։ Ահա հէնց այս էք ուզում ասել։ Յարգելի պարոն, կարող եմ արդեօք հարցնել ձեզ, թէ ինչ եղաւ իմ առաջին, միակ և հաւատարիմ սէրը։ Մի՞թէ

նա թնդանօթաձիգ գնտապետին չ'առաւ։

«Բացի այդ, ուզում եմ մի փոքրիկ հարց ևս առաջարկել ձեզ. տեսե՞լ էք երբևիցէ, որ տղամարդը իր ուզածին առնէ։ Մի մարդու մասի մի աւանդութիւն են պատմում։ Ասում են, որ Աստուած նրա աղերսանքները լսել է և նրան է տուել նրա առաջին և միակ սիրածին։ Դուք կարծում էք, որ նա բախտաւոր է եղել։ Ուզում էք հարցնել, թէ ինչո՞ւ բախտաւոր չ'եղաւ, կը պատասխանեմ. այն հասարակ պատճառով, որ նրա սիրածը իսկոյն մեռել է, լսո՞ւմ էք, իսկոյն։ Այդպէս է լինում միշտ։ Իհարկէ, մենք նրան չենք առնում, ում մասին երազում էինք։ Եթէ պատահում է մէկը, որ իրրև բացառութիւն այդպէս է անում, իր ուզածին է առնում, այն ժամանակ անիծած արդարութիւնը նրան այնպիսի հանգամանքների մէջ է դնում, որ նա մեռնում է։ Աշխարհում կատարեալ երջանկութիւն չը կայ։ Մարդուն ուրիշ ոչինչ չի մնում, քան մի ուրիշին սիրել, և ճիշտն ասած, դրա համար հարկաւոր չէ մեռնել։ Հաւատացնում եմ, որ մարդ բնութիւնից դրա համար յարմարեցուած է և հիանալի կերպով է տանում այդ։ Հէնց միայն ինձ ի նկատի ունեցէք»։

Եօհանն ասաց. «Այո՛, ձեր տեսքը լաւ է»։

«Հիանալի է։ Այդպէս, լուէք, զգացէք ու ու նայէք։ Ես այժմ ոչ մի հոգս չունեմ։ Ես ըզգեստներ ունեմ, ոտնամանի, տուն ընտանեկան օջախ, կին, երեխայ։ Ասացք այն մանկան մասին

է։ Ինչ վերաբերում է բանաստեղծական գրուածքներիս, կ'սեմ ձեզ։ Ո՛վ իմ երիտասարդ կօլլեգա, ես ձեզնից մեծ եմ, գուցէ, բնութիւնից մի քիչ աւելի պարգևատրուած։ Գրուածքներս ընկած են փակուած արկղում և կը տալեն մահիցս յետոյ։ Այդ դէպքում նրանք ձեզ ոչ մի բաւականութիւն չեն տայ, կը նկատէք դուք, բայց դարձեալ սըխալւում էք։ Երեկոները, երբ լամպը վառում ենք, ես արկղիցս հանում եմ և բարձր կարդում կնոջս ու մանկանս համար։ Կինս քառասուն տարեկան է, իսկ տղաս տասներկու։ Նրանք երկուսն էլ հաւասարապէս հիանում են։ Եթէ մի երկոյ դուք մեզ մօտ գաք, ձեզ կը հիւրասիրենք ընթրիքով ու փունջով։ Դուք հրաւիրուած էք։ Թող Աստուած ձեզ պահէ»։

Նա ձեռքը Եօհանին տուեց։ Յանկարծ նա հարցրեց.

«Իսկ Վիկտորիայի մասին ոչինչ չէ՞ք լսել»։

«Վիկտորիայի մասին. ոչինչ։ Սակայն հէնց նոր իմացայ»...

«Դուք չէ՞ք նկատում, թէ նա ինչպէս էր թուլանում։ Նրա աչքերի տակի կապոյտներն աւելի ու աւելի սևանում էին»։

«Գարնանից, այն ժամանակից, որ քաղաքից տուն եկաւ, ես նրան չեմ տեսել։ Մի՞թէ նա դեռ հիւանդ է»։

Հին ուսուցիչը ոտը գետնին խփեց և սուր ու ծաղրական եղանակով ասաց.

«Այո՛»։

«Այս է, որ լսում եմ։ Ո՛չ, ես նրան հիւանդ չեմ տեսել, ես նրան չեմ պատահել։ Միթէ նա հիւանդ է»։

«Շատ։ Հաւանօրէն նա մեռել է։ Հասկանում եք»։

Եօհանը սարսափահար կամ նրան էր նայում, կամ տան դռանը։ Նիրս մտնել, թէ կանգնել։ Դարձեալ հին ուսուցչին նայեց, նրա երկար վերարկուին, գլխարկին։ Նա ժպտաց մի տանջող, վրդոված ու խղճալի ժպիտով։

Ծերունի ուսուցիչը շարունակում էր սպառնական եղանակով։

«Ահա ձեզ մի օրինակ էլ։ Նա էլ իր ուզածին չառաւ։ Զառաւ նրան, ով դեռ մանուկ հասակից նրա ամուսինն էր համարւում։ Երիտասարդ, յաջողակ լեյտենանտին։ Մի անգամ, երեկոյեան, նա որսի գնաց, լիցքը նրա ճակատին կպաւ, նրա գլուխը երկու մասի ճեղքեց։ Այսպիսով նա Աստծուց թոյլատրւած կոյր պատահարին զոհ դարձաւ։ Նրա հարսնացուն, Վիկտորիան, սկսեց հալ ու մաշ լինել։ Կարօտի օձը ծծում էր նրա արիւնը, և մենք՝ նրա ընկերները, տեսնում էինք այդ։ Ինչպէս է պատահում, նա մի քանի օր առաջ Ջեյերների մօտ երեկոյթի է գնում։ Նա ինձ ասաց, որ դուք ևս պիտի այնտեղ լինէիք, բայց չեկաք։ Նա շատ էր յուզւում, որովհետև այն շրջանը, ուր նա էր գտնւում, զանազան դէպքեր էր յիշեցնում նրան իր սիրոյ մասին։ Նա այնտեղ շատ աշխուժ է լինում և մի տեսակ

խենթութեամբ ամբողջ երեկոն անդադար պարում է ու պարում։ Սակայն յանկարծ յատակի վրայ է ընկնում և յատակն արիւնով ներկում։ Նրան բարձրացնում, տուն են տանում։ Նա այլևս երկար չէր ապրելու»։

Հին ուսուցիչը բոլորովին մօտեցաւ Եօհաննին ու խիստ եղանակով ասաց.

«Վիկտորիան մեռաւ»։

Եօհանը, կուրացածի պէս, ձեռքերը դէպի առաջ մեկնեց.

«Մեռաւ, Ք՛րը մեռաւ։ Վիկտորիան մեռաւ»։

«Նա մեռաւ», պատասխանեց ուսուցիչը։ «Նա ճաշից առաջ մեռաւ»։ Նա ձեռքը տարաւ գրպանը և այնտեղից մի հատ նամակ հանեց։

«Նա յանձնարարեց, որ այս նամակը ձեզ տամ։ Ահա այս։ Մահից յետոյ, ասաց նա։ Նա մեռաւ։ Այս նամակը տուի ձեզ։ Իմ միսիան վերջացած է»։

Այլևս առանց մի խօսք ասելու, նոյնիսկ առանց բարևելու հին ուսուցիչը յետ դարձաւ, դանդաղ գնաց փողոցով ու անհետացաւ։ Եօհանը տեղումը կանգնած մնաց, նամակը ձեռքին։ Վիկտորիան մեռել է։ Նա իր անզգայ, փայտեայ ձայնով մի քանի անպատմ անընդհատ կրկնեց նրա անունը։ Նա նամակին նայեց և նրա ձեռքը ճանաչեց։ Մեծ ու փոքր տառեր, ուղիղ տողեր... Իսկ նա, ով այդ գրել է, մեռել է։ Նա ներս մտաւ, սանդուղքով վերև բարձրացաւ, բանալին դուռ, կողպէքի մէջ մտցրեց ու դուռը բացեց։ Սենեակը մութն էր ու

ցուրտ։ Նա պատուհանի առաջ նստեց ու սկսեց ցերեկվայ մարտող լուսով կարդալ Վիկտորիայի նամակը։

«Սիրելի Եօհան,—գրում էր նա,—դուք այս նամակը այն ժամանակ կը կարդաք, երբ ես այլևս կենդանի չեմ լինի։ Իսկ այժմ ամեն ինչ ինձ որքան տարօրինակ է թւում։ Ես ձեզնից այլևս չեմ ամաչում և գրում եմ անկեղծ սրտով։ Կարծես, մեր մէջ ոչինչ չի պատահել, ինձ այլևս ոչինչ չի արգելում։ Առաջ, երբ ես կեանքին է պատկանում, հաւանօրէն կը գերադասէի օր ու գիշեր տանջւել, քան թէ այդ մասին ձեզ մի խօսք ասել։ Բայց այժմ կեանքից գնում եմ և ուրիշ կերպ եմ մտածում։ Մարդիկ տեսնում էին, թէ ես ինչպէս էի արնաքամ լինում։ Բժիշկը քննեց ու գտաւ, որ մի թոքիս մի մասն է մնում միայն։ Էլ ինչո՞ւ ամաչեմ ես այժմ։

«Պարկած անկողնում, յիշում էի իմ վերջին խօսքերը, որ ասացի ձեզ։ Այդ մի երեկոյ էր, անտառում։ Այն ժամանակ չէի կարծում, որ այդ իմ վերջին խօսքն է լինելու։ Եթէ իմանայի, ես վերջին բարևս կը ուղարկէի և շնորհակալութիւն կը յայտնէի ձեզ։ Այլևս ձեզ չեմ տեսնելու։ Որքան դառն է ինձ համար, որ ձեր ոտնաթաթը չընկայ, ձեր ձեռքը չը համբուրեցի, չը համբուրեցի այն հողը, որի վրայ դուք կանգնած էիք, որ ես դէպի ձեզ ունեցած սիրոյս ամբողջ խորքից չը խօսեցի։

«Ես այստեղ պարկել էի ու մտածում էի, երազում էի, երեկ, այսօր։ Երազում էի այն մասին, որ առողջանում, որ կարողանամ տուն գնալ, դարձեալ գնալ այն անտառը, այն տեղը, ուր միասին նստում էինք և դուք բռնել էիք իմ ձեռքը։ Ես դէպի գետին կը խոնարհէի, կը նայէի, թէ արդեօք ձեր ոտքերի հետքերը չէն մնացել. կսկսէի համբուրել այնտեղ աճած խոտաքանչիւր խոտը։ Եթէ մի քիչ չը լաւանամ, չեմ կարող տուն գնալ։ Մայրիկս դեռ քիչ յոյս ունի։

«Սիրելի Եօհան, որքան զարմանալի է՝ մտածել, որ ինձ վիճակւած է ամբողջ կեանքումս երկրի երեսին ձեզ սիրելուց բացի ոչինչ չանել և այժմ յաւիտենական մնաս բարև ասել կեանքին...

«Եթէ իմանայիք, որքան զարհուրելի է, այստեղ պարկել ու սպասել մահուան օրին ու ժամին։ Բայց առ քայլ ես կեանքից հեռանում եմ, հեռանում եմ մարդկանցից, որոնք նստած կառքերում անցնում են փողոցով։ Ես այլևս երբէք գարուն չեմ տեսնելու։ Բոլոր տները, փողոցները և քաղաքային այգու ծառերը ինձնից յետոյ դեռ շատ կապրեն։ Այսօր ինձ թոյլ տուին մի քիչ նստել անկողինս, վրայ։ Ես նայում էի պատուհանից և տեսայ, թէ ինչպէս փողոցում երկու հոգի հանդիպեցին, միմիանց ձեռք տուին ու իրենց ասածի վրայ ծիծաղեցին։ Եւ ինձ շատ զարմանալի թւաց, որ ես, որ նրանց էի նայում, պիտի մեռնեմ։ Ես մտածեցի. նրանք չը գիտեն, որ ես պարկած եմ այստեղ և սպասում եմ մահուան։ Սակայն եթէ նրանք իմանային էլ, միևնոյն է,

դարձեալ նոյն ձևով իրար կը բարևէին և կսկսէին խօսել, ինչպէս այժմ արեցին։ Անցեալ գիշեր, երբ արդէն բոլորովին մութն էր, կարծում էի, որ վերջս եկել է։ Սիրտս բաբախելուց դադարից։ Ես լսում էի, ինչպէս էր աղմկում Յաւիտենական. նութիւնը և ինձ մօտ սլանում։ Սակայն մի վայրկեանից յետոյ ես սկսեցի շնչել։ Ես բոլորովին չեմ կարողանում այդ զգացմունքը նկարագրել։ Մայրս ասում է, որ ես սրընթաց վտակների ու առուակների խշշոցների մասին եմ դառնցում, և իմ բոլոր զառանցանքները այնտեղի, տան յիշողութիւնների շուրջն են պտտւում։

«Մեծազօր Աստուած։ Եօհան, պիտի իմանաք, որ ձեզ մինչև որ աստիճանի սաստկութեամբ եմ սիրում։ Սակայն ես այդ սէրը չէի ցոյց տալիս, պատճառները շատ են։ Ամենամեծ յանցաւորը սեպհական բնաւորութիւնս է։ Հայրիկս էլ էր յաճախ ինքն իրան չարիք անում և բարկանում իր վրայ։ Ես չէ՞ որ նրա դուստրն եմ։ Սակայն այժմ ես այդ ձեզ կ'ասեմ, որովհետև մեռնում եմ, որովհետև, միևնոյն է, ուշ է, ուշ... Թէ ինչու եմ ես այսպէս անում, ինքս էլ չը գիտեմ։ Ձեզ համար այդ չէ՞ որ միևնոյն է, առաւել ևս այժմ, երբ ես պիտի մեռնեմ։ Ես ուզում եմ մինչև մահս ձեզ մօտ լինել, այն, ժամակ ես ինձ այնպէս անօգնական ձգած չեմ զգալ, ինչպէս առաջ էին։ Այժմ, կարծես, տեսնում եմ ձեր ուսերը, ձեր ձեռքերը, տեսնում եմ ձեր բոլոր շարժուձևերը։ Ես երևակայում եմ, թէ ինչպէս էք նամակս բռնել ու կար-

դում։ Եւ ես մտածում եմ. բայց և այնպէս դուք այժմ այնքան էլ հեռու չէք ինձնից։

«Ձեմ կարող ձեր յետևից մարդ ուղարկել։ Այդ անելու իրաւունք չ'ունեմ։ Մայրիկս երկու օր առաջ ուզում էր ձեզ կանչել, բայց ես դերադասեցի գրել։ Ես կամեցայ, որ դուք ինձ յիշէք այնպէս ինչպէս հիւանդութիւնից առաջ էի։ Ես յիշում եմ, որ դուք... (այստեղ մի քանի բառ ջնջուած է)... աչքերս, յօնքերս, սակայն նոյնիսկ դէմքդ առաջւայ նման չեն։ Ձեմ ուզում, որ դուք մտածէք էլ դրա համար գայիք։ Ի սէր Աստծու, չը նայէք, թէ ես դագաղում ինչպէս եմ պարկած ես կը լինեմ, համարեա, այնպէս, ինչպէս կենդանի ժամանակ էի։ Ես դէղնաւուն շորերս հագած կը լինեմ... Բայց և այնպէս դուք, եթէ նայէք, կը խղճաք։

«Այսօր մի քանի անգամ եմ այս նամակը ձեռքս առել և դրել, բայց և այնպէս ցանկացածիս հարիւրերորդ մասն էլ չեմ պատմել։

«Զարհուրանք ցանկանում եմ, որ չը մեռնեմ։ Դեռ յոյս ունեմ։ Յոյսս ամբողջ հոգով Աստծու վրայ եմ դրել։ Դուցէ լաւանամ, գոնէ մինչև գարուն, երբ պայծառ օրերը կ'սկսւեն, և ծառերը կանաչ զգեստներ կը հագնեն։ Եօհան, եթէ լաւանամ, այլ ևս ձեզ ոչ մի չարիք չեմ պատճառի։ Ա՛խ, ես ցած կ'իջնէի, մայթի քարերի իւրաքանչիւր կտորը կը լիզէի, շնորհակալութիւն կանչէի ամենդուղքի իւրաքանչիւր աստիճանին, որի վրայով ես գնացել եմ։ Ես դէպի ամենքը բարի կը դառ-

նայի, դէպի ամենքը... եթէ նոյնիսկ ես շատ վատ կեանքով ապրելու լինէի, դարձեալ համաձայն եմ, միայն թէ ապրէի։ Աշխարհում ոչնչից չեմ դադարի, այլ կը ժպտայի նոյնիսկ նրան, ով ինձ վիրաւորէր ու ծեծէր։ Աստծուն կը փառաբանէի, Նրանից կը գոհանայի, միայն թէ Նա ինձ թոյլ տար ապրել։ Ջէ որ ես դեռ ամենևին չեմ ապրել և ուրիշների համար ոչինչ չեմ արել։ Եւ այդ դեռ չսկսած կեանքը պիտի վերջանայ...

«Եթէ իմանայիր, թէ որքան եմ ցանկանում ապրել, գուցէ մի քան կանէիր, կանէիր ամենը, ինչ որ կարող էիր։ Սակայն ինձ թւում է, որ եթէ դուք և ամբողջ աշխարհը սկսէիք աղաչել Աստծուն, որ Նա ինձ աշխարհի վրայ թողնէր, Նա կեանքս ինձ կը շնորհէր։ Ա՜խ, որքան շնորհակալ կը լինէի։ Ոչոքի չարիք չէի անի, Աստծուց ինձ ուղարկուած բոլոր բաների համար կը ժպտայի, միայն թէ Նա թոյլ տար, որ ես ապրէի։ Մայրիկս ինձ մօտ նստած արտասուում է։ Նա ամբողջ գիշերը իմ վրայ լաց է եղել։ Դրանից մարդու սիրտ քիչ թեթևանում է, բաժանուելու դառնութիւնը՝ մեղմանում։

«Ես այսօր մտածում էի, թէ արդեօք դուք ինչ կասէիք, եթէ երբևէ հանդիպէիք ինձ փողոցում, ոճնական զգեստներ հագած, եթէ ես ոչ մի վիրաւորական խօսք չասէի և ձեզ վարդ տայի... Բայց իսկոյն յիշեցի, որ ես երբէք այդ անելու հնարաւորութիւն չեմ ունենայ, երբէք չեմ առողջանայ, որ ես կը մեռնեմ։

«Յաճախ ես արտասուում եմ, հանդիստ պարկում եմ և դառն ու անմխիթար արտասուում։ Երբ այդպէս հանդիստ լալիս եմ, կրծքումս այլևս ցաւ չի լինում։ Եօհան, իմ սիրելի, իմ թանկագին ընկերը, իմ միակ սէրը ամբողջ աշխարհում, երբ մթնի, ինձ մօտ եկ, մի քիչ ժամանակ անցրու ինձ հետ։ Այն ժամանակ ես չեմ արտասուի։

«Ես կ՚սկսեմ երջանկութիւնից ժպտալ, որ դու ինձ մօտ եկար։

«Աստուած իմ, ո՛ւր է իմ հպարտութիւնը, իմ արիութիւնը։ Այժմ ես հօրս աղջիկը չեմ։ Այդ նրանից է, որ այժերս թողնում են ինձ։

«Եօհան, ես վաղուց էի տանջւում։ Տանջանքները վերջին օրերից շատ առաջ են սկսւել։ Տանջւում էի, երբ դու արտասահմանում էիր։ Ապա այնուհետև, երբ ես գարնանը քաղաք եկայ, օրէցօր մաշւում էի։ Առաջ չէի իմանում, թէ այս գիշերները որքան անվերջ երկար են լինում։ Ես ձեզ փողոցում երկու անգամ տեսայ։ Մի անգամ մի բան երգելով, առանց ինձ նկատելու, անցաք մօտովս։ Ցոյս ունէի ձեզ Զեյերների մօտ տեսնել։ Ես ձեզ չէի մօտենայ, ձեզ հետ չէի խօսայ, միայն հեռուից կը նայէի ձեզ, և այդ բոլորի փոխարէն որքան շնորհակալ կը լինէի, բայց դուք չեկաք։ Եւ ես մտածում էի, որ, գուցէ իմ պատճառով այդպէս արիք։ Ժամը տասնմէկին ես սկսեցի պարել։ Այլ ևս պատեհելու այժ չունէի։

«Այո՛, Եօհան, ես ձեզ եմ սիրում, մի միայն ձեզ իմ ամբողջ կեանքում։ Վիկտորիան այս

տողերը գրում է, իսկ Աստուած նրա յետևից կարդում է։ Այժմ ես պիտի ձեզ միաք բան ասեմ։ Համարեա մոլին է, և ես ոչինչ չեմ տեսնում։

«Մնաք բարև, Եօհան։ Շնորհակալ եմ ձեզնից իւրաքանչիւր օրւայ, իւրաքանչիւր ժամի համար։ Երկինք բարձրանալիս՝ ես իւրաքանչիւր րոպէ կը գոհանամ ձեզնից, անպատճառ ձեր անունը կը կրկնեմ։

«Ձեր ամբողջ կեանքում բախտաւոր եղէք։ Ներէք ինձ, որ այդքան տանջանքներ պատճառեցի ձեզ, ներէք, որ ներում աղերսելու համար չը չոգեցի ձեր առաջ։ Ես այժմ իմ սրտումն եմ աղերսում ձեզ։ Եօհան, բախտաւոր լինէք, միաք բարև ընդ միշտ։ Մի անգամ ես շնորհակալ եմ իւրաքանչիւր օրւայ, իւրաքանչիւր ժամի համար։ Այլևս չեմ կարող...

Ձեր Վիկտորիա»։

Լամպը վառեցին, աւելի լոյս եղաւ։ Ես դարձեալ անգիտակից դրութեան մէջ էի և թուում էր, որ ես երկրից հեռու մի տեղում էի գտնուում Մակայն, վարք Աստծու, այս անգամ այնքան էլ անհեթի չէր։ Ես մի հանգիստ երաժշտութիւն էի լսում, իսկ որ ամենագլխաւորն է, լոյս էր։ Ես այնքան շնորհակալ եմ... Այլևս գրելու ոյժ չունեմ, Մաշա բարև, ջերմ սիրեցեալս»...



ՄՄ Հայագիտական գրադարան
MAL022753

1086